

10

ՀՈՒՆԻՍԻ  
2023

Luys Lnyju®



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՏՈԴՈՐՈՎԸ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ  
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ (ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 50705/11 ԵՎ  
ՄՅՈՒՍ 6 ԳԱՆԳԱՏՆԵՐԸ)

ՄԻԵԴ 13.07.2021Թ. ՎՃՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՏՈԴՈՐՈՎԸ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ (ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 50705/11 ԵՎ ՄՅՈՒՍ 6 ԳԱՆԳԱՏՆԵՐԸ) ՄԻԵԴ 13.07.2021Թ. ՎՃՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարդան Պողոսյան  
միջազգայնագետ, քաղաքագետ (M.A., Bonn)



## ***1. ՄԻԵԴ ներկայացված դիմումների փաստական հանգամանքները***

Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով<sup>1</sup> դիմումատուների դեպքում խոսքը վերաբերում է տարբեր հանցագործությունների համար դատապարտված անձանց և նրանց հարազատների մասին (ապօրինի անտառահատումներ, ազատությունից զրկում, շորթման փորձ, խոշոր չափերով յուրացում, հրազեն պահելը, կողոպուտ, փաստաթղթերի լուրջ կեղծում, թմրամիջոցների ապօրինի պահում, հարկերից խուսափում): Հաշվի առնելով գանգատների համանման առարկան՝ Դատարանը նպատակահարմար է համարել դրանք միացնել (վճռի կետ 124):

ՄԻԵԴ քննարկման առարկա գործերում Բուլղարիայի 2005թ. օրենքով սահմանված հանցավոր ծագում ունեցող բռնագանձման վարույթի շրջանակներում դիմումատուների զգալի ակտիվներ (անշարժ գույք, ընկերություններ, տրանսպորտային միջոցներ, կանխիկ դրամ և այլն) ենթարկվել են բռնագանձման: Բուլղարական իրավասու դատարաններն իրենց որոշումները հիմնավորել են հիմնականում այն փաստով, որ դիմումատուների ծախսերը համապատասխան ժամանակաշրջաններում զգալիորեն գերազանցել են նրանց օրինական եկամուտը, և, հետևաբար, կարելի էր ողջամտորեն ենթադրել, որ նրանց ակտիվների մի մասը ֆինանսավորվել է հանցագործությունից: Դիմումատուների այն փաստարկները, որ այդ գույքի և հանցավոր գործունեության միջև բավարար կապ չկա, բուլղարական

<sup>1</sup> <https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22tabview%22:%7B%22document%22%7D%7B%22itemid%22:%7B%22001-211018%22%7D%7D>

դատարանները հիմնականում մերժել են, և այդ որոշումները հետագայում հաստատվել են վերադաս դատարանների կողմից:

ՄԻԵԴ ներկայացված իրենց դիմումներում դիմումատուները պնդում են, որ խախտվել է ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետը (սեփականության պաշտպանություն)՝ իրենց ունեցվածքի բռնագանձման կարգադրության պատճառով: Բացի այդ, նրանցից ոմանք բողոքել են ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ կետի (անմեղության կանխավարկած), 7-րդ հոդվածի (պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա) և ՄԻԵԿ 7-րդ Արձանագրության 4-րդ հոդվածի (կրկին անգամ չդատվելու և չպատժվելու իրավունք) խախտման վերաբերյալ: Սույն ակնարկում համառոտ անդրադարձ է կատարվում այն եզրահանգումներին, որոնք Եվրոպական դատարանը կատարել է ՄԻԵԿ 1952 թ. մարտի 20-ի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ:

## **2. 2005թ. օրենքի և բուլղարական դատական պրակտիկայի ընդհանուր բնութագիրը ըստ ՄԻԵԴ-ի**

### **ա) 2005թ. «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ հօգույթ պեղության բռնագանձման մասին» օրենքը**

2005թ. օրենքի շրջանակներում բռնագանձման վարույթ կարող է հարուցվել այն դեպքում, երբ պարզվում է, որ այդ օրենքով նախատեսված համապատասխան հանցագործության մեջ մեղադրվող անձը ձեռք է բերել զգալի արժեք ունեցող ակտիվներ (մոտ. 30 377 եվրո), որոնք ողջամտորեն կարող են համարվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ (օրենքի հոդված 3(1), վճռի կետ 96): Օրենքը նախատեսում է այն ակտիվների բռնագանձումը, որոնք ողջամտորեն կարող են համարվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, քանի որ որևէ օրինական աղբյուր չի հաստատվել (հոդված 4(1), վճռի կետ 96): Բռնագանձման վարույթ հարուցելու համար իրավասու մարմինը Կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնագանձման հարցերով հանձնաժողովն է (վճռի կետ 92), որը գործում է իր շրջանային գրասենյակների միջոցով: Այդ գրասենյակները օրենքով նախատեսված հանցագործություններից որևէ մեկի կատարման մեջ մեղադրվելու կամ դատապարտման պարագայում ծանուցվում

են քրեական հետապնդման մարմինների և դատարանների կողմից (վճռի կետ 99), որից հետո հանձնաժողովը իրականացնում է քննություն՝ նպատակ ունենալով ճշտել այն ակտիվների ծագումը և գտնվելու վայրը, որոնց առնչությամբ ողջամիտ կասկած կա այն մասին, որ դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանդիսանում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Այդ նպատակով հանձնաժողովն ունի բավական լայն լիազորություններ. մասնավորապես, հանձնաժողովը ստուգում էր պաշտպանյալի ակտիվները, դրանց ձեռքբերման եղանակը և արժեքը, պաշտպանյալի եկամուտները, նրա կողմից վճարված հարկերը, նրա սովորական ծախսերը, ցանկացած ոչ սովորական ծախս, հարկային հաշվետվությունները և այլն: Քննության ընթացքում հանձնաժողովը կարող է տարբեր մարմիններից ձեռք բերել տեղեկություններ, հավաքել գրավոր, փորձագիտական ու այլ ապացույցներ և հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, իրականացնել խուզարկություններ ու առգրավումներ, ինչպես նաև պահանջել վերացնելու բանկային գաղտնիքի սահմանափակումը: Հանձնաժողովը կարող է նաև դատապարտված անձանցից տեղեկություններ պահանջել նրանց ու նրանց ընտանիքների ակտիվների, բանկային հաշիվների, եկամտի աղբյուրների, կատարած գործարքների ու պարտքերի վերաբերյալ (վճռի կետ 100): Այդ քննության արդյունքների հիման վրա հանձնաժողովն այնուհետև որոշում է կայացնում բռնագանձման վարույթ հարուցելու վերաբերյալ (վճռի կետ 101), իսկ մեղադրյալի դատապարտման դեպքում դատավճռի արձակումից հետո մեկամսյա ժամկետում դիմում էր քաղաքացիական գործեր քննող դատարան (վճռի կետ 102):

***բ) Բուլղարական դատական պրակտիկան բռնագանձման ենթակա ակտիվների ու պաշտպանյալի հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ***

Եվրոպական դատարանն իր վճռում արձանագրում է, որ «մինչև 2014թ. ազգային դատարանները տարակարծիք են եղել պաշտպանյալի կատարած հանցագործության կամ հանցավոր գործունեության և բռնագանձման ենթակա ակտիվների միջև 2005թ. օրենքի շրջանակներում պատճառահետևանքային կապ հաստատելու անհրաժեշտության վերաբերյալ: Այսպես, որոշ դեպքերում

դատարանները գտել են, որ որևէ պատճառահետևանքային կապի առկայություն պետք չէ ապացուցել, քանի որ 2005թ. օրենքի հոդված (4)1-ով [...] սահմանվում է կանխավարկած այն մասին, որ բոլոր այն ակտիվները, որոնց համար օրինական աղբյուր չի մատնանշվում, համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ [...]: Մյուս դեպքերում, դատարանները պահանջել են հաստատել պատճառահետևանքային կապ՝ գտնելով, որ անգամ եկամտի որևէ օրինական աղբյուր չմատնանշելու դեպքում, ինքնաբերաբար չի ենթադրվում, որ քննարկվող ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են [...] (վճռի կետ 104):

Բուլղարիայի Գերագույն դատարանը այդ խնդրին լուծում է տվել 2014թ. հունիսի 30-ին ընդունված Թիվ 7 Պարզաբանող որոշման շրջանակներում: Արձանագրելով հակասական նախադեպային իրավունքի առկայությունը՝ դատարանը հաստատել է վերը նշված երկու տեսակետներից վերջինը: Գերագույն դատարանը սահմանել է, որ «2005թ. օրենքի հոդված (3)1-ով [...] նախատեսված որևէ հանցանք կատարած անձի կողմից ակտիվներ ձեռք բերելու հանգամանքը պետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված լինի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ, սակայն, բոլոր դեպքերում, «այդ կապի առկայությունը [պետք է] հաստատվի կամ դրա առկայությունը [պետք է] ենթադրվի»: Խնդրո առարկա ենթադրությունը պետք է «տրամաբանորեն հիմնավորվի» և «հիմնված լինի փաստերի ու հանգամանքների վրա»: Ընդունելի է համարվել նաև ենթադրություն կատարել ավելի վաղ, այդ թվում՝ որոշակի հանցագործության կատարումից առաջ ձեռք բերված ակտիվների հանցավոր ծագման մասին: Գերագույն դատարանը նշել է նաև, որ «ակտիվների օրինական ծագումը չհաստատելը ոչ թե փոխարինում է հիմնավորված ենթադրությանն այն մասին, որ դա կապված է հանցավոր գործունեության հետ, այլ Հանձնաժողովին պարզապես ազատում է նման կապի առկայությունը կասկածից դուրս ապացուցելու պարտականությունից» (վճռի կետ 105): Սահմանելով բռնագանձման ենթակա ակտիվների և դատապարտված անձի հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ այս պահանջները՝ Բուլղարիայի Գերագույն դատարանն այնուհետև նշել է, որ բռնագանձման ենթակա ակտիվների և հանցավոր գործունեության միջև (որի կատարման համար անձը դատապարտվել է) որևէ պատճառահետևանքային կապի

առկայությունը չապացուցելը նշանակում է, որ դատապարտված անձի սեփականության իրավունքներին միջամտությունը անհամաչափ է (վճռի կետ 106): Եվրոպական դատարանը իր վճռի հաջորդ՝ 107-րդ կետում շեշտում է այն փաստը, որ Բուլղարիայի Գերագույն դատարանի նշված որոշման ընդունումից հետո բուլղարական դատարանները, առաջնորդվելով այդ որոշմամբ, մերժել են հանձնաժողովի՝ 2005թ. օրենքի շրջանակներում ներկայացրած բռնազանձման հայցերը՝ գտնելով, որ չի հաստատվել որևէ պատճառահետևանքային կապ դատապարտված անձի հանցավոր գործունեության ու այն ակտիվների միջև, որոնք հայցվում էր բռնազանձել՝ չնայած այն հանգամանքին, որ որևէ օրինական աղբյուր չի մատնանշվել վերջինիս որոշ եկամուտների առնչությամբ:

### 3. Սեփականության իրավունքի ենթադրյալ խախտումների ստուգումը ՄԻԵԴ կողմից

ՄԻԵԴ վճռի հիմնական մասը (վճռի 128-281 կետեր) նվիրված է սեփականության իրավունքի (ՄԻԵԿ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված) ենթադրյալ խախտումների ստուգմանը: Եվրոպական դատարանը միաձայն ընդունել է, որ տեղի է ունեցել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում դիմումներից չորսի մասով (թիվ 50705/11, 11340/12, 26221/12 և 71694/12), իսկ երեք այլ դիմումների (թիվ 44845/15, 17238/16 և 63214/16) մասով դատարանը խախտում չի արձանագրել: Դատարանը, մասնավորապես, գտել է, որ ներպետական դատարանները գործերից երեքում քննության են առել բռնազանձված ակտիվների և դատապարտված անձի հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի խնդիրները և հավասարակշռել դիմումատուների իրավունքները հանրային բարօրության հետ:

Այն դեպքերում, երբ Եվրոպական դատարանը հայտնաբերել է խախտում (թիվ 50705/11, 11340/12, 26221/12 և 71694/12), դատարանը որոշել է, որ ներպետական դատարանները չեն հաստատել կապը բռնագրավված գույքի և հանցավոր գործունեության կամ գույքի արժեքի և հայտնաբերված եկամուտների ու ծախսերի տարբերության միջև: Ուստի, եվրոպական դատարանը բռնազանձման այդ

որոշումները ճանաչել է անհամաչափ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտող:

**Ա. 2005թ. օրենքի համաչափության ստուգումը ՄԻԵԴ կողմից**

Եվրոպական դատարանը իր վճռի 200-216 կետերում մանրամասն վերլուծության է ենթարկում օրենքի համապատասխանությունը սեփականության իրավունքին՝ համաչափության սկզբունքի պահպանման տեսանկյունից (վճռի 200-216 կետեր): Դատարանը հատկապես քննադատաբար շեշտադրում է օրենքի գործողության լայն շրջանակները՝ ինչպես առարկայական (վճռի 200 և 210 կետեր), այնպես էլ ժամանակային (վճռի 201 և 210 կետեր) առումներով, ինչպես նաև եկամուտների օրինական ծագման ապացուցման համար անձանց վրա դրված բեռի ծանրությունը (վճռի 203, 205-210 կետեր):

*ա) Օրենքի առարկայական գործողության լայն շրջանակը (վճռի 200 և 210 կետեր)*

Եվրոպական դատարանը փաստել է, որ 2005թ. օրենքն ունի գործողության լայն շրջանակ, քանի որ դրանով նախատեսված բռնագանձման վարույթը հնարավոր է նախաձեռնել բազմաթիվ հանցագործությունների հիմքով և ոչ թե առանձնապես լուրջ հանցագործությունների հետ կապված, ինչպիսիք են, օրինակ, հանցավոր կազմավորման հետ կապերը, թմրամիջոցների շրջանառությունը, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիան կամ փողերի լվացումը: Եվրոպական դատարանն այս առնչությամբ կարևոր արձանագրում է կատարել առ այն, որ «2005թ. օրենքում թվարկված ոչ բոլոր հանցագործությունների պարագայում կարելի է ողջամտորեն ենթադրել, որ դրանք անպայմանորեն հանգեցնում են եկամտի գոյացմանը: Ուստի, 2005թ. օրենքով նախատեսված բռնագանձման ռեժիմը ոչ բոլոր դեպքերում է վերաբերել այն հանգամանքներին, որոնք կարող են որակվել որպես «բացառիկ» հանգամանքներ, ինչպես օրինակ՝ [...] Սիլիկիենեի և Թելբիսն ու Վիզիպուի գործերի դեպքում է»: Նման արձանագրմամբ Եվրոպական դատարանը մեկ անգամ ևս ընդգծում է բռնագանձման վարույթի բացառիկ բնույթը և հանցագործության միջոցով եկամտի գոյացման կարևորությունը օրենքի համաչափությունը գնահատելու ժամանակ:

*բ) Օրենքի գործողության լայն շրջանակը ժամանակային կտրվածքով (վճռի 201 և 210 կետեր)*

Դատարանը որպես լուրջ թերություն է դիտարկում նաև 2005թ. օրենքի՝ ժամանակային կտրվածքով լայն կիրառությունը: Նախ, օրենքը հնարավորություն է տալիս այն կիրառել նույնիսկ այն դեպքում, երբ ոչ հիմնական հանցագործությունը կատարվել է օրենքն ուժի մեջ մտնելուց երկար ժամանակ առաջ (օրինակ՝ *Տողորովը և մյուսները* գործում առաջին դիմումատուի կողմից 1993թ. կատարված հանցագործության վրա ի վերջո տարածվել է 2005թ. օրենքի գործողությունը, իսկ *Կացարովի* գործում հանցագործությունները կատարվել են 2000 թվականին և 2001թվականին): Երկրորդ, պետությունն իրավասու է եղել բռնագանձելու՝ բռնագանձման վարույթը հարուցելուց քսանհինգ տարի առաջ ձեռք բերված ակտիվները՝ այս ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով դատապարտված անձանց կողմից իրենց եկամուտների ծագումն ապացուցելու համապատասխան պարտավորությանը զուգահեռ: Բռնագանձվել են նաև 2005թ. օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ ձեռք բերված ակտիվները (վճռի կետ 201):

*գ) Ապացուցման բեռի ծանրությունը (վճռի 202-210 կետեր)*

Ընդգծելով 2005թ. Օրենքի գործողության լայն շրջանակները և հատկապես օրենքի հետադարձ ուժով կիրառմամբ կարգավորվող երկարատև ժամանակահատվածները, Եվրոպական դատարանը մատնանշում է դիմումատուների կողմից իրենց եկամուտների օրինական բնույթը կամ իրենց ակտիվների օրինական ծագումն ապացուցելու հնարավորության բարդությունը: Դատարանը փաստում է, որ «որոշ գործերում նրանց վրա ոչ միայն դրված է եղել ավելի վաղ տարիների կտրվածքով իրենց ֆինանսական վիճակի մասին հաշվետու լինելու պարտավորություն (տե՛ս, օրինակ՝ *Գայջի* և *Ռուսևի* գործերը [...]), այլև էական է նաև այն հանգամանքը, որ տվյալ ժամանակահատվածի որոշ դրվագներ բնութագրվել են Բուլղարիայում տիրող մեծ տնտեսական փոփոխություններով ու տատանվող գնաճով (տե՛ս, օրինակ՝ *Անգելովն ընդդեմ Բուլղարիայի* [Angelov v.



*Bulgaria*] գործը, թիվ 44076/98, § 25, 2004թ. ապրիլի 22, *Քեփիթըլ Բենք «Էյ. Դի.»-ն ընդդեմ Բուլղարիայի [Capital Bank AD v. Bulgaria]* գործը, թիվ 49429/99, § 45, ՄԻԵԴ, 2005-XII (հատվածներ), ինչպես նաև վերևում հիշատակված *Դիմիտրովների* գործը՝ 48-րդ պարբերությունը, որում Դատարանը գտել է, որ նման իրավիճակը «անհերքելիորեն հանգեցրել է որոշակի անհատակության ու անորոշության» (վճռի կետ 202):

Եվրոպական դատարանը սկզբունքորեն ընդունելի համարելով բուլղարական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն կանխավարկածը, ըստ որի՝ եկամտի որևէ օրինական աղբյուր չմատնանշելու դեպքում ակտիվները պետք է համարվեն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, միևնույն ժամանակ ընդգծում է, որ իր քննության ժամանակ «հաշվի է առնում դիմումատուների կողմից իրենց ապացուցման պարտականությունը կատարելիս հանդիպած դժվարությունները, որոնք պայմանավորված են բռնագրավման վարույթով նախատեսված երկարատև ժամանակահատվածներով և վերևում նկարագրված գործոններով» (վճռի կետ 205):

Եվրոպական դատարանը ուշադրություն է հրավիրում 2005թ. օրենքով սահմանված բռնագանձման ռեժիմի այլ գծերի վրա ևս, որոնք նշանակություն ունեն միջամտության և հանրային շահի միջև արդար հավասարակշռության տեսանկյունից: «Ներպետական դատարանները, որոնք պարտավորեցրել են դիմումատուների ակտիվների բռնագանձումը, ակնհայտորեն նախապես հակված են եղել ենթադրելու, որ դիմումատուներն առնչություն ունեն այլ՝ ընդհանրապես չքննված հանցագործությունների հետ, և որ դա այդպես է եղել երկար տարիներ: Դա ուղղակիորեն բխում է 2005թ. օրենքով նախատեսված բռնագրավման ռեժիմի ընդհանուր մոտեցումից, ինչպես նաև ապացուցվում է այն փաստի ուժով, որ թեև քննվող որոշ առանձին գործերում դիմումատուների կողմից հիմնական հանցագործությունից ստացված ցանկացած շահույթ հատուցվել է (օրինակ՝ *Գայիչի* և *Բարովի* գործերում [...]), այնուամենայնիվ, ներպետական դատարանները դիմել են բռնագրավում կիրառելուն՝ չնայած այն հանգամանքին, որ բռնագրավված գույքը չէր կարող ծագել հիմնական հանցագործությունից» (վճռի կետ 206): Վճռի 207-209 կետերում Եվրոպական դատարանը մատնանշում է այն գործնական

բարդությունները, որոնք Բուլղարիայում առաջացել են եկամուտներն ու ծախսերը գնահատելու եղանակի, որոշակի գումարը գերազանցող գործարքների կնքման փաստը միայն վկայի ցուցմունքներով ապացուցելու անթույլատրելիության և ներպետական դատարանների կողմից տարբեր ժամանակահատվածների ակտիվների արժեքները համեմատելու նպատակով «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորը վկայակոչելու գործելակերպի հետ կապված:

*դ) Օրենքի համաչափության ընդհանուր գնահատականը*

Ի մի բերելով օրենքի վերևում մատնանշված թերությունները՝ Եվրոպական դատարանը օրենքի՝ իրավաչափ նպատակ հետապնդելու և միջամտության միջոցների իրավաչափության տեսանկյունից համաչափության սկզբունքի պահպանվածության վերաբերյալ գալիս է հետևյալ եզրահանգմանը. «Թեև 2005թ. օրենքով սահմանված ընթացակարգի՝ վերևում նկարագրված թերություններից ոչ մեկը սկզբունքորեն, առանձին վերցրած, չէր կարող որոշակիորեն ազդել դիմումատուների դեմ կիրառվող բռնազանձման միջոցների համաչափության վրա, այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում դրանց կուտակային ազդեցությունը: Դատարանն այն կարծիքին է, որ վերոնշյալ գործոնները՝ միասին վերցրած, կարող էին հանգեցնել այնպիսի անհատակության ու անճշտության, որը Դատարանի կողմից քննադատվել է *Դիմիտրովների* գործում [...], այլ կերպ ասած՝ դրանք կարող էին հանգեցնել նրան, որ 2005թ. օրենքով նախատեսված բռնազանձումը լիներ անհամաչափ դրանով հետապնդվող նպատակին»: Նման գնահատականը նշանակում է, որ Եվրոպական դատարանը օրենքի կողմից հետապնդվող նպատակը համարում է անհամաչափության շեմին շատ մոտ, բայց այդ շեմը դեռևս չգերազանցող: Թեև 2005թ. օրենքի թերությունները Եվրոպական դատարանը չի դիտարկում որպես համաչափության սկզբունքի ավտոմատ խախտում՝ հետապնդվող օրինական նպատակի տեսանկյունից, դատարանը գտնում է, որ այդ թերությունների «կուտակային ազդեցությունը կարող էր լինել այնպիսին, որ դրանով խախտվեր վարույթի հավասարակշռությունը՝ հոգուտ պետության»: Ուստի, նման իրավիճակում դատարանը անհրաժեշտ է գտնում քննել համաչափության սկզբունքի կիրառման հաջորդ տարրը, այսինքն՝ *սեփականության իրավունքի միջամտության անհրաժեշտությունը* քննության առարկա յուրաքանչյուր գործում:

*ե) Բռնագանձվող գույքի և հանցավոր գործունեության միջև բավարար պատճառահետևանքային կապի առկայության պարզման անհրաժեշտությունը*

Եվրոպական դատարանը համաչափության սկզբունքի անհրաժեշտության տարրի ստուգման փուլում հետևում է Բուլղարիայի Գերագույն դատարանի դիրքորոշմանը, «որն իր՝ 2014թ. Պարզաբանող որոշման մեջ, որը պայմանավորված էր մինչև այդ 2005թ. օրենքի շրջանակներում հաստատված հակասական նախադեպային իրավունքով, նշել է, որ պետք է հաստատվի ուղղակի կամ անուղղակի պատճառահետևանքային կապ, կամ պետք է ենթադրվի այդպիսի կապի առկայությունը բռնագանձման ենթակա ակտիվների ու հանցավոր գործունեության միջև: Գերագույն դատարանն այնուհետև նշել է, որ նման կապի առկայության հաստատումը պետք է «տրամաբանորեն հիմնավորվի»՝ ելնելով յուրաքանչյուր գործի առանձին փաստական հանգամանքներից, և որ պատճառահետևանքային կապ չհաստատելը կարող է նշանակել, որ դատապարտված անձի սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն անհամաչափ է [...]»: Կիսելով այդ մոտեցումը, Եվրոպական «դատարանը ևս Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում համապատասխան հավասարակշռություն հաստատելու համար որոշիչ է համարում Գերագույն դատարանի կողմից պահանջվող պատճառահետևանքային կապի հաստատումը, այսինքն՝ այն հանգամանքը, թե արդյո՞ք ազգային մարմիններն ապահովել են առնվազն որոշակի այնպիսի մանրամասներ, որոնցով հիմնավորվում են հաստատված հանցագործությունից բռնագանձման ենթակա ակտիվների ծագումը՝ յուրաքանչյուր կոնկրետ գործի համատեքստում» (վճռի կետ 212):

Եվրոպական դատարանը արձանագրում է, որ համաչափության ստուգման այս մոտեցումը ամբողջությամբ համապատասխանում է ինչպես իր նախադեպային իրավունքին (վճռի կետ 213)<sup>2</sup>, այնպես էլ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի

<sup>2</sup> Եվրոպական դատարանը վկայակոչում է իր վճռում հիշատակված «Ջի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ը և մյուսները գործի 301-րդ պարբերությունը, Ֆիլիպսի գործի 53-րդ պարբերությունը, Սիլիկիենեի գործի 68-րդ պարբերությունը, Վեյցի գործի 74-րդ պարբերությունը, Ռումմի գործի 107-րդ պարբերությունը, Գիլիինգսի գործի 47-րդ պարբերությունը: Վերջին երկու գործերի վերաբերյալ Եվրոպական դատարանը նշում է, որ «Դատարանը, արձանագրելով Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (տե՛ս համապատասխանաբար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը), մատնանշել է, որ բռնագանձված ակտիվները որևէ կերպ չեն ներկայացվել որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, և որ ներպետական դատարանները, պարտավորեցնելով

2014թ. ապրիլի 3-ի թիվ 2014/42/ԵՄ Հրահանգի հոդված 5(1)-ին: Այդ «հոդվածը պարզաբանող նույն Հրահանգի 21-րդ պարբերությունը նույնպես պահանջվում է, որ «ընդլայնված բռնագանձման» դեպքում ազգային դատարանը հավաստիանա, որ բռնագանձման ենթակա գույքը «բխում է հանցավոր արարքից» (տե՛ս վերևում 117-118-րդ պարբերությունները): Այդ առնչությամբ 21-րդ պարբերությունը նախատեսվում են լրացուցիչ բացատրություններ՝ մատնանշելով, մասնավորապես, որ ակտիվը կարող է լինել «ընդլայնված բռնագանձման» առարկա այն դեպքում, երբ դատարանը կարող է «ողջամտորեն ենթադրել», որ «էականորեն առավել քան հավանական է», որ այն ձեռք է բերվել հանցավոր արարքի կատարումից, այլ ոչ թե այլ գործունեությունից (տե՛ս վերևում 118-րդ պարբերությունը)»<sup>3</sup> (վճռի կետ 214):

Եվրոպական դատարանը իր վճռի 215-րդ կետում, ամփոփելով համաչափության վերաբերյալ իր մոտեցումը, արձանագրում է հետևյալը. «Ուստի, Դատարանը ստորև ուսումնասիրվող առանձին դեպքերում գտնում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում պահանջվող արդարացի հավասարակշռությունն ապահովված է այն դեպքում, երբ որպես դիմումատուների իրավունքների հակակշիռ և երաշխիք ներպետական դատարանները տրամադրել են որոշակի մանրամասներ հանցավոր արարքի առնչությամբ, որից ենթադրաբար առաջացել են բռնագանձման ենթակա ակտիվները, ինչպես նաև ողջամտորեն ցույց են տվել, որ այդ ակտիվները կարող էին լինել փաստված հանցավոր արարքից ստացված եկամուտներ»:

## ***Բ. Առանձին դիմումների քննությունը ՄԻԵԴ կողմից***

*ա) Թիվ 50705/11 գործ. Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի*

կատարել բռնագրավում, չեն իրականացրել այն գումարների գնահատումը, որոնք հնարավոր է, որ ձեռք բերված լինեին հանցավոր ճանապարհով»:

<sup>3</sup> 2014թ. ապրիլի 3-ի թիվ 2014/42/ԵՄ Հրահանգի հոդված 5(1). «Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ հնարավորություն ընձեռելու ամբողջությամբ կամ մասնակիորեն բռնագանձել այնպիսի քրեական հանցագործության համար դատապարտված անձին պատկանող գույքը, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնտեսական օգուտ բերել, եթե դատարանը, գործի հանգամանքների հիման վրա, ներառյալ կոնկրետ փաստերն ու առկա ապացույցները, ինչպես, օրինակ, գույքի արժեքի անհամաչափությունը դատապարտված անձի օրինական եկամուտների հետ, համոզված է, որ տվյալ գույքը ստացվել է հանցավոր վարքագծից»:

### *Գործի փաստական հանգամանքները*

Առաջին դիմումատուն դատապարտվել է 2004թ., ի թիվս այլոց՝ 1993թ. կատարված շորթման փորձի համար, և այդ հիմքով 2007թ. Հանձնաժողովը նախաձեռնել է բռնագանձման վարույթ նրա ու երկրորդ դիմումատուի դեմ: Վարույթը հանգեցրել է չորս դիմումատուների՝ 896,300 եվրո արժողությամբ ակտիվների բռնագանձմանը, որոնց զգալի մեծամասնությունը ձեռք է բերվել 2000թ. և 2005թ.:

### *ՄԻԵԴ վճիռը*

Եվրոպական դատարանը այստեղ, ինչպես և մնացած բոլոր դիմումների առնչությամբ, նախ արձանագրում է, որ 2005թ. օրենքով հետապնդվել են իրավաչափ նպատակներ՝ ելնելով հանրային շահից (վճռի կետ 218): Այնուհետև, անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք կոնկրետ միջամտությունը դիմումատուների իրավունքներին հետապնդել է որևէ իրավաչափ նպատակ, Եվրոպական դատարանը կարևոր է համարում հատուկ ընդգծել, որ առաջին դիմումատուն դատապարտվել է 1993թ. կատարված շորթման փորձի համար, որի պարագայում բոլորովին էլ ակնհայտ չէ, որ նման հանցագործությունը՝ զուտ հանցափորձի տեսքով, կարող է հանգեցնել որևէ եկամտի առաջացմանը: Չնայած այն հանգամանքին, որ բուլղարական որևէ իրավասու մարմնի կողմից որևէ պնդում չի արվել առ այն, որ առաջին դիմումատուն զբաղվել է որևէ այլ հանցավոր գործունեությամբ, այդուհանդերձ նրա դատապարտումը հանգեցրել է զգալի արժեք ունեցող ակտիվների բռնագանձմանը: Եվրոպական դատարանն ընդգծում է նաև, որ բռնագանձված ակտիվների զգալի մեծամասնությունը ձեռք է բերվել քննարկվող հանցագործությունը առաջին դիմումատուի կողմից կատարելուց շատ տարիներ անց (վճռի կետ 219):

Քննարկելով համաչափության սկզբունքի երկրորդ՝ արդարացի հավասարակշռության հաստատման տարրը, «այսինքն՝ որ միջամտությունը դիմումատուների սեփականության իրավունքին համաչափ է եղել որևէ հետապնդվող իրավաչափ նպատակի», Եվրոպական դատարանը, վկայակոչելով իր վճռի 212-րդ և

215-րդ պարբերությունները, շեշտում է, որ այդ հավասարակշռության հաստատման համար անհրաժեշտ է, որ ազգային մարմինները տրամադրեն «առնվազն որոշ մանրամասներ ենթադրյալ հակաիրավական այն արարքի մասին, որը հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև սահմանեն որոշակի պատճառահետևանքային կապ այդ ակտիվների ու հակաիրավական արարքի միջև [...]»<sup>4</sup>: Ընդ որում, Եվրոպական դատարանն ընդգծում է, որ Բուլղարիայի Գերագույն դատարանը այդ պատճառահետևանքային կապը սահմանել է լայն կերպ՝ «նշելով, որ այն կարող է լինել ուղղակի կամ անուղղակի, ուղղակիորեն հաստատված կամ ենթադրվող» (վճռի կետ 220):

Վճռի վերոնշյալ 219 և 220 կետերում ամփոփելով կոնկրետ գործում համաչափության սկզբունքից բխող պահանջները, Եվրոպական դատարանը վճռի 221-րդ կետում փաստում է, որ «թեև գործի փաստական հանգամանքների համաձայն՝ առաջին դիմումատուի կողմից 1993թ. կատարված հանցագործության և դիմումատուների՝ որպես կանոն, շատ ավելի ուշ ձեռք բերած ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը որևէ կերպ ակնհայտ չի եղել [...], այնուամենայնիվ, ներպետական դատարանները բռնագանձման հայցը քննելիս որևէ ջանք չեն գործադրել նման կապի առկայությունը հիմնավորելու համար: Նրանք մատնանշել են իրենց կողմից արձանագրված անհամապատասխանությունն առաջին ու երկրորդ դիմումատուների եկամուտների ու ծախսերի միջև, առանց որևէ տեսակի լրացուցիչ պատճառաբանության, և մերժել են այդ առնչությամբ առաջին ու երկրորդ դիմումատուների առարկությունները [...]: Ավելին, նրանք չեն մատնանշել՝ արդյո՞ք բռնագանձման ենթակա ակտիվների արժեքը հավասար է դիմումատուների եկամուտների ու ծախսերի միջև հաստատված անհամապատասխանությանը ([...]: Ինչպես նշվել է, ազգային դատարանները ընդհանրապես չեն փորձել նաև պատճառաբանել, որ առաջին դիմումատուն առնչություն է ունեցել որևէ այլ հանցավոր գործունեության հետ»:

«Հաշվի առնելով 2005թ. օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի հավանական թերությունները, ինչպես նաև համապատասխան արդարացի

<sup>4</sup> Այս ձևակերպումն առանց որևէ փոփոխության Եվրոպական դատարանն օգտագործում է նաև Գայիչի և Բարովի դիմումների քննարկման ժամանակ, որտեղ դատարանն արձանագրում է համաչափության սկզբունքի խախտում, ինչպես նաև Ռուսիի գործում, որտեղ Եվրոպական դատարանը գալիս է այն եզրահանգման, որ բուլղարական դատարանը ճիշտ է կիրառել այդ ստանդարտը (վճռի 231, 238 և 253 կետեր):

հավասարակշռություն հաստատելու համար իր կողմից անհրաժեշտ համարվող երաշխիքների բացակայությունը», Եվրոպական դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ *Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի* գործով «չի հաստատվել, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում դիմումատուների իրավունքներին միջամտությունը համաչափ է եղել 2005թ. օրենքով հետապնդվող որևէ իրավաչափ նպատակի»: Ուստի, տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (վճռի կետ 224):

*բ) Թիվ 11340/12 գործ. Գայիչն ընդդեմ Բուլղարիայի*

*Գործի փաստական հանգամանքները*

2006թ. տիկին Գայիչը դատապարտվել է յուրացման համար: Նա հափշտակել է 21,600 եվրոյին համարժեք գումար այն ընկերությունից, որը թեև որպես սեփականություն պատկանել է իրեն ու իր ամուսնուն՝ պրն Գայիչին, այնուամենայնիվ, գտնվել է լուծարման գործընթացում և, հետևաբար՝ կառավարվել է հավատարմագրային կառավարչի կողմից: Գումարն այնուհետև վերադարձվել է դրա իրավատիրոջը: Դատապարտումը հանգեցրել է երկու դիմումատուների և պրն Գայիչի դեմ հարուցված բռնագանձման վարույթին և, ի վերջո՝ սեփականությամբ իրենց պատկանող մի շարք ակտիվների բռնագանձմանը:

*ՄԻԵԴ վճիռը*

Ինչպես և նախորդ գործում, Եվրոպական դատարանը նախ դիմումատուների իրավունքներին կատարված միջամտությունը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում համարում է օրինական և նկատում է, որ 2005թ. օրենքով հետապնդվել է իրավաչափ նպատակ՝ հանրային շահից ելնելով (վճռի կետ 226): Համաչափության վերաբերյալ Եվրոպական դատարանը արձանագրում է, որ յուրացման կոնկրետ դեպքից չի հետևում, որ այդ հանցագործությունից ստացվել է որևէ նյութական օգուտ, քանի որ դիմումատուի կողմից հափշտակված գումարը վերադարձվել է դրա իրավատիրոջը (վճռի 227 և 229 կետեր): Եվրոպական

դատարանը փաստում է, որ «թեև առաջին դիմումատուի հանցավոր արարքի և բռնագանձված ակտիվների միջև կապը որևէ կերպով ակնհայտ չի եղել, այնուամենայնիվ ներպետական դատարանները չեն փորձել հաստատել դրա առկայությունը: Նրանք զուտ վկայակոչել են 2005թ. օրենքի հոդված 4(1)-ով նախատեսված կանխավարկածը, ըստ որի Վառնայի վերաքննիչ դատարանն ուղղակիորեն նշել է, որ որևէ լրացուցիչ հիմնավորում չի պահանջվում [...]»<sup>5</sup>: Հավասարապես բոլոր դատարանները չեն մատնանշել՝ արդյո՞ք բռնագանձման ենթակա ակտիվների արժեքը հավասար է դիմումատուների ու պրն Գայիչի եկամուտների ու ծախսերի միջև առկա անհամապատասխանությանը [...]: Ի վերջո, ներպետական դատարանները չեն փորձել պարզաբանել՝ ի՞նչ լրացուցիչ հանցավոր գործունեությամբ են զբաղվել առաջին դիմումատուն ու պրն Գայիչը. ինչպես նշվել է, այդ առնչությամբ նրանք չեն քննարկել կամ հիմք ընդունել որևէ փաստ» (վճռի կետ 230):

Վկայակոչելով իր վճռի առանցքային 212 և 215 կետերը, Եվրոպական դատարանը արձանագրում է, որ «2005թ. օրենքի կիրառմանը վերաբերող կոնկրետ հանգամանքներում ազգային մարմիններից պահանջվել է առնվազն տրամադրել որոշ մանրամասներ ենթադրյալ հակաիրավական այն արարքի մասին, որը հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև հաստատել որոշակի պատճառահետևանքային կապի առկայություն այդ ակտիվների ու հակաիրավական արարքի միջև [...]»: Փաստելով, որ քննարկվող գործում դա չի կատարվել և, հետևաբար, քանի որ դիմումատուներին չեն տրամադրվել այն երաշխիքները, որոնք դատարանն անհրաժեշտ է համարում համապատասխան արդարացի հավասարակշռություն ապահովելու համար, Եվրոպական դատարանը դիմումատուների ակտիվների բռնագանձումը համարել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում նրանց իրավունքներին կատարված անհամաչափ միջամտություն (վճռի 231 և 232 կետեր):

<sup>5</sup> 2010թ. հունիսի 9-ին Վառնայի վերաքննիչ դատարանը «վերահաստատել է, որ դիմումատուները և պրն Գայիչը չեն ունեցել «իրենց ծախսած գումարների շրջանակում օրինական եկամուտ՝ ակտիվներ ձեռք բերելու համար», և որ 2005թ. օրենքով չի պահանջվել, որ անմիջական պատճառահետևանքային կապ հաստատվի բռնագանձման ենթակա գույքի միավորների և դատապարտված անձի հանցավոր գործունեության միջև, քանի որ հոդված 4(1)-ով նախատեսված ենթադրությունը բավարար է եղել» (ՄԻԵԴ վճռի կետ 28):



*գ) Թիվ 26221/12 գործ. Բարովն ընդդեմ Բուղարիայի*

*Գործի փաստական հանգամանքները*

2006թ. դիմումատուն համաձայնեցման վարույթով համաձայնություն է կնքել քրեական հետապնդման մարմինների հետ՝ ընդունելով այն փաստը, որ իր կողմից կատարվել է մի քանի գողություն, ավազակություն և զենքի անօրինական տիրապետում: Այդ բոլոր հանցագործությունները կատարվել են 1994թ. և 1995թ.: 1995թ. և 2001թ. միջև ընկած ժամանակահատվածում դիմումատուն գտնվել է մինչդատական կալանքի տակ: Ներպետական դատարանը, որն այնուհետև հաստատել է համաձայնեցման վարույթով կնքված համաձայնությունը, ուղղակիորեն նշել է, որ դիմումատուի կատարած հանցագործություններից բխող բոլոր նյութական վնասները հատուցվել են: Դատապարտումը հիմք է ծառայել դիմումատուի դեմ բռնագանձման վարույթ հարուցելու համար, որի շրջանակներում նրա կողմից 2005թ. և 2008թ. միջև ընկած ժամանակահատվածում ձեռք բերված գույքի միավորները ճանաչվել են որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ ու բռնագանձվել (վճռի կետ 235):

*ՄԻԵԴ վճիռը*

Այս գործում ևս Եվրոպական դատարանը, անդրադառնալով համաչափության հարցին, նշել է, որ «դիմումատուի կողմից կատարված հանցագործությունների և բռնագանձված ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը որևէ կերպ ակնհայտ չի եղել՝ արձանագրելով, որ նրա հանցավոր գործունեությունն իրականացվել է 1994թ. և 1995թ., և որ ճանաչվել է այն փաստը, որ դրանից բխող բոլոր նյութական վնասները հատուցվել են, ինչպես նաև որ բռնագանձված ակտիվները դիմումատուի կողմից ձեռք են բերվել շատ տարիներ անց, այդ թվում՝ նրա կողմից կալանքի տակ գտնվելու զգալի ժամանակահատված անցնելուց հետո: Այդուհանդերձ, ներպետական դատարանները դիմումատուի դեմ ներկայացված բռնագանձման հայցը քննելիս որևէ ջանք չեն գործադրել քննարկվող պատճառահետևանքային կապը հիմնավորելու համար: Նրանք գտել են, որ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ 2005թ. օրենքը այդպիսի ակնհայտ պահանջ չի

պարունակում [...]»<sup>6</sup>: Ավելին, ներպետական դատարանները չեն մատնանշել՝ արդյո՞ք բռնագանձման ենթակա ակտիվների արժեքը հավասար է դիմումատուի եկամուտների ու ծախսերի միջև առկա անհամապատասխանությանը, թե՛ ոչ [...]: Նրանց կողմից չի հիմնավորվել նաև որևէ եզրահանգում այն մասին, թե արդյո՞ք դիմումատուն կատարել է որևէ լրացուցիչ հանցագործություն կամ արդյո՞ք զբաղվել է որևէ այլ հանցավոր գործունեությամբ, թե՛ ոչ» (վճռի կետ 237):

Ուստի, Եվրոպական դատարանը, վճռի 238-րդ կետում, հղելով վճռի 212 և 215 կետերին, կրկնում է նախորդ երկու գործերում օգտագործված ստանդարտ ձևակերպումը (վճռի 220 և 231 կետեր) և արձանագրում դիմումատուի սեփականության իրավունքի խախտում:

*դ) Թիվ 71694/12. Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի*

#### *Գործի փաստական հանգամանքները*

2008թ. առաջին և երկրորդ դիմումատուները դատապարտվել են 2007թ. հունվարից մինչև հունիսն ընկած ժամանակահատվածում կատարած մի քանի հանցագործությունների համար, որոնց վրա տարածվել է 2005թ. օրենքի գործողությունը [...], որը հիմք է ծառայել նրանց ու երրորդ դիմումատուի դեմ բռնագանձման վարույթ հարուցելու համար: Արդյունքում, դիմումատուները կորցրել են երկու բնակարանները և գույքի այլ միավորներ, որոնց մի մասը, մասնավորապես՝ առաջին ու երկրորդ դիմումատուների բնակարանը [...], ձեռք էր բերվել նախորդող տարիներին: Բուլղարիայի Գերագույն դատարանը, որն իր 2012թ. մայիսի 4-ի վճռով պարտավորեցրել է բռնագանձում իրականացնել, եզրակացրել է, որ դիմումատուները չեն ապացուցել, որ նրանք վիճարկվող ակտիվները ձեռք են բերել այն եկամտով, որը կարող էր համարվել ապացուցված ու օրինական (վճռի կետ 244):

<sup>6</sup> Գաբրովոյի շրջանային դատարանը 2010թ. ապրիլի 9-ի վճռում ընդամենը արձանագրել է, որ «ողջամիտ ենթադրություն կարելի է կատարել այն մասին, որ այդ ակտիվները համարվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Այս առումով, անհրաժեշտ չի եղել հաստատել պատճառահետևանքային կապ քննարկվող ակտիվների ու դիմումատուի կատարած հանցագործությունների միջև. դա չի բխել 2005թ. օրենքով նախատեսված այն պահանջից, որի համաձայն դրա հողված 4(1)-ով սահմանվում է այդ առնչությամբ նախատեսվող ենթադրությունը [...]» (ՄԻԵԴ վճռի կետ 35):

*ՄԻԵԴ վճիռը*

Եվրոպական դատարանը նկատում է, որ Գերագույն դատարանը որևէ ջանք չի գործադրել հիմնավորելու համար, որ բռնագանձման ենթակա ակտիվներն առնչություն ունեն առաջին և երկրորդ դիմումատուների՝ որևէ հաստատված հանցավոր գործունեության հետ, ուստի, համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Ելնելով միայն նրանից, որ դիմումատուները չեն ներկայացրել բավարար օրինական եկամուտների վերաբերյալ ապացույցներ, Բուլղարիայի Գերագույն դատարանը ընդամենը ենթադրություն է արել այդ առնչությամբ (վճռի կետ 246): Եվրոպական դատարանը մատնանշում է այն հանգամանքը, որ «առաջին ու երկրորդ դիմումատուները 2007թ. հունվարից մինչև հունիսն ընկած ժամանակահատվածում զբաղվել են հանցավոր գործունեությամբ, մինչդեռ բռնագանձված ակտիվների մի մասը, մասնավորապես՝ առաջին ու երկրորդ դիմումատուների բնակարանը, ձեռք է բերվել շատ ավելի վաղ» (վճռի կետ 247): Նման իրավիճակում ևս Եվրոպական դատարանը, ընդգծելով, որ Բուլղարիայի Գերագույն դատարանը «չի հաստատել որևէ պատճառահետևանքային կապի առկայություն առաջին ու երկրորդ դիմումատուների հանցավոր գործունեության ու բռնագանձված ակտիվների միջև», գալիս է այն եզրահանգմանը, որ «չի ապահովվել համապատասխան արդարացի հավասարակշռություն՝ հանրային շահերի ներքո 2005թ. օրենքով հետապնդվող իրավաչափ նպատակների և դիմումատուների առանձին իրավունքների միջև, այսինքն՝ որ դիմումատուների ակտիվների բռնագանձումը համարվում է անհամաչափ միջամտություն նրանց իրավունքներին՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Դատարանը կրկին վկայակոչում է վերևում նշված իր վերլուծությունը՝ 2005թ. օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի հավանական թերությունների վերաբերյալ, ինչպես նաև այն երաշխիքները, որոնք անհրաժեշտ են համապատասխան արդարացի հավասարակշռություն ապահովելու համար» (վճռի կետ 247):

ե) Թիվ 44845/15 գործ. Ռուսն ընդդեմ Բուլղարիայի

*Գործի փաստական հանգամանքները*

2012թ. դիմումատուն դատապարտվել է 2009թ. կատարած ապօրինի ծառահատման համար: Քանի որ այդ հանցագործության վրա տարածվել է 2005թ. օրենքի գործողությունը, դատապարտումը հիմք է ծառայել նրա դեմ բռնագանձման վարույթ հարուցելու համար, որը հանգեցրել է մի շարք ակտիվների բռնագանձմանը, որոնք ձեռք էին բերվել 2006թ. և 2011թ. (վճռի կետ 251):

*ՄԻԵԴ վճիռը*

Կիրառելով իր վճռի 212-րդ և 215-րդ պարբերություններում սահմանված ստանդարտը առ այն, որ ազգային մարմինները պետք է տրամադրեն «առնվազն որոշ մանրամասներ ենթադրյալ հակաիրավական այն արարքի մասին, որը հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև սահմանեն որոշակի պատճառահետևանքային կապ այդ ակտիվների ու հակաիրավական արարքի միջև», տվյալ գործում Եվրոպական դատարանը նշում է, որ իրավասու բուլղարական դատարանները «վերլուծել են բռնագանձման ենթակա ակտիվների և դիմումատուի հավանական հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը՝ կատարելով պատճառաբանված եզրահանգումներ: Նրանք վերլուծել են դիմումատուի աշխատանքային գործունեությունը և օրինական եկամուտները, ինչպես նաև հաշվի են առել այն ամսաթվերը, երբ նրա կողմից ձեռք են բերվել վիճարկվող գույքի միավորները: Ավելին, նրանք հաշվի են առել կոնկրետ այն հանցագործության առարկայի հարաբերականորեն ցածր արժեքը, որի կատարման համար դիմումատուն մեղավոր էր ճանաչվել [...]: Գերագույն դատարանը գտել է, որ ստորին ատյանի դատարանները ճիշտ են կիրառել իր՝ 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմամբ սահմանված չափորոշիչը» (վճռի կետ 254):

Եվրոպական դատարանը արձանագրել է, որ ներպետական դատարանների եզրահանգումները դիմումատուի՝ այն հանցագործության շրջանակներից դուրս հանցավոր գործունեության հետ առնչություն ունենալու վերաբերյալ, որի կատարման

համար նա դատապարտվել էր, ինչպես նաև դիմումատուի այդ հանցավոր գործունեության ու բռնագանձման ենթակա ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ, չեն եղել կամայական կամ ակնհայտորեն անհիմն: Ուստի, Եվրոպական դատարանն ընդունել է, որ դիմումատուից բռնագանձված ակտիվները ողջամտորեն համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Ի հավելումն՝ Եվրոպական դատարանը փաստել է, որ ազգային դատարանները միայն պարտավորեցրել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ համարվող ակտիվների բռնագանձումը և մնացած մասով մերժել են հանձնաժողովի բռնագանձման հայցը (վճռի կետ 255): Ուստի, Եվրոպական դատարանը վճռել է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում տեղի չի ունեցել (վճռի կետ 258):

*զ) Թիվ 17238/16 գործ. Կացարովն ընդդեմ Բուլղարիայի*

*Գործի փաստական հանգամանքները*

2008թ. դիմումատուն դատապարտվել է թմրամիջոցների անօրինական տիրապետման երեք հանցագործության համար: Հանցագործությունները կատարվել են 2000թ. և 2001թ.: Դատապարտումը հիմք է ծառայել 2005թ. օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի հարուցման համար, որը հանգեցրել է մի շարք ակտիվների բռնագանձմանը, որոնց շարքում հատկանշական է դիմումատուի կողմից 2008թ. պաշտոնապես ձեռք բերված բնակարանը, որի դիմաց, սակայն վճարումը կատարվել էր 2002թ. (վճռի կետ 259):

*ՄԻԵԴ վճիռը*

Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք միջամտությունը համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակներին, Եվրոպական դատարանը կրկին վկայակոչում է իր վճռի 200-216-րդ պարբերություններում արտահայտված ընդհանուր նկատառումներն այդ հարցի շուրջ (վճռի կետ 261): Բուլղարական դատարանները գործի քննության ժամանակ մատնանշել են, որ դիմումատուն դատապարտվել է թմրամիջոցների անօրինական տիրապետման երեք հանցագործությունների

կատարման համար, այդ թվում՝ իրացման մտադրությամբ, և անդրադարձել են հանցավոր գործունեության և բռնագանձման ենթակա ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությանը: Նրանք փաստել են երկարատև ժամանակահատվածի կտրվածքով դիմումատուի գործունեության բնույթը և որևէ օրինական եկամտի բացակայությունը և նշել են, որ դիմումատուից բռնագանձման ենթակա ամենաթանկ ակտիվի՝ նրա բնակարանի դիմաց վճարումը կատարվել է մոտավորապես նույն ժամանակ, երբ նա իրացման նպատակով տիրապետել է թմրամիջոցների, և այն ժամանակ, երբ նա որևէ օրինական եկամուտ չի ունեցել: Իր հերթին Բուլղարիայի Գերագույն դատարանը եզրակացրել է, որ «ստորին ատյանի դատարանները պատշաճորեն ուսումնասիրել են բռնագանձման ենթակա ակտիվների ու դիմումատուի հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը՝ Գերագույն դատարանի 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշման պահանջներին համապատասխան» (վճռի կետ 262):

Ելնելով բուլղարական դատարանների այս եզրակացություններից՝ Եվրոպական դատարանը դրանք համարել է պատշաճ պատճառաբանված և չի տեսել դրանք կասկածի տակ առնելու որևէ պատճառ: Ուստի, Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դիմումատուից բռնագանձված ակտիվները ողջամտորեն ներկայացվել են որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ (վճռի կետ 263):

*է) Թիվ 63214/16 գործ. Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի*

*Գործի փաստական հանգամանքները*

2010թ. դիմումատուն դատապարտվել է հարկերից խուսափելու համար այն հիմքով, որ նա 2000թ. դեկտեմբերից մինչև 2001թ. մայիսն ընկած ժամանակահատվածում խուսափել է վճարել մոտ 150,000 եվրոյի չափով հարկեր: Դատապարտումը հիմք է ծառայել նրա դեմ 2005թ. օրենքով նախատեսված բռնագանձման վարույթ հարուցելու համար, որի շրջանակներում դատարանները

պարտավորեցրել են բռնագանձել նրա կողմից 2007թ. և 2010թ. միջև ընկած ժամանակահատվածում ձեռք բերված մի շարք ակտիվներ:

### *ՄԻԵԴ վճիռը*

Անդրադառնալով համաչափության խնդրին՝ Եվրոպական դատարանը գնահատում է, թե արդյո՞ք բուլղարական ներպետական դատարանները մատնանշել են որևէ հակաիրավական արարքի ու բռնագանձման ենթակա ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Ինչպես Վառնայի վերաքննիչ դատարանի, այնպես էլ Բուլղարայի Գերագույն դատարանի համապատասխան եզրակացությունները Եվրոպական դատարանը չի դիտում որպես կամայական կամ ակնհայտորեն անհիմն (վճռի կետ 278): Եվրոպական դատարանը նշում է, որ «Վառնայի վերաքննիչ դատարանը, որը պարտավորեցրել է բռնագանձել դիմումատուի ակտիվները, մանրամասն պարզաբանել է, թե ինչու է այն համարել, որ այդ ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են: Մասնավորապես, այն նշել է, որ հարկերը, որոնց վճարումից դիմումատուն խուսափել է 2000թ. և 2001թ., երբևէ չեն վճարվել պետությանը, որ դիմումատուն ներգրավված է եղել հանցավոր գործունեության մեջ, և որ նա չի ունեցել որևէ օրինական եկամուտ, սակայն տիրապետել է խոշոր չափի գումարների [...]: Ուստի, «տրամաբանության և փորձի» հիման վրա Վառնայի վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ առկա է պատճառահետևանքային կապ դիմումատուի կատարած հանցագործության և այն ակտիվների միջև, որոնք հայցվում էր բռնագանձել (վճռի կետ 277): Իր հերթին, Բուլղարիայի Գերագույն դատարանը գտել է, որ Վառնայի վերաքննիչ դատարանը ճիշտ է կիրառել 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմամբ սահմանված չափորոշիչը (վճռի կետ 278):

Եվրոպական դատարանը, անդրադառնալով այն եղանակին, որով ազգային դատարանները վարույթի շրջանակներում գնահատել են դիմումատուի եկամուտներն ու ծախսերը, նկատել է, որ «Վառնայի վերաքննիչ դատարանը, որը պարտավորեցրել է բռնագանձել դիմումատուի ակտիվները, մանրամասն քննել է հարցն ու կատարել պատճառաբանված եզրակացություններ [...]: Մասնավորապես, դիմումատուն վիճարկել է նրա եզրահանգումներն իր կողմից ձեռք բերված անշարժ գույքի

միավորների արժեքի վերաբերյալ՝ մեջբերելով նման գույքի մեկ օրինակ, որի արժեքը բռնագանձման վարույթում գնահատվել էր 13,750 եվրո, սակայն այնուհետև՝ Եկամուտների ազգային գործակալության կողմից այն վաճառվել էր 2,390 եվրո գումարի դիմաց [...]: Այնուամենայնիվ, այդ հարցի շուրջ Կառավարության պարզաբանումների [...] և Գերագույն դատարանի դիրքորոշման [...] լույսի ներքո Դատարանն ապացուցված չի համարում այն հանգամանքը, որ այդ գույքի արժեքը որոշվել, ու այն գնահատվել է կամայական ու ակնհայտորեն անհիմն ձևով: Դատարանը չի տեսնում Վառնայի վերաքննիչ դատարանի եզրակացությունների մնացած մասը կամայական կամ ակնհայտորեն անհիմն համարելու որևէ պատճառ» (վճռի կետ 279): Վերոնշյալի լույսի ներքո Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ «միջամտությունը դիմումատուի «սեփականությանը» անհամաչափ չի եղել դրանով հետապնդվող իրավաչափ նպատակներին» (վճռի կետ 280):

#### **4. Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով ՄԻԵԴ վճռի նշանակությունը սեփականության պաշտպանության տեսանկյունից**

Սեփականության պաշտպանության տեսանկյունից ՄԻԵԴ վճիռը անհրաժեշտ հստակություն է մտցնում բռնագանձման ենթակա գույքի և հանցավոր գործունեության միջև կապի խնդրում: Եվրոպական դատարանի հիմնական եզրակացությունը հետևյալն է. որպեսզի հանցագործության միջոցով ձեռք բերված գույքի բռնագրավման միջոցով սեփականության իրավունքի նկատմամբ միջամտությունը համաչափ լինի, անհրաժեշտ է, որպեսզի իրավասու դատարանը պատշաճ կերպով ստուգի խնդրո առարկա գույքի և հանցավոր գործունեության միջև բավարար պատճառահետևանքային կապի առկայությունը: Եթե ներպետական դատարանը իրականացնում է նման վերլուծություն, ապա Եվրոպական դատարանը որպես կանոն, հակված է լինում ներպետական դատարանների գնահատականին, եթե դիմումատուները չեն ապացուցում, որ նման գնահատականը կամայական է կամ ակնհայտորեն անհիմն:

Բուլղարիայում բռնագանձման վարույթի հետ կապված բազմաթիվ գանգատների քննության ժամանակ Եվրոպական դատարանը 2023 թ. կայացրել է մի քանի վճիռներ, որոնցում Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռը




առանքային նշանակություն ունի: Լյապչևը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով<sup>7</sup> Բուլղարիայի կառավարությունը առաջարկել է Եվրոպական դատարանին վճիռը կայացնել Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի (թիվ 50705/11 և 6 այլք, 13 հուլիսի 2021թ.) ուղենիշային (նախադեպային) վճռի հիման վրա: Լյապչևների գործով բուլղարական դատարանները «կարգադրել են բռնագանձել այն ակտիվները, որոնք ձեռք են բերվել մինչև պարոն Լյապչևի կողմից հիմնական հանցագործության կատարումը՝ հիմնվելով միայն դիմումատուների «օրինական եկամուտների և ծախսերի միջև եղած անհամապատասխանությունների վրա»: Չուպետլովսկու դեպքում դատարանները վկայակոչել են միայն դիմումատուի չճշտված «հանցավոր գործունեության» բնույթը: Եվրոպական դատարանը, մատնանշելով Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի վճռի 216 կետը, գտել է, որ դիմումատուների ցանկացած հանցավոր վարքագծի և բռնագանձման ենթակա գույքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը հիմնավորելու համար բերված պատճառները ակնհայտորեն անբավարար են, և արձանագրել է դիմումատուների սեփականության իրավունքի խախտումը: Մեկ այլ՝ Սաբունին և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով<sup>8</sup>, չնայած Բուլղարիայի կառավարությունը պնդել է, որ այս դեպքում բուլղարական դատարանները «կատարել են անհրաժեշտ վերլուծություն և «հստակ հաստատել» պատճառահետևանքային կապ դիմումատուների «հանցավոր գործունեության» [...] և բռնագանձման ենթակա գույքի միջև», Եվրոպական դատարանը, սակայն, փաստել է, որ «համոզված չէ, որ դա այդպես է եղել»: Դատարանը արձանագրել է, որ «քննվող երկու դիմումներում էլ դատապարտված անձանց «հանցավոր վարքագիծը» եղել է միանվագ հանցագործություն, որը, ըստ երևույթին, որևէ ֆինանսական օգուտ չի բերել: Ավելին, պարոն Սաբունիի և այլ դիմումատուների դեպքում [...] հանցագործությունը կատարվել է 2009-ին, մինչդեռ իշխանությունները քննել են դիմումատուների ֆինանսական վիճակը 1993թ.-ի դրությամբ [...], իսկ դիմումատուներ Կրաստնների դեպքում [...] քրեական դատարանները բացահայտորեն փաստել են, որ պարոն Կրաստնը այլ

<sup>7</sup><https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22languageisocode%22:%5B%22ENG%22%5D,%22appno%22:%5B%2275478/13%22,%220713/15%22%5D,%22documentcollectionid%22:%5B%22COMMITTEE%22%5D,%22itemid%22:%5B%22001-223278%22%5D%7D>

<sup>8</sup><https://hudoc.echr.coe.int/fre#%7B%22fulltext%22:%5B%22CASE%20OF%20SABOUNI%20AND%20OTHERS%20v.%20BULGARIA%22%5D,%22tabview%22:%5B%22translation%22%5D,%22itemid%22:%5B%22001-223285%22%5D%7D>

«հակասոցիալական վարքագիծ» չի դրսևորել: Այս իրավիճակում Դատարանը չի համարում, որ իշխանությունները համապատասխան տվյալներ են տրամադրել հանցավոր վարքագծի վերաբերյալ, որը կարող էր առաջացնել հանցանքից ենթադրյալ եկամուտներ, ինչպես պահանջվում էր Տոդորովը և մյուսները գործում [...]: Դատարանները հիմնավորված և համարժեք կերպով ցույց չեն տվել նաև, որ քննվող որոշակի ակտիվները կարող էին լինել հանցանքից ստացված եկամուտ. Նրանք ընդամենը վկայակոչել են այն բանի հնարավորությունը, որ այդ բնույթի հանցագործությունները կարող են եկամուտներ առաջացնել, ինչպես նաև դիմողների ծախսերի և «օրինաչափ» համարվող եկամուտների միջև հաստատված անհամապատասխանությունները»: Եվրոպական դատարանը այստեղ ևս եկել է այն եզրահանգմանը, որ կոնկրետ դեպքում ցանկացած հանցավոր վարքագծի և բռնագանձման ենթակա գույքի միջև պատճառահետևանքային կապը հիմնավորելու համար բերված պատճառները ակնհայտորեն անբավարար են:

Հայաստանի համար Տոդորովի գործով վճիռն ունի ուղենիշային նշանակություն, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, տվյալ պարագայում՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկան:



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

**ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ**

**ՏՈՂՈՐՈՎԸ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ**

*(գանգապ թիվ 50705/11 և մյուս 6 գանգապները)*

**ՎՃԻՌ**

Հոդված 1, կետ 1 • Սեփականությունից անարգել օգտվելը • Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձման մասին օրենսդրության մեջ առկա թերությունները հակակշռելու համար անհրաժեշտ առանձին, պատճառաբանված գնահատումը • Ներպետական դատարանների կողմից հանցավոր արարքի առանձնահատկությունները ներկայացնելը և այն հանգամանքը պատճառաբանված ձևով հիմնավորելը, որ ակտիվները կարող են համարվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ • Ներպետական դատարանների գնահատականի՝ որպես կանոն արժանահավատ լինելը, եթե չի հիմնավորվում, որ այն կամայական է կամ ակնհայտորեն անհիմն • Անհամաչափ միջամտության առկայությունն այն դեպքում, երբ որևէ ջանք չի գործադրվել՝ պատճառահետևանքային կապը հիմնավորելու, ակտիվների արժեքը գնահատելու և լրացուցիչ հանցանքների վերաբերյալ որևէ եզրահանգում հիմնավորելու համար • Համաչափ միջամտության առկայությունն այն դեպքում, երբ գործադրվել են այդպիսի ջանքեր, կիրառվել է Գերագույն դատարանի համապատասխան պարզաբանող որոշումը, և արված եզրակացությունները ո՛չ կամայական են, ո՛չ էլ ակնհայտորեն անհիմն:

**ՍՏՐԱՄԲՈՒՐԳ**

13 հուլիսի 2021թ.

**ՎԵՐՋՆԱԿԱՆ**

13/10/2021թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



**Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք), հանդես գալով Պալատի հետևյալ կազմով՝

Թիմ Այքը [Tim Eicke]՝ Նախագահ,  
 Յոնկո Գրոզև [Yonko Grozev],  
 Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović],  
 Յուլյա Անտոանելլա Մոտոկ [Iulia Antoanella Motoc],  
 Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],  
 Գաբրիել Կուչկո-Ստադլմայեր [Gabriele Kucsko-Stadlmayer],  
 Աննա Մարիա Գուերա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ դատավորներ,  
 և Իլզե Ֆրայվիրթ [Ilse Freiwirth]՝ Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Բուլղարիայի տասնչորս քաղաքացիների կողմից ընդդեմ Բուլղարիայի Հանրապետության՝ Դատարան ներկայացված յոթ գանգատները, ինչպիսիք քաղաքացիների անունները և լրացուցիչ մանրամասները մատնանշված են Հավելվածում (դիմումատուներ), և ինչպիսիք գանգատները ներկայացնելու տարբեր ամսաթվերը նույնպես մատնանշված են Հավելվածում,

այն փաստը, որ դիմումատու տկն Էմիլյա Ռուսևա Ժեկովան մահացել է 2018թ. հուլիսի 20-ին, և նրա ժառանգները (ամուսինը և որդիները) ցանկություն են հայտնել հետամուտ լինել գործի քննությանը՝ վերջինիս փոխարեն,

այն որոշումը, որը վերաբերում է դիմումատուների՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ համարվող գույքի բռնագանձման դեմ ուղղված բողոքների մասին Բուլղարիայի կառավարությանը (Կառավարություն) ծանուցելուն, իսկ բողոքների մնացած մասը՝ անընդունելի հայտարարելուն,

կողմերի դիտարկումները,

2021 թվականի հունիսի 15-ին անցկացնելով փակ խորհրդակցություն,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործերը վերաբերում են հանցավոր ճանապարհով ստացված ենթադրյալ եկամուտների բռնագանձմանը: Դիմումատուների գանգատները հիմնականում վերաբերում են Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին:

## ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուներին ներկայացրել են այն իրավաբանները, որոնց անունները և գործունեության իրականացման վայրը մատնանշված է Հավելվածում:

3. Կառավարությանը ներկայացրել է դրա՝ Արդարադատության նախարարության լիազոր ներկայացուցիչներ տկն Մ. Դիմովան, տկն Ի. Ստանչևա-Չինովան և տկն Ռ. Նիկոլովան:

4. Կողմերի ներկայացրած փաստերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

### 1. ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 50705/11՝ ՏՈՂՈՐՈՎԸ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒՆԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

5. Պրն Վալերի Իլին Տոդորովը (առաջին դիմումատու) և տկն Վերա Իլինա Տոդորովան (երկրորդ դիմումատու) ամուսիններ են: Պրն Իլյա Իվանով Տոդորովը և տկն Գալյա Ցվետանովա Իվանովան (երրորդ և չորրորդ դիմումատուներ) առաջին դիմումատուի ծնողներն են:

6. Պլևենի շրջանային դատարանի 2002թ. հոկտեմբերի 20-ի դատավճռով, որը վերջնական է դարձել 2004թ. դեկտեմբերի 1-ին, առաջին դիմումատուն դատապարտվել է՝ 1993թ. սեպտեմբերի 5-9-ն ընկած ժամանակահատվածում մեկ ուրիշին անօրինական կերպով ազատությունից զրկելու համար, ինչպես նաև շորթման փորձի համար: Նրա նկատմամբ որպես պատիժ նշանակվել է պայմանական ազատազրկում:

7. Քանի որ շորթման հանցագործության վրա տարածվում է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձման մասին» 2005թ. օրենքի (այսուհետ՝ 2005թ. Օրենք, տե՛ս ստորև նշված 90-րդ պարբերությունը) գործողությունը, ուստի Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հայտնաբերման հարցերով հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով, տե՛ս ստորև նշված 92-րդ պարբերությունը) 2007 թվականին բռնագանձման հայց է ներկայացրել Վրացայի շրջանային դատարան: Այն պահանջել է բռնագանձել առաջին և երկրորդ դիմումատուներին պատկանող մի շարք ակտիվներ (նրանց ընտանեկան տունը ուղղակիորեն բացառված է եղել ցանկից), ինչպես նաև այն հողակտորը և առանձնատունը,

որոնք առաջին դիմումատուն գնել էր 1993թ. ու նվիրել իր հորը՝ երրորդ դիմումատուին, 2003 թվականին:

8. Բռնագանձման հայցը կազմվել էր առաջին ու երկրորդ դիմումատուների՝ 1993թ. հունվարի 1-ից մինչև 2005թ. դեկտեմբերի 31-ի կտրվածքով եկամուտների ու ծախսերի նկատմամբ Հանձնաժողովի կատարած ստուգումների ու հսկիչ գործողությունների արդյունքում:

9. Վրացայի շրջանային դատարանը 2009թ. ապրիլի 1-ի վճռով մասնակի բավարարել է Հանձնաժողովի հայցը և պարտավորեցրել բռնագանձելու առաջին ու երկրորդ դիմումատուների հետևյալ ակտիվները՝ թվով ութ անշարժ գույք, այդ թվում՝ խանութներ, սրճարան ու հողակտորներ, որոնք դիմումատուները ձեռք են բերել 2001-2005թթ. ընթացքում, առաջին ու երկրորդ դիմումատուների կողմից 2002-2005թթ. ընթացքում այս գույքի որոշ միավորներից ստացված՝ 50,840 եվրոյին համարժեք 99,400 բուլղարական լևր, ի սկզբանե 2000-2002թթ. ընթացքում ձեռք բերված բնակարանների ու ավտոմեքենաների վաճառքից ստացված 67,623 բուլղարական լևր (34,590 եվրո), ինչպես նաև ընկերության բաժնետոմսերն ու բանկային հաշիվներում առկա ավանդները: Բռնագանձված ակտիվների ընդհանուր արժեքը կազմել է 1,752,275 բուլղարական լև (896,300 եվրո):

10. Դատարանը չի պարտավորեցրել բռնագանձելու այն հողակտորն ու առանձնատունը, որոնք առաջին դիմումատուն նվիրել էր իր հորը (երրորդ դիմումատու. տե՛ս վերևում նշված 7-րդ պարբերության վերջում)՝ գտնելով, որ առանձնատունը ծառայում է որպես երրորդ ու չորրորդ դիմումատուների տուն:

11. Ստորև նկարագրված 2005թ. Օրենքով նախատեսված մյուս վարույթներին համանման ձևով, Վրացայի շրջանային դատարանը քննել ու համադրել է առաջին ու երկրորդ դիմումատուների «օրինական» եկամուտներն ու նրանց ծախսերը: Ավելին, ինչպես մի շարք այլ դեպքերում, տարբեր ժամանակահատվածներում համապատասխան արժեքներ համեմատելու նպատակով այն փոխարկել է գումարները դրանց համարժեքով՝ արտահայտված համապատասխան պահի դրությամբ գործող «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորով (տվյալ մոտեցման առավել մանրամասն նկարագրության համար տե՛ս, ստորև 109-րդ պարբերությունը):

12. Ինչ վերաբերում է առաջին ու երկրորդ դիմումատուներին, Վրացայի շրջանային դատարանը նշել է, որ համապատասխան ժամանակահատվածում նրանց ծախսերը համարժեք են եղել «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 11,501,74-պատիկին: Այդ եզրահանգումը հիմնված է եղել այն փորձագիտական եզրակացության վրա, որը կողմերը չեն վիճարկել, և որում դիմումատուների կողմից

ձեռքբերված գույքի միավորների մեծ մասի արժեքները նշված են եղել վաճառքի համապատասխան փաստաթղթերում մատնանշված ձևով: Բացառություն է արվել մեկ անշարժ գույքի դեպքում (ինչպես քննարկվում է ստորև նշված 13-րդ պարբերության V կետում), որի համար ներպետական դատարանի կարծիքով դիմումատուները պետք է վճարեին շուկայական արժեքը:

13. Վրացայի շրջանային դատարանը վճռել է, որ քննարկվող ժամանակահատվածում առաջին ու երկրորդ դիմումատուները ստացել են օրինական եկամուտ, որը համարժեք է եղել «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 8,357,78-պատիկին: Դատարանը մերժել է որպես այդպիսի եկամուտ համարել հետևյալը՝ (i) 220,000 բուլղարական լևր (112,000 եվրո) և 8,000 գերմանական մարկը, որոնք առաջին դիմումատուի ծնողները ենթադրաբար տրամադրել էին վերջինիս 1993 թվականին և 2002 թվականին. նվիրատվության պայմանագրերը ներկայացնելիս դատապարտված անձինք ո՛չ մատնանշել էին այդ փաստաթղթերի կազմման ամսաթվերը, ո՛չ էլ տրամադրել էին նվիրատվությունը հավաստող բավարար այլ ապացույցներ. (ii) 420,500 բուլղարական լևր (215,000 եվրո), որը երրորդ դիմումատուն ենթադրաբար փոխառել էր որպես բանկային վարկ ու տրամադրել իր որդուն. ևս մեկ անգամ պետք է նշել, որ դա չի ապացուցվել. (iii) այն վարկերը, որոնք առաջին դիմումատուն ենթադրաբար ստացել է մասնավոր անձանցից. դա բավարար չափով չի ապացուցվել. (iv) այն գումարները, որոնք առաջին դիմումատուն արտասահմանում աշխատելուց հետո ենթադրաբար բերել է Բուլղարիա 1990 թվականին և 1991 թվականին. երբ նա ներկայացրել է իր մոտ տվյալ գումարի առկայությունը մատնանշող մաքսային հայտարարագրեր, առկա չեն եղել դրա ձեռքբերման աղբյուրի վերաբերյալ ապացույցներ. (v) մոտ 250,000 բուլղարական լևր (128,000 եվրո)՝ անշարժ գույքի գնման համար վերցված բանկային վարկի այն մասը, որը առաջին դիմումատուն ենթադրաբար պահպանել է, քանի որ նրա կողմից վճարված գինը զգալիորեն ցածր է եղել. Վրացայի շրջանային դատարանը գտել է, որ բանկային վարկը համարժեք է եղել քննարկվող գույքի շուկայական արժեքին, և որ առաջին դիմումատուն վճարել է այդ գինն ու չի պահպանել իր համար փոխառած գումարից որևէ մաս:

14. Ուստի, դատարանը եզրակացրել է, որ առաջին ու երկրորդ դիմումատուների ծախսերը քննարկվող ժամանակահատվածում զգալիորեն գերազանցել են նրանց օրինական եկամուտները: Դատարանը հաշվարկել է, որ, հաշվի առնելով նրանց՝ օրական կտրվածքով կատարած ծախսերն ու մյուս ծախսերը, ակտիվներ ձեռք բերելու համար դիմումատուների տնօրինման տակ եղել է «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 4,004,15-պատիկին համարժեք գումար, որը խիստ անբավարար է եղել այդ նպատակի

համար: Հետևաբար, կարելի է ողջամտորեն ենթադրել, որ նրանց կողմից ձեռք բերված ակտիվները եղել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Հիմնավորված չեն եղել դիմումատուների այն փաստարկները, որոնք վերաբերել են այդ ակտիվների ու այն հանցանքների միջև պատճառահետևանքային կապի բացակայությանը, որոնց կատարման համար դատապարտվել է առաջին դիմումատուն:

15. Սոֆիայի վերաքննիչ դատարանը 2010թ. օգոստոսի 3-ի վճռով անփոփոխ է թողել ստորին աստիճանի դատարանի վճիռը:

16. Գերագույն վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) 2011թ. մայիսի 12-ի որոշմամբ վարույթ է ընդունել Հանձնաժողովի բերած վճռաբեկ բողոքը, որով վիճարկվել է ստորին աստիճանի դատարանի՝ երրորդ ու չորրորդ դիմումատուների տան բռնագանձումը պարտավորեցնելու պահանջի մերժումը:

17. Գերագույն դատարանը 2012թ. հունվարի 3-ի վերջնական վճռով պարտավորեցրել է բռնագանձել այդ գույքը: Դատարանը նշել է, որ ոչ մի ապացույց ձեռք չի բերվել՝ հիմնավորելու համար, որ քննարկվող առանձնատունը եղել է երրորդ ու չորրորդ դիմումատուների միակ տունը, քանի որ երրորդ դիմումատուին սեփականության իրավունքով պատկանել են այլ անշարժ գույքի միավորներ: Քննարկվող առանձնատունը ենթակա է եղել բռնագանձման, քանի որ 2005թ. Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն (տե՛ս ստորև 97-րդ պարբերությունը) ենթադրվել է, որ երրորդ ու չորրորդ դիմումատուները տեղյակ են եղել, որ այն ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հաշվին:

## II. ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 11340/12՝ ԳԱՅԻՉՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

18. 1990-ական թվականների սկզբում տկն Ժիվկա Դիմիտրովա Գայիչը (առաջին դիմումատու) և նրա ամուսինը՝ պրն Միրոյլոբ Գայիչը (որը մահացել է 2014թ.), գրանցել են մի քանի ընկերություններ: Վերջիններիս միջոցով նրանք գործարկել են ավանդի ստացման համակարգեր և գրավել են ներդրողների՝ խոստանալով բարձր շահույթ: Կառավարության պնդմամբ, մինչև 1995թ. նրանց ընկերությունները կուտակել են մոտ 1,700,000,000 հին բուլղարական լև, ինչպիսի գումարը համարժեք է եղել տվյալ պահի դրությամբ «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 615,960-պատիկին կամ ներկայիս մոտ 345,000,000 բուլղարական լևին (176,000,000 եվրոյին):

19. Համակարգն ի վերջո փլուզվել է, և ներդրողների մեծամասնությունը չի կարողացել հետ ստանալ իր գումարը: Պրն Գայիչն այս դեպքերի առնչությամբ ի վերջո դատապարտվել է ծանրացնող հանգամանքներում խարդախություն, ծանրացնող հանգամանքներում յուրացում կատարելու ու հարկերից խուսափելու համար:



20. Կավարնայի համայնքային դատարանի 2005թ. հունվարի 20-ի դատավճռով, որը վերջնական է դարձել 2006թ. նոյեմբերի 10-ին, առաջին դիմումատուն դատապարտվել է յուրացում կատարելու համար ու ենթարկվել մեկ տարի ժամկետով պայմանական ազատազրկման: 2003թ. նա իրեն ու պրն Գայիչին պատկանող վերոնշյալ ընկերություններից մեկից հափշտակել է 42,172 բուլղարական լև, որը համարժեք է մոտ 21,600 եվրոյին: Քննարկվող ընկերությունը անցել է լուծարման գործընթաց և, հետևաբար՝ հանձնվել է հավատարմագրային կառավարչի կառավարմանը, իսկ առաջին դիմումատուն, օժտված չլինելով անհրաժեշտ իրավասությամբ, իր անշարժ գույքի միավորներից մեկը վաճառել է երրորդ կողմին: Նա ստացված գումարը փոխանցել է մեկ այլ ընկերության, որը մասամբ պատկանել է իրեն ու պրն Գայիչին: Իրականացված վաճառքն արդյունքում անվավեր է ճանաչվել, և գումարը վերադարձվել է դրա իրավատիրոջը:

21. Քանի որ 2005թ. Օրենքի գործողությունը տարածվել է այն հանցանքի վրա, որի կատարման համար դատապարտվել է առաջին դիմումատուն, 2008թ. Հանձնաժողովը հայց է ներկայացրել Դոբրիչի շրջանային դատարան՝ առաջին դիմումատուի և պրն Գայիչի, ինչպես նաև նրանց դստեր՝ տկն Ջորիցա Միրոյուբովա Գայչի (երկրորդ դիմումատու) ակտիվների բռնագանձման պահանջով:

22. Քննարկվող ակտիվներն են եղել՝ Կավարնայում գտնվող հողակտորն այն առանձնատնով, որը գնվել է առաջին դիմումատուի ու պրն Գայիչի կողմից 1994 թվականին, Կավարնայում գտնվող մեկ այլ հողակտոր, որը գնվել է 1995 թվականին, Դոբրիչում գտնվող բնակարանը և ավտոտնակը, որոնք ձեռք են բերվել, համապատասխանաբար՝ 1994 թվականին և 1996 թվականին, ավտոմեքենան, որը գնվել է 1993 թվականին, առաջին դիմումատուի և պրն Գայիչի՝ գույքի այլ այն միավորների վաճառքից ստացած գումարները, որոնք սկզբնապես ձեռք են բերվել 1992թ. և 1999թ. միջև ընկած ժամանակահատվածում, բանկային հաշիվներին մուտք արված գումարները, այդ թվում՝ այն գումարները, որոնք մուտք են արվել երկրորդ դիմումատուի անունով: Հանձնաժողովի պնդմամբ վերոնշյալ ակտիվների ընդհանուր արժեքը կազմել է 2,138,805 բուլղարական լև (1,094,000 եվրո):

23. Բռնագանձման հայցը կազմվել էր առաջին դիմումատուի և պրն Գայիչի՝ 1986 թվականից (երբ լրացել է առաջին դիմումատուի 18 տարին) մինչև 2007 թվականի կտրվածքով եկամուտների ու ծախսերի նկատմամբ Հանձնաժողովի կատարած ստուգումների ու հսկիչ գործողությունների արդյունքում:

24. 2009թ. հոկտեմբերի 13-ի իր վճռով Դոբրիչի շրջանային դատարանը բավարարել է հայցը՝ պարտավորեցնելով բռնագանձել վերոնշյալ բոլոր ակտիվները:

25. Կողմերի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա դատարանը սահմանել է, որ առաջին դիմումատուի և պրն Գայիչի օրինական եկամուտը քննարկվող ժամանակահատվածում համարժեք է եղել «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 341,47-պատիկին: Դատարանը մերժել է որպես այդպիսի գումար համարել 200,000 գերմանական մարկը, որը Սերբիայի քաղաքացի պրն Գայիչը պնդել է, որ իր հետ բերել է 1990թ.՝ Բուլղարիա ժամանելիս, քանի որ նման պնդումը չի հիմնավորվել որևէ գրավոր ապացույցով (ինչպես, օրինակ՝ մաքսային հայտարարագրով), իսկ վկայի ցուցմունքները չէին կարող օգտագործվել դա հիմնավորելու համար:

26. Քննարկվող ժամանակահատվածում առաջին դիմումատուն և պրն Գայիչը ձեռք են բերել ավելի քան 3,146,300 բուլղարական լև (1,610,000 եվրո) արժողությամբ գույք: Այդ գումարը հաստատվել է այն բանից հետո, երբ Դոբրիչի շրջանային դատարանը հաշվի է առել նրանց ձեռք բերած գույքի շուկայական արժեքները և ոչ թե վաճառքի փաստաթղթերում մատնանշված արժեքները: Քննարկվող ժամանակահատվածում դատապարտված անձանց ընդհանուր ծախսերը, հետևապես, համարժեք են եղել «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 4,545,73-պատիկին:

27. Քանի որ դիմումատուները և պրն Գայիչը չեն հիմնավորել նման զգալի չափով օրինական եկամուտների ծագումը, ապա 2005թ. Օրենքի հոդված 4(1)-ով նախատեսված ենթադրության լույսի ներքո (տե՛ս ստորև 96-րդ պարբերությունը) այն ակտիվները, որոնց համար դիմել են բռնագանձման պահանջով, պետք է համարվեն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ:

28. Դիմումատուների և պրն Գայիչի կողմից վերաքննիչ բողոք բերելուց հետո՝ 2010թ. հունիսի 9-ին, Վառնայի վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել ստորին աստիճանի դատարանի վճիռը՝ հաստատելով դրա եզրահանգումները: Վերաքննիչ դատարանը, մասնավորապես, վերահաստատել է, որ դիմումատուները և պրն Գայիչը չեն ունեցել «իրենց ծախսած գումարների շրջանակում օրինական եկամուտ՝ ակտիվներ ձեռք բերելու համար», և որ 2005թ. Օրենքով չի պահանջվել, որ անմիջական պատճառահետևանքային կապ հաստատվի բռնագանձման ենթակա գույքի միավորների և դատապարտված անձի հանցավոր գործունեության միջև, քանի որ հոդված 4(1)-ով նախատեսված ենթադրությունը բավարար է եղել:

29. Դիմումատուները և պրն Գայիչը ներկայացրել են վճարեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2011թ. օգոստոսի 16-ի վերջնական որոշմամբ թողնվել է առանց քննության:

30. Ի վերջո, պարզվել է, որ բռնագանձման ենթակա գույքի որոշ միավորներ արդեն իսկ վաճառված են եղել երրորդ կողմին՝ առաջին դիմումատուի ու պրն Գայիչի դեմ ավելի վաղ

հարուցված կատարողական վարույթի շրջանակներում: Ուստի, միակ անշարժ գույքի միավորները, որոնք փաստացի բռնագանձվել են 2005թ. Օրենքով նախատեսված ընթացակարգով, եղել են Դոբրիչում գտնվող բնակարանը, որտեղ ապրել են դիմումատուները և պրն Գայիչը, ինչպես նաև Կավարնայում գտնվող հողակտորի մի մասնաբաժինն ու առանձնատունը: 2014թ. սեպտեմբերին բնակարանը Եկամուտների ազգային գործակալության կողմից դրվել է աճուրդի ու վաճառվել երրորդ կողմի:

31. Բռնագանձված գումարներից ոչ մեկը չի վճարվել պետությանը ո՛չ դիմումատուների կողմից, ո՛չ էլ ավելի ուշ՝ պրն Գայիչի կողմից:

### III. ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 26221/12՝ ԲԱՐՈՎՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

32. 1995թ. դիմումատուի (պրն Պետար Միլկով Բարով) դեմ հարուցվել է քրեական վարույթ այն կասկածանքի հիման վրա, որ նա անօրինական ձևով տիրապետել է մեծ քանակությամբ զենքի և 1994թ. ու 1995թ. մի քանի այլ անհատների հետ միասին կատարել է մի շարք գողություններ ու ավազակություններ, որոնց մի մասը հանգեցրել է մարմնական վնասվածքների և մեկ դեպքում էլ՝ անգամ տուժողի մահվան: Դիմումատուն գտնվել է մինչդատական կալանքի տակ 1995-2001թթ.: Այնուհետև, նա համաձայնեցման վարույթով համաձայնություն է կնքել քրեական հետապնդման մարմինների հետ՝ ընդունելով այն փաստը, որ ինքը կատարել է քննարկվող հանցագործությունները և համաձայն է մինչդատական կալանքի տևողությանը հավասար ժամկետով ազատազրկման ձևով պատժին: Համաձայնությունը հաստատվել է 2006թ. հոկտեմբերի 6-ին Լովեչի շրջանային դատարանի կողմից, որը, մասնավորապես, նշել է, որ դիմումատուի կատարած հանցագործություններից բխող բոլոր նյութական վնասները հատուցվել են:

33. Քանի որ 2005թ. Օրենքի գործողությունը տարածվել է այն հանցանքների վրա, որոնց կատարման համար դատապարտվել է դիմումատուն, 2009թ. ապրիլին Հանձնաժողովը հայց է ներկայացրել Գաբրովոյի շրջանային դատարան՝ պահանջելով բռնագանձել հետևյալ ակտիվները՝ 2007թ. դիմումատուի կողմից գնված երկու հողակտորները՝ արդյունաբերական շենքի ու օժանդակ շինությունների հետ միասին, 2008թ. գնված երկու այլ հողակտորներ, 2006թ. գնված ավտոմեքենան ու մոտոցիկլետը, ինչպես նաև դիմումատուի կողմից 2005թ. գնված ու 2006թ. երրորդ կողմին վաճառված մեկ այլ ավտոմեքենայի վաճառքից դիմումատուի ստացած գումարը:

34. Բռնագանձման հայցը կազմվել էր 1987թ. մայիսի 10-ից (երբ լրացել է նրա 18 տարին) մինչև 2009թ. հունվարի 1-ի կտրվածքով դիմումատուի եկամուտների ու ծախսերի

նկատմամբ Հանձնաժողովի կատարած ստուգումների ու հսկիչ գործողությունների արդյունքում:

35. Գաբրովոյի շրջանային դատարանը 2010թ. ապրիլի 9-ի վճռով բավարարել է հայցն ու պարտավորեցրել բռնագանձելու վերոնշյալ ակտիվները՝ գտնելով, որ 2005թ. Օրենքի նախապայմանները բավարարված են: Նախ, դատարանը նշել է, որ դիմումատուն դատապարտվել է Օրենքի հոդված 3(1)-ով նախատեսված հանցագործությունների կատարման համար (տե՛ս ստորև 95-րդ պարբերությունը): Երկրորդ, քննարկվող ժամանակահատվածում նա ձեռք է բերել «զգալի արժեք ունեցող» ակտիվներ: Երրորդ, ողջամիտ ենթադրություն կարելի է կատարել այն մասին, որ այդ ակտիվները համարվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Այս առումով, անհրաժեշտ չի եղել հաստատել պատճառահետևանքային կապ քննարկվող ակտիվների ու դիմումատուի կատարած հանցագործությունների միջև. դա չի բխել 2005թ. Օրենքով նախատեսված այն պահանջից, որի համաձայն դրա հոդված 4(1)-ով սահմանվում է այդ առնչությամբ նախատեսվող ենթադրությունը (տե՛ս ստորև 96-րդ պարբերությունը):

36. Գաբրովոյի շրջանային դատարանը հաշվարկել է, որ քննարկվող ժամանակահատվածում դիմումատուի այն եկամուտը, որի օրինական ծագումը մատնանշվել է, կազմել է 60,801 բուլղարական լև (31,100 եվրո) կամ համարժեք է եղել «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 364,5-պատիկին: Այդ գումարը գոյացել է նրա աշխատավարձից, գույքի վաճառքից, ինչպես նաև բանկերից ու այլ հաստատություններից փոխառած վարկերից: Դիմումատուն չի հիմնավորել, որ ստացել է որևէ այլ եկամուտ և հատկապես՝ փոխառություն ընկերոջից (վկայի ցուցմունքը չէր կարող օգտագործվել դա հիմնավորելու համար. ավելին, նա շարունակել է կրել դրա հատուցման պարտավորությունը), ինչպես նաև փոխառության պայմանագրի շրջանակներում հատուցում (դիմումատուի ներկայացրած պայմանագիրը չի վավերացվել սահմանված ձևի նոտարական կարգով և չի պարունակել վավերական ամսաթիվ. ավելին, առկա չի եղել որևէ ապացույց այն մասին, որ նա փաստացի ստացել է նման հատուցում):

37. Քննարկվող ժամանակահատվածում դիմումատուի ծախսերը կազմել են 182,270 բուլղարական լև (92,230 եվրո) կամ «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 1,122,2-պատիկին համարժեք գումար: Այդ գումարը հաստատվել է այն բանից հետո, երբ Գաբրովոյի շրջանային դատարանը նշանակալիորեն հաշվի է առել դիմումատուի կողմից գնված գույքի միավորների շուկայական արժեքները և ոչ թե նոտարական փաստաթղթերում և վաճառքի փաստաթղթերում մատնանշված արժեքները, որոնք զգալիորեն ցածր են եղել: Հետևապես, դիմումատուի կատարած ծախսերը գերազանցել են նրա օրինական

եկամուտները «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 757,70-պատիկի չափով, ինչը նշանակում է, որ Հանձնաժողովի բռնագանձման հայցը ենթակա էր բավարարման:

38. 2010թ. նոյեմբերի 8-ին Վելիկո Տառնովոյի վերաքննիչ դատարանը մեծամասամբ անփոփոխ է թողել վերոնշյալ վճիռը:

39. Չնայած այն հանգամանքին, որ անփոփոխ է թողնվել ստորին ատյանի դատարանի եզրահանգումն այն մասին, որ դիմումատուի ծախսերը զգալիորեն գերազանցել են նրա օրինական եկամուտները, ինչով և հիմնավորվում է բռնագանձումը, այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանը կատարել է այդ եկամուտների ու ծախսերի վերահաշվարկ: Այսպիսով, դատարանը եզրակացրել է, որ քննարկվող ժամանակահատվածում դիմումատուի օրինական եկամուտները ընդհանուր կազմել են 58,030 բուլղարական լև (30,000 եվրո), և որ նրա ծախսերը ընդհանուր կազմել են 167,192 բուլղարական լև (85,520 եվրո): Դիմումատուի օրինական եկամուտների ու ծախսերի միջև առկա այդ անհամապատասխանությամբ հիմնավորվել է վերոնշյալ ակտիվների մեծ մասի բռնագանձումը: Չի բռնագանձվել միայն 2006թ. դիմումատուի կողմից գնված մոտոցիկլետը (տե՛ս վերևում 33-րդ պարբերությունը), քանի որ այն փոխանցվել է երրորդ կողմին, սակայն դիմումատուն շարունակել է պատասխանատու լինել վճարելու այն գինը, որին համարժեք գումարը նա ստացել է դրա դիմաց:

40. Դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք: Գերագույն դատարանը 2011թ. հոկտեմբերի 24-ի վերջնական որոշմամբ վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

#### IV. ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 71694/12՝ ԺԵԿՈՎՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

41. Պրն Ժիվկո Ժեկով Ժեկովը (առաջին դիմումատու) և տկն Էմիլյա Ռուսևա Ժեկովան (երկրորդ դիմումատու, որը մահացել է 2018թ., տե՛ս Հավելվածը) եղել են ամուսիններ, իսկ պրն Ժեկո Ժիվկով Ժեկովը (երրորդ դիմումատու) առաջին դիմումատուի՝ նախկին ամուսնությունից ծնված որդին է:

42. Պլովդիվի շրջանային դատարանի 2008թ. հուլիսի 24-ի դատավճռով առաջին և երկրորդ դիմումատուները դատապարտվել են ծանրացնող հանգամանքներում փաստաթուղթ կեղծելու, կեղծիք կատարելու նախապատրաստության և համապատասխան սարքավորումների ու նյութերի տիրապետման համար: Առաջին դիմումատուն նույնպես դատապարտվել է հանցավոր խմբավորում կազմելու ու ղեկավարելու համար, իսկ երկրորդ դիմումատուն՝ այդ խմբավորման անդամ լինելու համար: Հաստատվել է այն հանգամանքը, որ 2007թ. հունվարից մինչև հունիսն ընկած ժամանակահատվածում երկու դիմումատուներն

ու նրանց հանցակիցները ստեղծել են անձը հաստատող կեղծ փաստաթղթեր և այլ պաշտոնական փաստաթղթեր, ինչպես նաև կեղծել են առկա փաստաթղթերը, այդ թվում՝ այլ երկրներում տրված փաստաթղթերը՝ ֆինանսական օգուտ ստանալու նպատակով:

43. 2008թ. Հանձնաժողովը 2005թ. Օրենքի շրջանակներում վարույթ է նախաձեռնել առաջին դիմումատուի դեմ, և 2009թ. սկզբում հայց է հարուցել Պլովդիվի շրջանային դատարան՝ պահանջելով բռնագանձել հետևյալ ակտիվները՝ Պլովդիվում գտնվող՝ 2002թ. առաջին դիմումատուի կողմից գնված բնակարանը, Պլովդիվում գտնվող՝ 2007թ. երրորդ դիմումատուի համար վերջինիս մոր կողմից գնված մյուս բնակարանը, 2002թ. և 2003թ. առաջին դիմումատուի կողմից գնված երկու ավտոմեքենաները, 2007թ. խուզարկության ժամանակ առաջին և երկրորդ դիմումատուների տնից առգրաված 14,400 եվրո և 730 ԱՄՆ դոլար կանխիկ գումարները, առաջին և երկրորդ դիմումատուների անունով բանկային հաշիվներին մուտք արված գումարները:

44. Բռնագանձման հայցը կազմվել էր 1985թ. հունվարի 1-ից մինչև 2008թ. դեկտեմբերի 31-ի կտրվածքով առաջին դիմումատուի ֆինանսական վիճակի, ինչպես նաև 1997թ. մարտի 1-ից մինչև 2008թ. դեկտեմբերի 31-ի կտրվածքով երկրորդ դիմումատուի ֆինանսական վիճակի առնչությամբ Հանձնաժողովի կատարած ստուգումների ու հսկիչ գործողությունների արդյունքում:

45. Պլովդիվի շրջանային դատարանը 2010թ. օգոստոսի 5-ի վճռով մերժել է բռնագանձման հայցը: Դատարանը գտել է, որ քանի որ առաջին դիմումատուն իրապես դատապարտվել է այնպիսի հանցանքի համար, որի վրա տարածվում է 2005թ. Օրենքի գործողությունը, և որ, ավելին, քննարկվող ժամանակահատվածում երեք դիմումատուները ձեռք են բերել զգալի արժեք ունեցող ակտիվներ, բռնագանձման նախապայմանները բավարարված չեն, որովհետև դիմումատուները փաստացի ներկայացրել են օրինական ծագում ունեցող բավականաչափ եկամուտների վերաբերյալ ապացույցներ՝ նման ակտիվներ ձեռք բերելու համար: Դրանք ներառել են առաջին դիմումատուի հաշմանդամության նպաստը, երկրորդ դիմումատուին վերջինիս ծնողների կողմից տրված գումարները, որի գյուղատնտեսական բիզնեսի մեջ նա ներգրավված է եղել, ինչպես նաև առաջին ու երկրորդ դիմումատուներին վերջիններիս հարսանիքի ժամանակ նվիրած գումարները և, հատկապես՝ առաջին դիմումատուի հոր կողմից երեք դիմումատուներին տրված գումարներն այն պայմաններում, որ առաջին դիմումատուի հայրն իր սեփական հորից ժառանգել էր զգալի թվով ակտիվներ:

46. Հանձնաժողովի կողմից վերաքննիչ բողոք բերելուց հետո Պլովդիվի վերաքննիչ դատարանը 2011թ. փետրվարի 18-ին անփոփոխ է թողել վերոնշյալ վճիռը: Այն

վերահաստատել է Պլովդիվի շրջանային դատարանի եզրահանգումը՝ հավելելով, որ ինչ վերաբերում է երկրորդ դիմումատուի կողմից վերջինիս ծնողների գյուղատնտեսական բիզնեսի մեջ ներգրավվելուն, ապա նույնիսկ եթե նրա ծնողները որպես գյուղատնտեսներ գրանցված չլինեին, ու իրենց հարկերը վճարած չլինեին, դա ինքնին չէր նշանակելու, որ երկրորդ դիմումատուի ստացած ցանկացած եկամուտ անօրինական է:

47. Հանձնաժողովը ներկայացրել է վճարեկ բողոք: Գերագույն դատարանը 2011թ. դեկտեմբերի 13-ի որոշմամբ այն վճարեկ վարույթ է ընդունել և 2012թ. մայիսի 4-ի վերջնական վճռով բավարարել է բռնագանձման հայցը՝ պարտավորեցնելով բռնագանձել վերոնշյալ բոլոր ակտիվները:

48. Գերագույն դատարանը նշել է, որ ստորին ատյանի դատարանները որպես ապացույց են ընդունել առաջին դիմումատուի հոր ստացած ժառանգությանը վերաբերող փաստաթղթերը՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք դիմումատուների կողմից տրամադրվել են դրանք ներկայացնելու համար նախատեսված համապատասխան ժամկետը լրանալուց հետո: Համապատասխանաբար, ապացույցը ճանաչվել է անընդունելի և ենթակա է եղել հեռացման գործի նյութերից:

49. Հիմք ընդունելով այդ ժառանգությանը վերաբերող մնացած ապացույցները՝ մասնավորապես՝ ընտանիքի անդամների կողմից տրված վկայի ցուցմունքները, որոնք եղել են հակասական ու նաև անհուսալի, ելնելով գործի ելքում նրանց ունեցած շահագրգռվածությունից, կարելի էր եզրակացնել, որ առաջին դիմումատուի հայրը փաստացի ի վիճակի է եղել տրամադրելու վիճարկվող ակտիվների ձեռքբերման կամ դիմումատուների օրական ծախսերի կատարման համար անհրաժեշտ գումարները: Ինչ վերաբերում է երկրորդ դիմումատուի ծնողների գյուղատնտեսական բիզնեսից ենթադրաբար ստացված եկամուտներին, ինչպես նաև առաջին ու երկրորդ դիմումատուների հարսանիքի ժամանակ որպես նվեր տրամադրված գումարներին, ապա դրանք չեն ապացուցվել որևէ փաստաթղթով, սակայն, կրկին պետք է նշել, որ դիմումատուները հիմնվել են ընտանիքի անդամների կողմից տրված վկայի ցուցմունքների վրա:

50. Ինչ վերաբերում է երրորդ դիմումատուի՝ Պլովդիվում գտնվող բնակարանին (տե՛ս վերևում 43-րդ պարբերությունը), ապա դա գնվել է 2004թ. առաջին դիմումատուի ծնողների կողմից, որոնք 2007թ. այն վաճառել են իրենց թոռանը: Վաճառքն իրականացնելիս նրան ներկայացրել է իր մայրը (առաջին դիմումատուի առաջին կինը): Այնուամենայնիվ, դիմումատուները չեն ապացուցել, որ երրորդ դիմումատուի մայրը բավարար միջոցներ է ունեցել բնակարանը գնելու համար, քանի որ նա չի ունեցել որևէ հայտարարագրված եկամուտ 1997թ. և 2008թ. միջև ընկած ժամանակահատվածում: Դիմումատուները չեն պնդել,

որ վաճառքի պայմանագիրը շինծու գործարք է, որով քողարկվում է նվիրատվությունը. ընդհակառակը, երրորդ դիմումատուն վիճարկել է՝ նշելով, որ իր մայրը վճարել է ամբողջ գումարը:

51. Համապատասխանաբար, առկա չի եղել որևէ ապացույց այն մասին, որ քննարկվող ժամանակահատվածում դիմումատուներն ունեցել են բավականաչափ օրինական եկամուտներ այն ակտիվները ձեռք բերելու համար, որոնք հայցվում էր բռնագանձել, ինչը նշանակում է, որ այդ ակտիվները ողջամտորեն կարող էին ենթադրվել որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ:

52. Համապատասխանաբար, պարզվել է, որ առաջին ու երկրորդ դիմումատուների տնից առգրավված 14,400 եվրոն և 730 ԱՄՆ դոլարը (տե՛ս վերևում 43-րդ պարբերությունը) արդեն իսկ բռնագանձված են եղել նրանց դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում: 2019թ. հուլիսի 8-ին Կառավարությունը ներկայացրել է Եկամուտների ազգային գործակալության կողմից տրամադրված տեղեկանք՝ պարզաբանելով, որ այն Պլովդիվի շրջանային դատարանին ու Գերագույն դատարանին տեղեկացրել է այդ մասին, ինչպես նաև այն մասին, որ քրեական վարույթի շրջանակներում պարտավորեցված երկու բռնագանձումներից կատարվել է միայն առաջինը:

53. Երկու բռնագանձված բնակարանները 2014թ. Եկամուտների ազգային գործակալության կողմից վաճառվել են երրորդ կողմին: Ինչ վերաբերում է բռնագանձված ավտոմեքենաներին, ապա դրանցից մեկը առաջին դիմումատուի կողմից ուղարկվել է մետաղաջարդոնի ընդունման կետ ու ապամոնտաժվել, իսկ մյուսը 2015թ. Եկամուտների ազգային գործակալության կողմից վաճառվել է: Գործակալությունը նաև ստացել է 16,425 բուլղարական լև (8,400 եվրո), որը պահվել է առաջին ու երկրորդ դիմումատուների բանկային հաշիվներում:

## V. ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 44845/15՝ ՌՈՒՍԵՎՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

54. Օմուրտագի համայնքային դատարանի՝ 2012թ. հունիսի 13-ի դատավճռով դիմումատուն (պրն Յուլիյան Վասիլև Ռուսև) դատապարտվել է ապօրինի ծառահատման համար այն հիմքով, որ 2009թ. հոկտեմբերին նա առանց համապատասխան թույլտվության կուտակել է 628 բուլղարական լև (321 եվրո) արժողությամբ անտառանյութ ու տեղափոխել իր ընկերության աշխատակիցների միջոցով: Պատիժը թողնվել է անփոփոխ 2012թ. սեպտեմբերի 4-ին Տարգովիշտեի շրջանային դատարանի կողմից և 2013թ. մարտի 4-ին՝ Գերագույն դատարանի կողմից: Դիմումատուի նկատմամբ որպես պատիժ նշանակվել է վեց ամիս ժամկետով պայմանական ազատազրկում և տուգանք:



55. Քանի որ 2005թ. Օրենքի գործողությունը տարածվել է այն հանցանքի վրա, որի կատարման համար դատապարտվել է դիմումատուն, 2012թ. նոյեմբերին Հանձնաժողովը հայց է ներկայացրել Դոբրիչի շրջանային դատարան՝ ակտիվների բռնագանձման պահանջով: Բռնագանձման հայցը կազմվել էր 1992թ. ապրիլի 16-ից (երբ լրացել է նրա 18 տարին) մինչև 2012թ. նոյեմբերի 28-ի կտրվածքով դիմումատուի եկամուտների ու ծախսերի նկատմամբ կատարված ստուգումների ու հսկիչ գործողությունների արդյունքում:

56. 2013թ. նոյեմբերի 29-ի վճռով Տարգովիշտեի շրջանային դատարանը մասնակիորեն բավարարել է հայցը: Այն պարտավորեցրել է բռնագանձել՝ Հանձնաժողովի հայցում մատնանշված որոշ, մասնավորապես՝ այն ակտիվները, որոնց արժեքը հավասար է դիմումատուի ծախսերի ու հաստատված օրինական եկամուտների միջև տարբերությանը (տե՛ս ստորև նշված 58-րդ պարբերությունը), իսկ հայցի մնացած մասը մերժել է: Այնուհետև, այն պարտավորեցրել է բռնագանձել հետևյալ ակտիվները՝ 2006թ. և 2011թ. միջև ժամանակահատվածում դիմումատուի կողմից գնված յոթ հողակտորները, որոնցից մեկի վրա կառուցված էր առանձնատուն, դիմումատուի կողմից մյուս այն տասներեք հողակտորների վաճառքից ստացված 17,473 բուլղարական լև (9,000 եվրո) գումարը, որոնց մեծամասնությունը նա սկզբնապես ձեռք էր բերել 2006 թվականին, ինչպես նաև դիմումատուի կողմից 2011թ. գնված ավտոմեքենան:

57. Քննարկվող ժամանակահատվածում դիմումատուի օրինական եկամուտները հաշվելիս Տարգովիշտեի շրջանային դատարանը մերժել է որպես այդպիսի եկամուտ համարել հետևյալը՝ (i) 22,300 բուլղարական լև (11,400 եվրո) գումարը, որն ինչ-որ մեկը 2006թ. և 2007թ. ենթադրաբար է փոխառությամբ տրամադրել դիմումատուին, քանի որ դա բավարար չափով չի ապացուցվել. (ii) 26,000 բուլղարական լև (13,300 եվրո) գումարը, որը դիմումատուի տատը ենթադրաբար նվիրել է նրան գույքի վաճառքից հետո՝ չպարզված օրը. եթե անգամ հաստատվել է այն հանգամանքը, որ նա այդպիսի գումար է ստացել, այնուամենայնիվ, այդ նվերը շարունակել է մնալ չապացուցված, և այդ առնչությամբ միակ ապացույցը եղել են նրա բանավոր հայտարարությունները. անհավանական է նաև, որ նա ամբողջ գումարը փոխանցած լիներ թոռանը, քանի որ նա ունեցել է այլ մտերիմ ազգականներ. (iii) 2005թ. և 2007թ. միջև ընկած ժամանակահատվածում ապօրինի ծառահատումից ստացված եկամուտները. դիմումատուն ներկայացրել է անտառանյութի վաճառքի պայմանագրեր, սակայն չի ապացուցել, որ այդ փաստաթղթերն իրականում կնքված են եղել համապատասխան պահի դրությամբ, կամ այն հանգամանքը, թե ինչ շահույթ է ինքը ստացել. այդ ժամանակ նա որևէ նման շահույթի վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացրել հարկային մարմիններ. (iv) 110,000 բուլղարական լև (56,260 եվրո) գումարը,

որը դիմումատուն 2012թ. վերջում ներկայացված հարկային հայտարարագրում հայտարարագրել է որպես 2007թ. ձեռք բերած եկամուտ, որը ստացվել է իրեն մասնակիորեն սեփականությամբ պատկանող ընկերության գործունեությունից. ըստ դատարանի՝ առկա չի եղել ապացույց այն մասին, որ դիմումատուն փաստացի ստացել է այդ եկամուտը, իսկ բռնագանձման վարույթի հարուցումից հետո ներկայացված հարկային հայտարարագիրն ակնհայտորեն նախատեսված է եղել այդ վարույթի շրջանակներում որպես ապացույց օգտագործվելու համար:

58. Քննարկվող ժամանակահատվածում դիմումատուի ծախսերը հաշվելուց հետո Տարգովիշտեի շրջանային դատարանը եզրակացրել է, որ դրանք գերազանցել են դիմումատուի օրինական եկամուտները 53,382 բուլղարական լևով (27,300 եվրոյով), որը համարժեք է «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 337,9-պատիկին: Դրանով հիմնավորվել է այն ակտիվների բռնագանձումը, որոնք համարժեք են «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի միևնույն բազմապատիկին, մասնավորապես՝ վերևում նշված 56-րդ պարբերությամբ սահմանված ակտիվների արժեքին:

59. Տարգովիշտեի շրջանային դատարանը եղել է այն կարծիքին, որ բռնագանձման ենթակա ակտիվները ձեռք են բերվել հանցավոր գործունեությունից ստացված եկամտի հաշվին ուստի, համարվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Այդ առնչությամբ այն վկայակոչել է հետևյալը՝ մինչև 1998թ. դիմումատուն չի ունեցել որևէ օրինական եկամուտ. 2000թ. և 2005թ. միջև ընկած ժամանակահատվածում նա աշխատել է տեղական անտառտնտեսական մարմնում և 2006թ. կրկին չի ունեցել որևէ օրինական եկամուտ. ակնհայտ է, որ 2006թ. և 2007թ. նա գնել է գույքի մի շարք միավորներ, որոնցից մի մասը նա այնուհետև փոխանցել է երրորդ կողմին. նա դատապարտվել է ապօրինի ծառահատման համար (տե՛ս վերևում 54-րդ պարբերությունը) և իր ամբողջ աշխատանքային գործունեության ընթացքում գործել է անտառտնտեսության և ծառահատման ոլորտներում:

60. Դիմումատուի կողմից վերաքննիչ բողոք բերելուց հետո՝ 2014թ. հուլիսի 9-ին, Վառնայի վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողել Տարգովիշտեի շրջանային դատարանի վճիռը: Անդրադառնալով Գերագույն դատարանի 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմանը (տե՛ս ստորև նշված 105-105-րդ պարբերությունները)՝ այն մատնանշել է, որ բռնագանձման ենթակա ակտիվների և դիմումատուի հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապը կարող էր լինել անուղղակի, և գտել է, որ նման անուղղակի կապի առկայությունը հաստատվել է այն նույն հիմքերով, որոնցով այն հաստատվել է Տարգովիշտեի շրջանային դատարանի կողմից: Քանի որ դրանով շոշափվել է հանցավոր

գործունեությունը, ապա նշանակություն չի ունեցել այն հանգամանքը, որ կոնկրետ այն հանցագործության առարկան, որի կատարման համար դատապարտվել է դիմումատուն, հարաբերականորեն ցածր արժեք է ունեցել: Վառնայի վերաքննիչ դատարանը հաստատել է Շրջանային դատարանի եզրահանգումները (տե՛ս վերևում 59-րդ պարբերությունը) այն մասին, որ դիմումատուն չի ունեցել որևէ այլ օրինական եկամուտ: Անդրադառնալով իր կողմից պահանջված լրացուցիչ փորձագիտական եզրակացությանը՝ Վառնայի վերաքննիչ դատարանը գտել է, որ քննարկվող ժամանակահատվածում դիմումատուի ծախսերը գերազանցել են նրա օրինական եկամուտները 61,446 բուլղարական լևով (31,340 եվրոյով), որը համարժեք է «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 451,73-պատիկին:

61. Դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2015թ. մարտի 5-ի վերջնական որոշմամբ թողնվել է առանց քննության: Այն, մասնավորապես, գտել է, որ ստորին ատյանի դատարանները ճիշտ են կիրառել 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմամբ սահմանված չափորոշիչը:

62. Բռնագանձման ենթակա անշարժ գույքի միավորների մեծ մասը Եկամուտների ազգային գործակալության կողմից վաճառվել է երրորդ կողմին 2016թ. և 2017թ.: Դրանցից մեկը, որի նկատմամբ հիպոթեք էր սահմանված, երրորդ կողմի կողմից դիմումատուի դեմ նախաձեռնած կատարողական վարույթի շրջանակներում դրվել է աճուրդի: Դիմումատուի ավտոմեքենան, որը նույնպես պարտավորեցվել էր բռնագանձել, գողությանը հափշտակվել էր 2015թ.:

63. Այն գումարը, որը դիմումատուն պարտավորեցվել էր վճարելու բռնագանձման վարույթի շրջանակներում, կազմել է 21,309 բուլղարական լև (10,900 եվրո) և չի վճարվել:

## VI. ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 17238/16՝ ԿԱՑԱՐՈՎՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒՆԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

64. Չպարզված օրը դիմումատուին (պրն Կիրիլ Հրիստով Կացարովին) առաջադրվել է մեղադրանք՝ այն թմրամիջոցների անօրինական տիրապետման առնչությամբ, որոնք առգրավվել են նրա ավտոմեքենաներից ու բնակարանից 2000թ. օգոստոսի 25-ին և 2001թ. օգոստոսի 18-ին: Այդ առիթներով առգրավված թմրամիջոցների ընդհանուր արժեքը կազմել է մոտ 650 բուլղարական լև, որը համարժեք է 332 եվրոյին:

65. 2007թ. դիմումատուն համաձայնեցման վարույթով համաձայնություն է կնքել քրեական հետապնդման մարմինների հետ՝ ընդունելով այն փաստը, որ կատարել է թմրամիջոցների անօրինական տիրապետման երեք հանցագործություն, այդ թվում՝ իրացման նպատակով: Նրա նկատմամբ սահմանվել է ազատազրկման ձևով պատիժ, և նա

պարտավորեցվել է վճարելու տուգանք: Համաձայնեցման վարույթով համաձայնությունը հաստատվել է 2008թ. հունվարի 15-ին Բուրգասի շրջանային դատարանի կողմից:

66. Քանի որ 2005թ. Օրենքի գործողությունը տարածվել է այն հանցանքների վրա, որոնց կատարման համար դատապարտվել է դիմումատուն, 2010թ. սկզբում Հանձնաժողովը հայց է ներկայացրել Սոֆիայի քաղաքային դատարան՝ հետևյալ ակտիվների բռնագանձման պահանջով. 2008թ. դիմումատուի կողմից Սոֆիայում գնված բնակարանը, որի նկատմամբ նախնական պայմանագիր էր կնքվել 2002 թվականին, 20,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարը, որը դիմումատուն վճարել էր 2002թ. քննարկվող նախնական պայմանագրի կնքմամբ, երկու ավտոմեքենաները, դիմումատուի կողմից երկու այլ ավտոմեքենաների վաճառքից ստացված գումարը:

67. Բռնագանձման հայցը կազմվել էր 1990թ. հոկտեմբերի 20-ից (երբ լրացել է նրա 18 տարին) մինչև 2008թ. դեկտեմբերի 31-ի կտրվածքով դիմումատուի եկամուտների ու ծախսերի նկատմամբ Հանձնաժողովի կատարած ստուգումների ու հսկիչ գործողությունների արդյունքում:

68. 2014թ. մարտի 12-ի իր վճռով Սոֆիայի քաղաքային դատարանը բավարարել է բռնագանձման հայցը: Դատարանը գտել է, որ քննարկվող ժամանակահատվածում դիմումատուն ունեցել է օրինական ծագում ունեցող բավականին քիչ եկամուտներ և աշխատավարձ է ստացել միայն 2005թ. և 2008թ. միջև ընկած ժամանակահատվածում: Հետևաբար, նրա եկամուտները համարժեք են եղել «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 222,58-պատիկին, իսկ ծախսերը համարժեք են եղել «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 3,262,63-պատիկին: Սոֆիայի քաղաքային դատարանը չի ընդունել դիմումատուի պնդումն այն մասին, որ նրա ծնողներն են նրա ապրուստը հոգացել՝ նշելով, որ նրանց սեփական եկամուտները բավականին քիչ են եղել: Ինչ վերաբերում է ծախսերին, ապա դատարանը հաշվի է առել դիմումատուի կողմից ձեռք բերված բնակարանի ու ավտոմեքենաների շուկայական արժեքները և ոչ թե վաճառքի համապատասխան փաստաթղթերում նշված արժեքները:

69. Սոֆիայի քաղաքային դատարանը մատնանշել է նաև, որ անհրաժեշտ է պատճառահետևանքային կապ հաստատել ոչ թե ակտիվների (որոնք հայցվում էր բռնագանձել) ու կոնկրետ այն հանցագործությունների միջև, որոնց կատարման համար դատապարտվել է դիմումատուն, այլ այդ ակտիվների ու նրա «հանցավոր գործունեության» միջև: Այդպիսի պատճառահետևանքային կապի առկայությունը զուտ ենթադրվել է 2005թ. Օրենքի շրջանակներում, քանի որ չի մատնանշվել եկամտի որևէ այնպիսի օրինական աղբյուր, որից ստացվող միջոցները համարժեք կլինեին դիմումատուի ծախսերին: Ինչ

վերաբերում է հանցավոր գործունեության առկայության փաստին, ապա էական նշանակություն է ունեցել այն հանգամանքը, որ դիմումատուն դատապարտվել է եռակի կատարված՝ թմրամիջոցների անօրինական տիրապետման համար, այդ թվում՝ իրացման նպատակներով (տե՛ս վերևում 64-րդ և 65-րդ պարբերությունները): Դա ավելի քան ենթադրում է այնպիսի գործունեություն, որը «թույլ է տալիս զգալի ֆինանսական օգուտ» ստանալ:

70. Դիմումատուի կողմից վերաքննիչ բողոք ներկայացվելուց հետո՝ 2015թ. հունվարի 30-ին, Սոֆիայի վերաքննիչ դատարանը մասնակիորեն անփոփոխ է թողել ստորին ատյանի դատարանի վճիռը՝ մերժելով դիմումատուի կողմից 2002թ. վճարված 20,000 ԱՄՆ դոլարի վերաբերյալ բռնագանձման հայցը (տե՛ս վերևում 66-րդ պարբերությունը) այն հիմքով, որ դա փաստացի եղել է բռնագանձված բնակարանի գումարը: Ուստի, այն բավարարել է դիմումատուի հայցը, որը հիմնավորված է եղել վաճառողի վկայություններով այն մասին, որ դա եղել է բնակարանի իրական գինը: Դատարանը հերքել է Հանձնաժողովի փաստարկն այն մասին, որ այն, ինչը պետք է հաշվի առնվի նրա ծախսերը հաշվելիս, գույքի շուկայական արժեքն է:

71. Սոֆիայի վերաքննիչ դատարանը վերահաստատել է ստորին ատյանի դատարանի եզրակացությունն այն մասին, որ առկա չի եղել ապացույց այն մասին, թե դիմումատուն գումար է ստացել իր ծնողներից (տե՛ս վերևում 68-րդ պարբերությունը): Նրանք չեն ունեցել այնքան եկամուտ, որը նրանց թույլ կտար հոգալ նրա ապրուստը, և անգամ ունենալու դեպքում էլ առկա չի եղել ապացույց այն մասին, որ նրանք դա արել են: Դիմումատուի կողմից կանչված վկաները՝ նրա մայրը և քույրը, ի հավելումն գործի ելքում ունեցած շահագրգռվածության՝ տվել են հակասական ցուցմունքներ: Դիմումատուի մայրը պնդել է, որ նա դիմումատուի բնակարանը գնելու համար բանկից գումար է կանխիկացրել, սակայն նշվածը չի հաստատել որևէ փաստաթղթով: Չի ապացուցվել նաև, որ, ինչպես պնդել են դիմումատուի մայրն ու քույրը, դիմումատուն եկամուտ է ստացել տաքսի ծառայությունում որպես վարորդ աշխատելուց և իր ծնողների բանջարանոցում աշխատելուց:

72. Սոֆիայի վերաքննիչ դատարանը նշել է, որ 1990թ. և 2004թ. միջև ընկած ժամանակահատվածում դիմումատուն չի ունեցել օրինական ծագում ունեցող որևէ եկամուտ՝ բացի երկու ավտոմեքենաների վաճառքից ստացված գումարից, և աշխատավարձ է ստացել միայն 2005թ. և 2009թ. միջև ընկած ժամանակահատվածում: Վերջինիս ընթացքում նա գումար է ստացել նաև ընտանիքին պատկանող հողատարածքի վաճառքից: Քննարկվող ամբողջ ժամանակահատվածում նրա եկամուտները, հետևապես, կազմել են «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 222,58-պատիկը, իսկ ծախսերը, որոնք

վերահաշվարկվել են վերաքննիչ դատարանի կողմից սահմանված բնակարանի գինը հաշվի առնելու համար (տե՛ս վերևում 70-րդ պարբերությունը), կազմել են «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի 2,971,94-պատիկը:

73. Ինչ վերաբերում է դիմումատուի հանցավոր գործունեության և այն ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությանը, որոնք հայցվում էր բռնագանձել, ապա Սոֆիայի վերաքննիչ դատարանը մատնանշել է, որ քննարկվող հանցավոր գործունեությամբ հնարավոր էր, որ գոյանային եկամուտներ: Դիմումատուն ընդունել է իր կողմից թմրամիջոցների տիրապետման փաստը՝ իրացման նպատակներով (տե՛ս վերևում 65-րդ պարբերությունը), ուստի, դրանք չի պահել սեփական օգտագործման նպատակների համար: Ավելին, նա իր բնակարանի համար վճարումը կատարել է այն ժամանակ, երբ նախնական պայմանագիր է կնքել 2002թ. (տե՛ս վերևում 66-րդ պարբերությունը), այսինքն՝ մոտավորապես այն նույն ժամանակ, երբ կատարել է այն հանցագործությունները, որոնց համար դատապարտվել է: Հետևապես, նա որևէ օրինական եկամուտ չի ունեցել բռնագանձման ենթակա ակտիվները ձեռք բերելու համար, ուստի, դրանք պետք է համարվեին հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ:

74. Դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2015թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ թողնվել է առանց քննության: Վկայակոչելով իր՝ 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշումը (տե՛ս ստորև 105-106-րդ պարբերությունները)՝ դատարանը մատնանշել է, որ Սոֆիայի վերաքննիչ դատարանը լիովին պահպանել է դրանով նախատեսված չափորոշիչը:

75. Դիմումատուի բնակարանը եկամուտների ազգային գործակալության կողմից 2017թ. վաճառվել է երրորդ կողմին: Բռնագանձված ավտոմեքենաներից մեկը հնարավոր չի եղել գտնել, իսկ մյուսն ուղարկվել է մետաղաջարդոնի ընդունման կետ: Այն գումարը, որը դիմումատուն պարտավորեցվել էր վճարելու բռնագանձման վարույթի շրջանակներում, չի վճարվել:

**VII. ԳԱՆԳԱՏ ԹԻՎ 63214/16՝ ԴԻՄԻՏՐՈՎՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ**

76. Դիմումատուն (պրն Դիմիտար Գենչև Դիմիտրով) զբաղվել է առևտրային գործունեությամբ՝ որպես անհատ ձեռներեց:

77. 2002թ.՝ ֆինանսական աուդիտ իրականացնելուց հետո, հարկային մարմինները պարտավորեցրել են նրան վճարելու 597,154 բուլղարական լև (305,370 եվրո), որը կազմել է չվճարված հարկերի գումարը: Չնայած 2002թ. նրա դեմ հարուցվել է կատարողական վարույթ, այնուամենայնիվ, որևէ գումար չի գանձվել: 2015թ. եկամուտների ազգային

գործակալությունը հայտարարել է, որ 2002թ. հարկային աուդիտի շրջանակներում դիմումատուի ունեցած պարտավորության հայցային վաղեմության ժամկետը լրացել է:

78. Միևնույն ժամանակ, դիմումատուին մեղադրանք է առաջադրվել միևնույն փաստերի հիմքով, և նա կանգնել է դատարանի առջև՝ հարկերից խուսափելու մեղադրանքով: Նա դատապարտվել է Վառնայի շրջանային դատարանի 2010թ. մայիսի 12-ի դատավճռով, որը վերջնական է դարձել 2010թ. մայիսի 28-ին: Դատարանը նշել է, որ նա մի քանի հարկային հայտարարագրերի շրջանակներում կեղծ տեղեկություններ է ներկայացրել համապատասխան մարմիններին 2000թ. դեկտեմբերի և 2001թ. մայիսի միջև ընկած ժամանակահատվածում՝ դրանով իսկ խուսափելով իր առևտրային գործունեության առնչությամբ ավելացված արժեքի հարկի վճարումից, որը կազմել է 294,897 բուլղարական լև (150,842 եվրո):

79. Քանի որ 2005թ. Օրենքի գործողությունը տարածվել է այն հանցանքի վրա, որի կատարման համար դատապարտվել է դիմումատուն, 2011թ. հուլիսին Հանձնաժողովը հայց է ներկայացրել Վառնայի շրջանային դատարան՝ նրա ակտիվների բռնագանձման պահանջով: Հանձնաժողովը գտել է, որ այն հարկերի գումարը, որոնց վճարումից խուսափել էր դիմումատուն, բավարար օրինական եկամուտների բացակայության հանգամանքի հետ միասին ենթադրում է պատճառահետևանքային կապի առկայություն քննարկվող ակտիվների և այն հանցագործության միջև, որի կատարման համար նա դատապարտվել էր:

80. Բռնագանձման հայցը կազմվել էր 1999թ. հունվարի 1-ից մինչև 2010թ. դեկտեմբերի 31-ի կտրվածքով դիմումատուի ֆինանսական վիճակի նկատմամբ կատարված ստուգումների ու հսկիչ գործողությունների արդյունքում:

81. Վառնայի շրջանային դատարանը 2015թ. փետրվարի 24-ի վճռով մերժել է հայցը: Այն հանգել է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չի ապացուցել պատճառահետևանքային կապի առկայությունը դիմումատուի կատարած հանցագործության և այն ակտիվների միջև, որոնք հայցվում էր բռնագանձել, և որ, միևնույն ժամանակ, դիմումատուն բավարար օրինական եկամուտներ է ունեցել այդ ակտիվները ձեռք բերելու համար: Վերջինիս պարագայում, դատարանը, մասնավորապես, գտել է, որ դիմումատուն՝ իր պնդմամբ, գումար է ստացել իր ծնողներից և իր զուգընկերոջից ու նրա ծնողներից, և որ նա անշարժ գույքի որոշակի միավորներ է ձեռք բերել այն գնով, որը մատնանշված է համապատասխան նոտարական փաստաթղթերում (որը զգալիորեն ավելի ցածր է եղել, քան այն գինը, որը մատնանշվել է որպես շուկայական արժեք)՝ գույքի միավորները շատ ավելի բարձր գնով վերավաճառելուց անմիջապես հետո ստանալով զգալի օգուտներ:

82. 2015թ. հոկտեմբերի 27-ին Վառնայի վերաքննիչ դատարանը բեկանել է ստորին աստիճանի դատարանի վճիռը և պարտավորեցրել է բռնագանձելու հետևյալ ակտիվները՝ 2007թ. դիմումատուի կողմից գնված հողակտորը և շենքը, որոնց շուկայական արժեքը՝ վերաքննիչ դատարանի վկայակոչմամբ փորձագիտական եզրակացության համաձայն, կազմել է 26,882 բուլղարական լև (13,750 եվրո)՝ գնումը կատարելու պահին, Վառնայում գտնվող բնակարանը, որը դիմումատուի կողմից գնվել էր 2008թ. և, մինչույն ժամանակ, ծառայում էր որպես նրա ընտանիքի հիմնական բնակատեղի ու կայանատեղի, 117,300 բուլղարական լև (60,000 եվրո) գումարը, որը համարժեք է մի քանի ընկերություններում ունեցած այն բաժնետոմսերի դրամական արտահայտությանը, որոնք ձեռք են բերվել դիմումատուի կողմից 2008թ. և 2010թ. միջև ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև 2010թ. այլ բաժնետոմսերի վաճառքից ստացված 4,500 բուլղարական լև (2,300 եվրո) գումարը, բացի դրանից 165,000 բուլղարական լև (84,400 եվրո) գումարը, որը դիմումատուն ստացել էր 2008թ. և 2010թ. անշարժ գույքի երկու միավորների այն վաճառքից, որն իրականացվել էր դրանք ձեռք բերելուց անմիջապես հետո, ինչպես նաև 55,000 բուլղարական լև (28,130 եվրո) գումարը, որը ենթադրում էր դիմումատուի կողմից 2007թ. և 2008թ. գնված ու դրանից անմիջապես հետո երրորդ կողմին վերավաճառված երկու ավտոմեքենաների շուկայական արժեքը:

83. Վառնայի վերաքննիչ դատարանը նշել է, որ առկա չէ ապացույց այն մասին, որ դիմումատուն պետությանը վճարել է այն հարկի գումարը, որի վճարումից խուսափել էր 2001թ. (տե՛ս վերևում 78-րդ պարբերությունը): Դատարանն այնուհետև նկատել է, որ դիմումատուն առնչություն է ունեցել «հանցավոր գործունեության» հետ, քանի որ ունեցել է դատվածություն՝ հատկապես փաստաթղթեր կեղծելու և հափշտակված իրերի տիրապետման մասով, իսկ տվյալ պահին ներգրավված է հարկերից խուսափելու նոր քրեական վարույթի մեջ:

84. Ինչ վերաբերում է քննարկվող ժամանակահատվածում դիմումատուի եկամուտներին ու ծախսերին, ապա Վառնայի վերաքննիչ դատարանի կողմից արվել են մի քանի դիտարկումներ: Առաջին, թեև այս առանձին ժամանակահատվածներում դիմումատուն վճարել է սոցիալական ապահովագրության վճարներ, այնուամենայնիվ, առկա չեն բավարար ապացույցներ այն մասին, որ այս ժամանակահատվածում նա ստացել է որևէ եկամուտ: Ավելին, դիմումատուի կողմից վկայակոչված մյուս եկամուտների, այդ թվում՝ խաղադրույքներից ստացված շահումների առկայությունը ևս չի ապացուցվել: 2004թ. և 2006թ. միջև ընկած ժամանակահատվածում և 2010թ. դիմումատուն որևէ օրինական եկամուտ չի ունեցել: Երկրորդ, առկա չի եղել ապացույց այն մասին, որ դիմումատուն՝ իր



պնդմամբ, ստացել է զգալի չափով գումարներ իր ծնողներից, քանի որ նրանց սեփական եկամուտներն անբավարար են եղել: Ինչ վերաբերում է դիմումատուի պնդմամբ վերջինիս կողմից իր զուգընկերոջից ու նրա ծնողներից ստացած գումարին (տե՛ս վերևում 81-րդ պարբերությունը), ապա այդ առնչությամբ վկայի ցուցմունքները եղել են հակասական, իսկ դիմումատուի պնդումները եղել են ոչ համոզիչ: Երրորդ, ինչ վերաբերում է դիմումատուի կողմից գնված և այնուհետև վերավաճառված անշարժ գույքի միավորներին, ապա այս գնումների առնչությամբ պետք է հաշվի առնվեր դրանց շուկայական արժեքը, այլ ոչ թե նոտարական փաստաթղթերում մատնանշված շատ ավելի ցածր արժեքը: Դա նշանակում է, որ այն ավելի բարձր գները, որոնցով դիմումատուն վերավաճառել էր այդ գույքի որոշ միավորներ դրանք ձեռք բերելուց անմիջապես հետո, չէին կարող համարվել որպես օրինական ծագում ունեցող օգուտներ: Չորրորդ, նույնիսկ եթե ապացուցվեր այն հանգամանքը, որ դիմումատուն շահաբաժիններ է ստացել այն ընկերություններից, որոնցում բաժնետոմսեր է ունեցել, այնուամենայնիվ, նման շահաբաժինների զուտ վճարումը մատնանշվել է որպես 2011թ. կատարված վճարում, ինչը քննարկվող ժամանակահատվածից դուրս է (տե՛ս վերևում 80-րդ պարբերությունը):

85. Վերոնշյալ նկատառումներով Վառնայի վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ առկա չէ ապացույց այն մասին, որ դիմումատուն ունեցել է եկամտի այնպիսի օրինական աղբյուր, ինչը նրան հնարավորություն կտար ձեռք բերել այն ակտիվները, որոնք հայցվում էր բռնագանձել, մինչդեռ պարզվել է, որ տվյալ ակտիվները ձեռք են բերվել այն գումարներով, որոնցով նա 2001թ. խուսափել էր հարկերի վճարումից (տե՛ս վերևում 78-րդ պարբերությունը), կամ այն ակտիվների վաճառքից հետո, որոնք սկզբնապես ձեռք էին բերվել այդ գումարներով: Ամեն դեպքում, փաստացի դիմումատուն իր տիրապետման տակ ունեցել է զգալի չափով գումար՝ օրինական եկամուտների բացակայության պայմաններում: Ուստի, հիմնվելով «տրամաբանության ու փորձառության վրա», կարող էր ենթադրվել պատճառահետևանքային կապի առկայություն բռնագանձման ենթակա ակտիվների ու այն հանցագործության միջև, որի կատարման համար դիմումատուն դատապարտվել էր:

86. Գերագույն դատարանը 2016թ. ապրիլի 21-ի վերջնական որոշմամբ դիմումատուի ներկայացրած վճարեկ բողոքը թողել է առանց քննության: Մասնավորապես, այն գտել է, որ Վառնայի վերաքննիչ դատարանը ճիշտ է որոշել պատճառահետևանքային կապի առկայությունը բռնագանձման ենթակա ակտիվների ու այն հանցագործության միջև, որը հիմք էր հանդիսացել բռնագանձման վարույթի հարուցման համար, ինչպես սահմանված է 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմամբ (տե՛ս ստորև 105-106-րդ պարբերությունները):

87. Վառնայի շրջանային դատարանը 2017թ. հունվարի 6-ի որոշմամբ մերժել է դիմումատուի կողմից 2008թ. գնված և 2009թ. երրորդ կողմին վաճառված ավտոմեքենայի բռնագանձման վերաբերյալ Հանձնաժողովի լրացուցիչ հայցը: 2017թ. ապրիլի 4-ին Վառնայի վերաքննիչ դատարանը բեկանել է այդ որոշումը և պարտավորեցրել է բռնագանձելու 21,972 բուլղարական լև (11,240 եվրո) գումարը, որն ըստ փորձագիտական գնահատման 2009թ. կտրվածքով կազմել է ավտոմեքենայի շուկայական արժեքը: Դատարանը վերահաստատել է իր՝ ավելի վաղ կատարած եզրահանգումն այն մասին, որ ավտոմեքենան գնելիս դիմումատուն որևէ օրինական եկամուտ չի ունեցել՝ գտնելով, որ փոխարենը նա օգտագործել է վերևի 82-րդ պարբերության մեջ մատնանշված գույքի միավորների վաճառքից ստացված գումարները, այն է՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները: Գերագույն դատարանը 2018թ. փետրվարի 20-ի վերջնական որոշմամբ դիմումատուի ներկայացրած վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

88. 2018թ. բռնագանձված հողակտորը և շենքը եկամուտների ազգային գործակալության կողմից վաճառվել են երրորդ կողմին՝ 4,680 բուլղարական լև (2,390 եվրո) գումարի դիմաց:

89. Բռնագանձված բնակարանը դեռևս գտնվում է դիմումատուի տիրապետման տակ: Այն գումարը, որը դիմումատուն պարտավորեցվել էր վճարելու բռնագանձման վարույթի շրջանակներում, չի վճարվել:

## ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ

### I. 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕՐԵՆՔԸ

#### Ա. Օրենսդրական հիմքը

90. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձման մասին» 2005թ. օրենքը ([բուլղարերենից թարգմ.]՝ «Հանցավոր ճանապարհով ստացված գույքի՝ հոգուտ պետության բռնագանձման մասին» օրենք, «2005թ. Օրենք») Պառլամենտի կողմից ընդունվել է 2005թ. փետրվարին և ուժի մեջ է մտել նույն թվականի մարտին: 2012թ. այն փոխարինվել է «Անօրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնագանձման» մասին 2012թ. օրենքով ([բուլղարերենից թարգմ.]՝ «Անօրինական ճանապարհով ձեռք բերված գույքի՝ հոգուտ պետության բռնագանձման մասին» օրենք)՝ պայմանով, որ տվյալ պահին քննության փուլում գտնվող բոլոր վարույթների վրա շարունակելու է տարածվել 2005թ. Օրենքի գործողությունը:

91. 2005թ. Օրենքի վերաբերյալ ընդունված բացատրական հուշագրով նախատեսվել է, որ այն ուղղված է «հանցավոր ճանապարհով եկամուտներ ստանալու հնարավորությունները վերացնելուն և նոր հանցանքների կատարման համար այդպիսի եկամուտների օգտագործումն ու օրենքի մյուս խախտումները կանխելուն», և որ այն որոշիչ դեր կարող է խաղալ փողերի լվացման դեմ պայքարում, ինչպես նաև կարող է կիրառվել այն դեպքում, «երբ որոշակի ակտիվներ համարվեն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, սակայն Քրեական օրենսգրքի շրջանակներում հնարավոր չլինի դրանք ամբողջությամբ կամ մասնակիորեն բռնագանձվել»: Դրանում, այնուհետև պարզաբանվում է, որ՝

«Օրենքով թիրախավորվում են այն ակտիվները, որոնք ենթակա չեն քննության քրեական վարույթի շրջանակներում, ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ հանցավոր գործունեության ոչ բոլոր տեսակները կարող են սահմանվել Քրեական դատավարության օրենսգրքով: Միևնույն ժամանակ, լինում են դեպքեր, երբ մարդկանց որոշ ակտիվներ զգալիորեն ավելանում են առանց օրինական գործունեության վերաբերյալ որևէ նշում կատարելու: Նման իրավիճակ առաջանալու դեպքում, այն է՝ մի կողմից՝ դատապարտում, մյուս կողմից՝ օրինական ծագում չունեցող, սակայն զգալի արժեք ունեցող ակտիվների առկայության պարագայում, սկսում է գործել այս Օրենքով սահմանված ընթացակարգը: Ողջամիտ ենթադրություն կարելի է կատարել այն մասին, որ քննարկվող ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են, սակայն անձը հնարավորություն ունի հիմնավորելու իր ակտիվների ծագումն ու իրականացնելու իր պաշտպանությունը:»

**Բ. 2005թ. Օրենքի գործարկման համար պատասխանատու մարմինը**

92. 2005թ. Օրենքի շրջանակներում վարույթ նախաձեռնելու ու իրականացնելու համար պատասխանատու մարմինը եղել է Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հայտնաբերման հարցերով հանձնաժողովը, ներկայիս՝ Կոռուպցիայի դեմ պայքարի և անօրինական ճանապարհով ձեռք բերված ակտիվների բռնագանձման հարցերով հանձնաժողովը (Հանձնաժողովը): Այն բաղկացած է հինգ անդամներից, որոնք նշանակվում են Բուլղարիայի նախագահի, վարչապետի և պառլամենտի կողմից: Հանձնաժողովն ունի շրջանային գրասենյակներ:

**Գ. Գործողության ոլորտը**

93. 2005թ. Օրենքի շրջանակներում վարույթ կարող էր հարուցվել այն դեպքում, երբ պարզվեր, որ համապատասխան հանցագործության մեջ մեղադրվող անձը (տե՛ս ստորև 95-րդ պարբերությունը) ձեռք է բերել «զգալի արժեք ունեցող ակտիվներ, որոնք [կարելի էր]

որջամտորեն ենթադրել, որ համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ» (հոդված 3(1)):

94. «Ձգալի արժեք» եզրույթը սահմանված է եղել Օրենքի անցումային և եզրափակիչ դրույթների հոդված 1(2)-ով և ենթադրում է ավելի քան 60,000 բուլղարական լև (30,677 եվրոյին համարժեք) գումար: Գերագույն դատարանի պնդմամբ՝ դա համարվել է քննարկվող ժամանակահատվածում ձեռք բերված ակտիվների հանրագումարային արժեքը, մինչդեռ հնարավոր է, որ այս ակտիվներից ոչ բոլորն են ենթակա եղել բռնագանձման (*[բուլղարերենից թարգմ.] Թիվ 463/2010 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 28-ի թիվ 463 վճիռը, III քաղաքացիական պալատ*): Հետևաբար, «զգալի արժեք» ունեցող ակտիվների ձեռքբերումը ծառայել է զուտ որպես պայման բռնագանձման վարույթ հարուցելու, այլ ոչ թե որպես պայման բռնագանձման ենթակա ակտիվները որոշելու համար, և անհրաժեշտ է եղել կատարելու առանձին վերլուծություն՝ որոշելու համար, թե արդյո՞ք բռնագանձման նախապայմանները բավարարված են, թե՞ ոչ (տե՛ս *Թիվ 99/2012 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2013թ. ապրիլի 23-ի թիվ 481 վճիռը, IV քաղաքացիական պալատ*):

95. Այն հանցագործությունները, որոնք կարող էին առիթ հանդիսանալ 2005թ. Օրենքի շրջանակներում վարույթի հարուցման համար, սահմանված են եղել հոդված 3(1)-ով: Դրանք են՝ տարբեր տեսակի ահաբեկչական հանցագործությունները, շահույթի դիմաց կամ պատվերով սպանությունը, կավատությունը, մարմնավաճառության նպատակներով առևանգումը, պոռնկագրական նյութերի տարածումը, մարդու թրաֆիքինգը, փոխադրամիջոցի՝ գողությամբ կամ ավազակությամբ հափշտակությունը, յուրացումը, խարդախությունը, փաստաթղթերի խարդախությունը՝ ներառելով Եվրոպական միության միջոցների հափշտակությունը, ապահովագրական խարդախությունը, շորթումը, խոշոր չափերով հափշտակված իրերի շրջանառությունը, անվճարունակության մասով խարդախությունը, առանց լիցենզիայի զենքի կամ երկակի օգտագործման իրերի տնօրինումը, ապօրինի ծառահատումը, մաքսանենգությունը, փողերի կեղծումը, անօրինական բանկային փոխանցումներ կատարելը, պետական սահմանին դրամական միջոց չհայտարարագրելը, առանց լիցենզիայի բանկային, ապահովագրական կամ այլ լիցենզավորվող ֆինանսական գործունեությամբ զբաղվելը, փողերի լվացումը կամ փողերի լվացում կատարելու նախապատրաստությունը, Եվրոպական միության միջոցների չարաշահումը, հարկերից խուսափելը, բյուջետային միջոցների հափշտակությունը, թմրամիջոցների առնչությամբ պաշտոնեական դիրքի չարաշահումը, կաշառակերության բոլոր ձևերը, սպորտային իրադարձությունների վրա անօրինական ներգործություն ունենալը,

ծանրացնող հանգամանքներում փաստաթուղթ կեղծելը, որպես հանցավոր խմբավորման անդամ հանդես գալը, հանցավոր խմբավորում վարելը, անօրինական մոլախաղեր կազմակերպելը կամ դրանցում մասնակցություն ունենալը, առանց լիցենզիայի զենք կամ պայթուցիկ նյութեր տնօրինելը, ձեռք բերելը կամ տիրապետելը, փոխադրամիջոցների՝ գողությանը հափշտակությունը փրկագնի դիմաց, թմրամիջոցներ արտադրելը, ձեռք բերելը, տնօրինելը կամ տիրապետելը, թմրամիջոցների օգտագործման նպատակով շինություններից օգտվելը պարբերաբար թույլատրելը, անօրինական ձևով թմրամիջոցների օգտագործում նշանակելը, ինչպես նաև ափիոնի կակաչ, կոկաին կամ կանեփ աճեցնելը:

96. Այն ակտիվները, որոնք կարող էին բռնագանձվել 2005թ. Օրենքի շրջանակներում, եղել են հողված 3(1)-ով նախատեսված հանցագործության կատարման համար դատապարտված անձանց կողմից ձեռք բերված ակտիվներ, որոնք ողջամտորեն կարող էին համարվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, քանի որ որևէ օրինական աղբյուր չի մատնանշվել (հողված 4(1)):

97. Եթե նման ակտիվները փոխհատուցման դիմաց փոխանցված լինեին բարեխիղճ երրորդ կողմին, և այդ երրորդ կողմը վճարած լիներ այդ ակտիվների իրական արժեքը, ապա վարույթի շրջանակներում կարող էին բռնագանձվել միայն դատապարտված անձի ստացած եկամուտները (հողված 4(2)): Դատապարտված անձի ժառանգների ժառանգած ակտիվները նույնպես ենթակա են եղել բռնագանձման (5-րդ հողված), քանի որ դրանք եղել են իրավաբանական անձի կապիտալում ներառված ակտիվներ, որոնք վերահսկվել են կա՛մ դատապարտված անձի կողմից առանձին, կա՛մ այլ անձանց հետ համատեղ (6-րդ հողված), ինչպես նաև եղել են ակտիվներ, որոնք դատապարտված անձի կողմից փոխանցվել են վերջինիս ամուսնուն կամ մտերիմ ազգականներին՝ պայմանով, որ այդ անձինք իմացել են, որ այդ ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են (հողված 8(1)): Նման իմացությունը ենթադրվում է, որ առկա է, քանի դեռ հակառակը չի ապացուցվել (հողված 8(2)): Այն ակտիվները, որոնք համարվել են ամուսնական համատեղ սեփականություն, դատապարտված անձի ամուսնու եկամուտների աղբյուրի մասով հետագծված չլինելու պատճառով նույնպես ենթակա են եղել բռնագանձման (10-րդ հողված): Դատապարտված անձի ամուսնու կամ անչափահաս երեխաների կողմից երրորդ կողմից ձեռք բերված ակտիվները համարվում են որպես դատապարտված անձի անունից ձեռք բերված ակտիվներ, եթե դրանք ունեն զգալի արժեք, գերազանցում են ամուսնու կամ երեխաների եկամուտները համապատասխան ժամանակահատվածում, և դրանք հնարավոր չի հետագծել եկամտի մեկ այլ աղբյուրով (9-րդ հողված):

98. Բռնագանձման վարույթ կարող էր հարուցվել այն ակտիվների մասով, որոնք ձեռք էին բերվել նախքան 2005թ. Օրենքն ուժի մեջ մտնելը (Օրենքի անցումային և եզրափակիչ դրույթների 3-րդ հոդված): Ակտիվը բռնագանձելու՝ պետության իրավունքի գործողության ժամկետը լրանում է ակտիվը ձեռք բերելուց քսանհինգ տարի անց (11-րդ հոդված):

## Դ. Ընթացակարգը

99. Եթե անհատը մեղադրվում է հոդված 3(1)-ով նախատեսված հանցագործություններից մեկի կատարման մեջ (տե՛ս վերևում 95-րդ պարբերությունը) կամ դատապարտվում այդպիսի հանցագործության կատարման համար, ապա քրեական հետապնդման մարմինները և դատարանները պետք է այդ մասին ծանուցեն Հանձնաժողովի համապատասխան շրջանային գրասենյակներին:

100. Հանձնաժողովն իրականացնում է քննություն՝ նպատակ ունենալով ճշտել այն ակտիվների ծագումը և գտնվելու վայրը, որոնց առնչությամբ ողջամիտ կասկած կա այն մասին, որ դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Մասնավորապես, Հանձնաժողովը ստուգում է դատապարտված անձի ակտիվները, դրանց ձեռքբերման եղանակը և արժեքը, դատապարտված անձի եկամուտները, նրա կողմից վճարված հարկերը, նրա սովորական ծախսերը, ցանկացած ոչ սովորական ծախս, հարկային հաշվետվությունները և այլն: Քննության ընթացքում Հանձնաժողովը կարող է տարբեր մարմիններից ձեռք բերել տեղեկություններ, հավաքել գրավոր, փորձագիտական ու այլ ապացույցներ և հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, իրականացնել խուզարկություններ ու առգրավումներ, ինչպես նաև պահանջել վերացնելու բանկային գաղտնիքի սահմանափակումը: Հանձնաժողովը կարող է նաև դատապարտված անձանցից տեղեկություններ պահանջել նրանց ու նրանց ընտանիքների ակտիվների, բանկային հաշիվների, եկամտի աղբյուրների, կատարած գործարքների ու պարտքերի վերաբերյալ:

101. Իրականացված քննության հիման վրա Հանձնաժողովը որոշում է՝ արդյո՞ք հարուցել բռնագանձման վարույթ, թե՞ ոչ:

102. Եթե դատապարտված անձի նկատմամբ հարուցված քրեական վարույթը հանգեցնում է վերջնական դատապարտման, ապա Հանձնաժողովն ունի մեկ ամիս ժամանակ՝ բռնագանձման հայց ներկայացնելու համար: Նման հայցերը քննվում են քաղաքացիական դատարանների կողմից: Հայցը ստանալուց հետո, տեղական շրջանային դատարանները Պետական տեղեկագրում հրապարակում են ծանուցում ու գործը նշանակում քննության: Դատարանը լսում է գործը հրապարակային լսումների շրջանակներում՝ հանրային

մեղադրողի ներկայությամբ: Դրա որոշումը ենթակա է բողոքարկման: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոնները կիրառվում են լրացուցիչ հիմքով այն հարցերի առնչությամբ, որոնք հստակ կանոնակարգված չեն 2005թ. Օրենքով:

103. 2005թ. Օրենքի 32-րդ հոդվածի շրջանակներում պետությունը պատասխանատու է Օրենքի շրջանակներում կատարված անօրինական գործողություններով ու անգործությամբ պատճառված ցանկացած վնասի համար: Պետության պատասխանատվությանը վերաբերող լրացուցիչ դրույթները, ինչպես նաև ազգային դատարանների համապատասխան պրակտիկան ամփոփված են *Նեդյալկովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի* [*Nedyalkov and Others v. Bulgaria*] գործում (որոշում), թիվ 663/11, §§ 61-68, 2013թ. սեպտեմբերի 10):

## Ե. Ներպետական դատարանների նախադեպային իրավունքը

### 1. Բռնագանձման ենթակա ակտիվների ու դատապարտված անձի հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի վերաբերյալ

104. Մինչև 2014թ. ազգային դատարանները տարակարծիք են եղել դատապարտված անձի կատարած հանցագործության կամ հանցավոր գործունեության և բռնագանձման ենթակա ակտիվների միջև 2005թ. Օրենքի շրջանակներում պատճառահետևանքային կապ հաստատելու անհրաժեշտության վերաբերյալ: Այսպես, որոշ դեպքերում դատարանները գտել են, որ որևէ պատճառահետևանքային կապի առկայություն պետք չէ ապացուցել, քանի որ 2005թ. Օրենքի հոդված (4)1-ով (տե՛ս վերևում 96-րդ պարբերությունը) սահմանվում է ենթադրությունն այն մասին, որ բոլոր այն ակտիվները, որոնց համար օրինական աղբյուր չի մատնանշվում, համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 875/2010 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2010թ. նոյեմբերի 9-ի թիվ 671 վճիռը, IV քաղաքացիական պալատ, Թիվ 890/2012 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2013թ. մայիսի 29-ի թիվ 156 վճիռը, IV քաղաքացիական պալատ): Մյուս դեպքերում, դատարանները պահանջել են հաստատել պատճառահետևանքային կապ՝ գտնելով, որ անգամ եկամտի որևէ օրինական աղբյուր չմատնանշելու դեպքում, ինքնաբերաբար չի ենթադրվում, որ քննարկվող ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 1116/2009 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2010թ. հոկտեմբերի 29-ի թիվ 607 վճիռը, IV քաղաքացիական պալատ, Թիվ 1462/2010 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 26-ի թիվ 209 վճիռը, III քաղաքացիական պալատ):

105. Հարցին լուծում էր տրվել Թիվ 7 Պարզաբանող որոշման շրջանակներում, որը Գերագույն դատարանի կողմից 2014թ. հունիսի 30-ին ընդունված՝ կատարման համար պարտադիր որոշում էր ([*բուլղարերենից թարգմ.*] *Թիվ 7/2013 գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի թիվ 7/2014 պարզաբանող որոշումը, Քաղաքացիական ու առևտրային հարցերով կոլեգիայի ընդհանուր ժողով*): Հաստատելով հակասական նախադեպային իրավունքի առկայությունը՝ դատարանը ամրագրել է վերևում նշված երկու կարծիքներից վերջինը՝ գտնելով, որ 2005թ. Օրենքի հոդված (3)1-ով (տե՛ս վերևում 95-րդ պարբերությունը) նախատեսված որևէ հանցանք կատարած անձի կողմից ակտիվներ ձեռք բերելու հանգամանքը պետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված լինի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հետ, սակայն բոլոր դեպքերում, «այդ կապի առկայությունը [պետք է] հաստատվի կամ դրա առկայությունը [պետք է] ենթադրվի»: Խնդրո առարկա ենթադրությունը պետք է «տրամաբանորեն հիմնավորվի» և «հիմնված լինի փաստերի ու հանգամանքների վրա»: Ընդունելի է համարվել նաև ենթադրություն կատարել՝ ավելի վաղ, այդ թվում՝ որոշակի հանցագործության կատարումից առաջ ձեռք բերված ակտիվների հանցավոր ծագման մասին: Գերագույն դատարանը նշել է նաև, որ՝

«[ա]կտիվների օրինական ծագումը չհաստատելը ոչ թե փոխարինում է հիմնավորված ենթադրությանն այն մասին, որ դա կապված է հանցավոր գործունեության հետ, այլ Հանձնաժողովին պարզապես ազատում է նման կապի առկայությունն կասկածի դուրս ապացուցելու պարտականությունից:»:

106. Գերագույն դատարանն այնուհետև նշել է, որ բռնագանձման ենթակա ակտիվների և հանցավոր գործունեության միջև (որի կատարման համար անձը դատապարտվել է) որևէ պատճառահետևանքային կապի առկայությունը չապացուցելը նշանակում է, որ դատապարտված անձի սեփականության իրավունքին միջամտությունն անհամաչափ է:

107. Հետևաբար, անդրադառնալով այս Պարզաբանող որոշմանը՝ ազգային դատարանները մերժել են Հանձնաժողովի՝ 2005թ. Օրենքի շրջանակներում ներկայացրած բռնագանձման հայցերը՝ գտնելով, որ չի հաստատվել որևէ պատճառահետևանքային կապ դատապարտված անձի հանցավոր գործունեության ու այն ակտիվների միջև, որոնք հայցվում էր բռնագանձել՝ չնայած այն հանգամանքին, որ որևէ օրինական աղբյուր չի մատնանշվել վերջինիս որոշ եկամուտների առնչությամբ (տե՛ս [*բուլղարերենից թարգմ.*] *Թիվ 603/2011 քաղաքացիական գործով ընդունված՝ Լովչեյի շրջանային դատարանի 2014թ. հոկտեմբերի 14-ի թիվ 256 վճիռը, Թիվ 154/2015 քաղաքացիական գործով ընդունված՝ Վառնայի վերաքննիչ դատարանի 2015թ. մայիսի 22-ի թիվ 79 վճիռը, Թիվ 442/2015 քաղաքացիական գործով ընդունված՝ Պլովդիվի վերաքննիչ դատարանի 2015թ. նոյեմբերի 5-ի թիվ 194 վճիռը*):



## 2. Դատապարտված անձի եկամուտներն ու ծախսերը գնահատելու մեթոդների վերաբերյալ

108. 2005թ. Օրենքի ներքո հարուցված վարույթների շրջանակներում ներպետական դատարանների հաստատված մոտեցումն է եղել պարզել դատապարտված անձի կատարած ծախսերը անշարժ գույքի միավորների ու ավտոմեքենաների գնման ժամանակ՝ հիմք ընդունելով տվյալ պահի դրությամբ դրանց շուկայական արժեքը, որը հաշվարկվում է դատարանի նշանակած փորձագետների կողմից, այլ ոչ թե հիմք ընդունելով ավելի ցածր արժեքը, որը հաճախ մատնանշվում է գնման համապատասխան փաստաթղթերում, ինչպես, օրինակ՝ նոտարական փաստաթղթերում: Գերագույն դատարանը նշել է, որ նման փաստաթղթերով արժանահավատորեն չի հաստատվում գնման գինը, և որ պետությունը պարտավորված չէ ղեկավարվելու այդ առնչությամբ կողմերի արած հայտարարություններով, ինչպես նախատեսված է քննարկվող փաստաթղթերում, և որ ակտիվների շուկայական արժեքը օբյեկտիվ փաստ է (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 717/2009 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2010թ. հունվարի 29-ի թիվ 89 վճիռը, III քաղաքացիական պալատ, Թիվ 1135/2010 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2011թ. հոկտեմբերի 20-ի թիվ 323 վճիռը, III քաղաքացիական պալատ, Թիվ 5390/2017 քաղաքացիական գործով ընդունված՝ Սոֆիայի վերաքննիչ դատարանի 2019թ. մարտի 1-ի թիվ 716 վճիռը): Նման արժեքը կարող է հիմնավորվել ցանկացած տեսակի ապացույցներով (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 3102/2013 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2013թ. սեպտեմբերի 9-ի թիվ 938 որոշումը, III քաղաքացիական պալատ): Բռնագանձման վարույթի շրջանակներում դատապարտված անձանց համար հնարավոր է եղել «որոշակի տվյալների» հիման վրա ցույց տալ, որ նրանք ձեռք չեն բերել գույք շուկայական արժեքով (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 875/2010 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2010թ. նոյեմբերի 9-ի թիվ 671 վճիռը, IV քաղաքացիական պալատ, Թիվ 5307/2016 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2017թ. հոկտեմբերի 25-ի թիվ 264 վճիռը, IV քաղաքացիական պալատ): Գույքի արժեքը՝ այն ձեռք բերելու պահի դրությամբ, կարող էր տարբերվել ավելի ուշ պահի դրությամբ դրա արժեքից, օրինակ՝ մաշվածության հիմքով (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 99/2012 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2013թ. ապրիլի 23 թիվ 481 վճիռը, IV քաղաքացիական պալատ):

109. Ավելին, տարբեր ժամանակահատվածներում արժեքները համեմատելու համար, բռնագանձման հայցերը քննելիս ներպետական դատարանները հաճախ գումարները փոխարկել են «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի բազմապատիկի՝ տվյալ պահի դրությամբ գործող իրենց համարժեքով: Նման մոտեցումն արդարացվել է դատարանների կողմից՝ դատապարտված անձանց եկամուտների ու ծախսերի վերլուծության ժամանակահատվածների տևողության, դրամի արժեզրկման ու գնաճի, այդ թվում՝ այդ ժամանակահատվածներում անշարժ գույքի այդ միավորների գնաճի հիմքով: «Նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի չափանիշը նկարագրվել է որպես «միակ օբյեկտիվ չափանիշ»՝ ակտիվի արժեքը որոշելու համար (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 616/2007 քաղաքացիական գործով ընդունված՝ Վրացայի շրջանային դատարանի 2009թ. ապրիլի 1-ի թիվ 132 վճիռը, Թիվ 103/2008 քաղաքացիական գործով ընդունված՝ Դորրիչի շրջանային դատարանի 2009թ. հոկտեմբերի 13-ի թիվ 528 վճիռը, Թիվ 577/2009 քաղաքացիական գործով ընդունված՝ Սլիվենի շրջանային դատարանի 2010թ. նոյեմբերի 23-ի վճիռը): «Նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորը որոշվում է Նախարարների խորհրդի (Կառավարություն) կողմից՝ արհեստակցական միությունների ու գործատուների հետ խորհրդակցելուց հետո, և պարբերաբար թարմացվում է: 2000թ. և 2005թ. միջև ընկած ժամանակահատվածներում այն տատանվել է 67 բուլղարական լև (34 եվրո) և 150 բուլղարական լև (77 եվրո) գումարների միջև, մինչև 2010թ. այն աճել է՝ հասնելով մինչև 240 բուլղարական լևի (123 եվրո), մինչև 2015թ. այն աճել է՝ հասնելով մինչև 380 բուլղարական լևի (194 եվրո), իսկ 2020թ. այն կազմել է 610 բուլղարական լև (312 եվրո):

110. Դատապարտված անձի օրական ծախսերը հաշվարկելու համար դատարաններն օգտագործել են՝ քննարկվող ժամանակահատվածում յուրաքանչյուր անձի բաժին ընկնող միջին ծախսերի վերաբերյալ վիճակագրական տվյալները՝ հաշվի առնելով, անձի ընտանեկան դրությունը, ինչպես նաև նրա կենսասապահովման մակարդակը և կենսակերպը (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] Թիվ 99/2012 քաղաքացիական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2013թ. ապրիլի 23-ի թիվ 481 վճիռը, IV քաղաքացիական պալատ): Արտասահման մեկնելիս կատարած ծախսերը հաշվարկվել են՝ պաշտոնական այցի ժամանակ կատարվող ստանդարտացված օրական ծախսերի վերաբերյալ տվյալների հիման վրա:

## II. ՄՅՈՒՍ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

111. Քրեական օրենսգրքի 53(2)(բ) հոդվածով՝ մինչև 2019թ. խմբագրությամբ, նախատեսված է եղել, որ դատապարտման ժամանակ՝ անկախ հիմնական պատժից, հանցագործության կատարումից ստացված եկամուտները ենթակա են բռնագանձման, եթե դրանց նկատմամբ չի կիրառվում ռեստիտուցիա [գույքային վիճակի վերականգնում]:

112. Մինչև 2005թ. ներպետական օրենսդրությամբ նախատեսված է եղել, այսպես կոչված՝ «աշխատանքային գործունեությանը չառնչվող եկամուտների» բռնագանձումը: Այդ առնչությամբ կիրառելի իրավական դրույթները ամփոփված են *Դիմիտրովներն ընդդեմ Բուլղարիայի* [*Dimitrovi v. Bulgaria*] գործում (թիվ 12655/09, §§ 23-28, 2015թ. մարտի 3):

## III. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

113. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 164(1)(3)-ի համաձայն՝ 5,000 բուլղարական լևը (2,557 եվրո) գերազանցող արժեքով ակտիվներին վերաբերող պայմանագրի կնքման փաստը չի կարող ապացուցվել միայն վկայի ցուցմունքներով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագրի կողմերը ամուսիններ են կամ մտերիմ ազգականներ: Ապացուցողական նյութերի ընդունելիության նկատմամբ սահմանափակումն, այնուամենայնիվ, չի ազդում ինքնին պայմանագրի վավերականության վրա (տե՛ս [բուլղարերենից թարգմ.] *Թիվ 11608/2012 վարչական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2013թ. հունիսի 11-ի թիվ 8109 վճիռը, I պալատ, Թիվ 10132/2013 վարչական գործով ընդունված՝ Գերագույն վճռաբեկ դատարանի 2014թ. հունվարի 24-ի թիվ 994 վճիռը, I պալատ*):

114. Օրենսգրքի հոդված 303(1)(7)-ով սահմանվում է, որ շահագրգիռ կողմը կարող է պահանջել քաղաքացիական վարույթի վերսկսում այն գործով, որի շրջանակներում «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով արձանագրվել է [Կոնվենցիայի] խախտում» և «պահանջվում է գործի նոր քննություն՝ խախտման հետևանքները վերացնելու համար»:

## IV. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

115. Միջազգային իրավունքի և Եվրոպական միության իրավունքի համապատասխան դրույթներն ամփոփվել են «Ջի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ը և մյուսներն ընդդեմ Իտալիայի [*G.I.E.M.*

*S.R.L. and Others v. Italy*] [ՄՊ] գործում (թիվ 1828/06 և մյուս երկու գործերը, §§ 139-153, 2018թ. հունիսի 28):

116. Մասնավորապես, Եվրոպական միության համատեքստում, «Հանցավոր ծագում ունեցող եկամուտների, գործիքների ու գույքի բռնագանձման մասին» Խորհրդի 2005թ. փետրվարի 24-ի շրջանակային որոշմամբ (թիվ 2005/212/ԱՆԳ) նախատեսվում է սովորական բռնագանձումը, այդ թվում՝ համապատասխան արժեքների բռնագանձումը բոլոր այն հանցագործությունների կատարման առնչությամբ, որոնց համար սահմանված է մեկ տարին գերազանցող ժամկետով ազատազրկում, ինչպես նաև նախատեսվում է այն անձի տիրապետման տակ գտնվող որոշ կամ բոլոր ակտիվների բռնագանձումը, որը մեղավոր է ճանաչվել որոշակի լուրջ հանցագործությունների համար, եթե դրանք «կատարվել են հանցավոր կազմավորման շրջանակներում», առանց հանցավոր ծագում ունեցող ակտիվների ու որոշակի հանցագործության միջև պատճառահետևանքային կապ հաստատելու: Տվյալ մոտեցումը բնութագրվում է որպես «բռնագանձման ընդլայնված լիազորություններ»:

117. «Եվրոպական միությունում հանցագործության գործիքների ու դրա կատարումից ստացված եկամուտների սառեցման ու բռնագանձման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2014թ. ապրիլի 3-ի թիվ 2014/42/ԵՄ հրահանգով՝ դրա հոդված 5(1)-ի շրջանակներում, կարգավորվում է նաև «ընդլայնված բռնագանձումը»՝ հետևյալ եղանակով.

«Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ այն անձին պատկանող գույքի՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բռնագանձումն իրականացնելու համար, որը դատապարտվել է այնպիսի հանցագործության կատարման համար, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է հանգեցնել տնտեսական օգուտի առաջացմանը, եթե դատարանը, ելնելով գործի հանգամանքներից, այդ թվում՝ որոշակի փաստերից ու առկա ապացույցներից, ինչպես, օրինակ՝ այն հանգամանքից, որ գույքի արժեքը անհամաչափ է դատապարտվող անձի օրինական եկամուտներին, հավաստիացել է, որ քննարկվող գույքը ծագում է հանցավոր արարքից:»:

118. Այդ առնչությամբ 20-րդ և 21-րդ պարբերություններով նախատեսվում են լրացուցիչ պարզաբանումներ.

(20) Հանցագործության կատարմամբ տնտեսական օգուտի առաջացման հնարավորությունը որոշելիս անդամ պետությունները կարող են հաշվի առնել հանցագործության կատարման եղանակը (*modus operandi*), օրինակ՝ այն հանգամանքը, թե արդյո՞ք հանցագործությունը կատարվել է կազմակերպված հանցավորության համատեքստում, թե՞ հանցագործությունից սովորական շահույթ ստանալու մտադրությամբ: Այնուամենայնիվ, սա, որպես կանոն, չպետք է խոչընդոտի ընդլայնված բռնագանձմանը դիմելու հնարավորությունը:

(21) Ընդլայնված բռնագանձումը պետք է հնարավոր լինի այն դեպքում, երբ դատարանը հավաստիանում է, որ քննարկվող գույքը ծագում է հանցավոր արարքից: Դա չի նշանակում, որ պետք

է հաստատվի այն հանգամանքը, որ քննարկվող գույքը ծագում է հանցավոր արարքից: Անդամ պետությունները կարող են սահմանել, որ, օրինակ՝ բավական է, որ դատարանը հավանականության տեսության հիման վրա համարի կամ ողջամտորեն ենթադրի, որ զգալիորեն առավել քան հավանական է, որ քննարկվող գույքը ձեռք է բերվել հանցավոր արարքի կատարումից, այլ ոչ թե այլ տեսակի գործունեությունից: Այս համատեքստում դատարանը պետք է դիտարկի գործի կոնկրետ հանգամանքները, այդ թվում՝ այն փաստերն ու առկա ապացույցները, որոնց հիման վրա կարող է ընդունվել ընդլայնված բռնագանձման մասին որոշում: Այն հանգամանքը, որ անձի գույքը անհամաչափ է նրա օրինական եկամուտներին, կարող է լինել այն փաստերի շարքում, որոնք հանգեցնում են դատարանի եզրահանգմանն այն մասին, որ գույքը ծագում է հանցավոր արարքից: Անդամ պետությունները կարող են նաև սահմանել այնպիսի ժամանակահատվածի վերաբերյալ պահանջ, որի ընթացքում գույքը կարելի է համարել, որ ծագում է հանցավոր արարքից:

119. Հրահանգի 6-րդ հոդվածով կանոնակարգվում է երրորդ կողմի նախաձեռնությամբ բռնագանձումը.

«1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ստացված այն եկամուտների կամ եկամուտներին համապատասխանող արժեքով այլ գույքի բռնագանձումն իրականացնելու համար, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխանցվել է կասկածվող կամ մեղադրվող անձի կողմից երրորդ կողմին, կամ որը երրորդ կողմը ձեռք է բերել կասկածվող կամ մեղադրվող անձից, եթե առնվազն այդ երրորդ կողմը որոշակի փաստերի և հանգամանքների հիման վրա իմացել է կամ պետք է իմանար, որ փոխանցման կամ ձեռքբերման նպատակը եղել է բռնագանձումից խուսափելը, ինչպես նաև որ փոխանցումը կամ ձեռքբերումը իրականացվել է անվճար կամ շուկայական արժեքից զգալիորեն ցածր գումարի դիմաց:

2. Պարբերություն 1-ը չպետք է հակասի բարեխիղճ երրորդ անձանց իրավունքներին:»:

120. Ի վերջո, Հրահանգի 8-րդ հոդվածով, ի հավելումն հետևյալ երաշխիքների, նախատեսվում է, որ՝

«1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ այն անձինք, ում վրա տարածվել են այս Հրահանգի ներքո սահմանված միջոցները, իրենց իրավունքները պաշտպանելու համար ունենան արդարացի փոխհատուցման ու արդար դատաքննության իրավունք:

...

6. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ բռնագանձման մասին ցանկացած որոշման դեպքում ներկայացվեն դրա պատճառները, և որ այդ որոշումը հաղորդվի այն անձին, ում վրա դա տարածվում է: Անդամ պետություններն ապահովում են այն անձի՝ տվյալ որոշումը դատարանում բողոքարկելու համար արդյունավետ հնարավորություն, ում առնչությամբ պարտավորեցվել է կատարել բռնագանձում:

7. Չհակասելով թիվ 2012/13/ԵՄ Հրահանգին և թիվ 2013/48/ԵՄ Հրահանգին՝ այն անձինք, ում գույքի վրա տարածվում է բռնագանձման մասին որոշումը, իրենց իրավունքները պաշտպանելու համար ունեն իրավաբանի իրավաբանական ծառայություններից օգտվելու իրավունք բռնագանձման այն ամբողջ վարույթի ընթացքում, որը վերաբերում է հանցագործությամբ ստացված եկամուտներն ու դրա կատարման գործիքները որոշելուն: Տվյալ անձինք տեղեկացվում են իրենց այդ իրավունքի մասին:

8. 5-րդ հոդվածով սահմանված վարույթի շրջանակներում այն անձը, ում առնչվում է տվյալ վարույթը, ունի գործի հանգամանքները, այդ թվում՝ կոնկրետ այն փաստերը և առկա ապացույցները վիճարկելու արդյունավետ հնարավորություն, որոնց հիման վրա քննարկվող գույքը համարվում է հանցավոր արարքից բխող գույք:

9. Կողմերն իրավասու են հայցելու սեփականության իրավունք կամ գույքի նկատմամբ այլ իրավունքներ, այդ թվում՝ 6-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

10. Այն դեպքերում, երբ հանցագործության կատարման արդյունքում, տուժողը բողոք է ներկայացնում այն անձի դեմ, ում վրա տարածվում է այս Հրահանգով սահմանված բռնագանձման միջոցը, անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ բռնագանձման միջոցը չխոչընդոտի այդ տուժողի՝ իր բողոքի համար փոխհատուցում պահանջելու հնարավորությունը:»:

## V. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

### Ա. 2005թ. Օրենքի կիրառման վերաբերյալ

121. Հանձնաժողովը կազմել է 2006թ. և 2018թ. միջև ընկած ժամանակահատվածի կտրվածքով իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ: Դրանցում պարունակվող տվյալները ցույց են տալիս, որ քննարկվող տարիներին այն քրեական հետապնդման մարմիններից և դատարաններից ստացել է ավելի քան 70,000 ծանուցում այն մասին, որ համապատասխան անձինք մեղադրվել են 2005թ. Օրենքի հոդված 3(1)-ով սահմանված հանցագործություններից մեկի կատարման մեջ կամ դատապարտվել են այդպիսի հանցագործության կատարման համար (տե՛ս վերևում 99-րդ պարբերությունը): Քննություն իրականացնելուց հետո Հանձնաժողովը 1,093 գործերով հարուցել է բռնագանձման վարույթ (տե՛ս վերևում 100-101-րդ պարբերությունները): Հանձնաժողովին ուղղված մնացած գործերի քննությունը դադարել է, քանի որ դրանց վրա չի տարածվել 2005թ. Օրենքի գործողությունը, կամ որովհետև դատապարտված անձինք ձեռք բերած չեն եղել «զգալի արժեք ունեցող» ակտիվներ, կամ էլ ներկայացրել են այդ ակտիվների օրինական ծագման վերաբերյալ ապացույց: Գերագույն դատարանի 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշման ընդունումից հետո (տե՛ս վերևում 105-106-րդ պարբերությունները) Հանձնաժողովին ուղղված գործերի մեծ մասի քննությունը չի շարունակվել, քանի որ հնարավոր չի եղել

պատճառահետևանքային կապ հաստատել քննության առարկա ակտիվների ու դատապարտված անձանց հաստատված հանցավոր գործունեության միջև:

122. 2006թ. և 2018թ. միջև ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովը 2005թ. Օրենքի շրջանակներում դատարան է ներկայացրել 519 բռնագանձման հայց (տե՛ս վերևում 102-րդ պարբերությունը): 2018թ. վերջում ավարտվել է 260 խումբ վարույթների քննությունը՝ հոգուտ Հանձնաժողովի կայացված վերջնական վճիռներով, որոնցով պարտավորեցվել է բռնագանձել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները:

### **Բ. Բուլղարիայում ստվերային տնտեսության տոկոսային հարաբերության վերաբերյալ**

123. 2019թ. Միջազգային դրամային ֆոնդի կողմից հրապարակվել է աշխատանքային փաստաթուղթ, որի շրջանակներում կատարված գնահատմամբ 2000թ. և 2016թ. միջև ընկած ժամանակահատվածում Բուլղարիայում ստվերային տնտեսությունը կազմել է երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մոտ 30-40%-ը: Եվրոպական հանձնաժողովի, Համաշխարհային բանկի և այլ մարմինների մյուս գնահատումների շրջանակներում այն կազմել է ՀՆԱ-ի մոտ 30-33%-ը, մինչդեռ 2007թ. Բուլղարիայի ազգային բանկի գնահատմամբ այն կազմել է ՀՆԱ-ի մոտ 17%-ը: Վիճակագրության ազգային ինստիտուտի պնդմամբ 1993թ. Բուլղարիայում ստվերային տնտեսությունը կազմել է 16,8%, իսկ 1998թ. այն կազմել է երկրի ՀՆԱ-ի 27,8%-ը:

## **ԻՐԱՎՈՒՆՔԸ**

### **I. ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՄԻԱՅՈՒՄԸ**

124. Հաշվի առնելով գանգատների համանման առարկան՝ Դատարանը նպատակահարմար է գտնում միացնել դրանք մեկ վարույթում (Դատարանի կանոնակարգի 42-րդ կանոնի 1-ին կետ):

### **II. ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ**

125. Տկն Էմիլյա Ռուսևա ժեկովան՝ *Ժեկովների* գործով (գանգատ թիվ 71694/12՝ տե՛ս վերևում 41-րդ պարբերությունը) դիմումատուներից մեկը, մահացել է 2018թ. հուլիսի 20-ին, և նրա ժառանգները ցանկություն են հայտնել նրա փոխարեն հետամուտ լինել գանգատի

քննությանը: Կառավարությունն առարկել է՝ նշելով, որ նրա մահվան պահի դրությամբ նրա բռնագանձված ակտիվներն այլևս նրա տիրապետման տակ չեն գտնվել:

126. Դատարանը վերահաստատում է, որ նման հարցեր որոշելիս որոշիչ է համարվում այն հանգամանքը՝ արդյո՞ք ժառանգները կամ մտերիմ ազգականները սկզբունքորեն կարող են հայցել իրավաչափ շահ և Դատարանից պահանջել գործը քննել՝ հիմնվելով մահացած դիմումատուի՝ Դատարան գանգատ ներկայացնելու իր առանձին և անձնական իրավունքն իրականացնելու ցանկության վրա: Բացի դրանից, որպես կանոն, Դատարանում քննվող՝ մարդու իրավունքների վերաբերյալ գործերն ունեն բարոյական կողմ, ուստի, դիմումատուի համար մտերիմ անձինք կարող են իրավաչափ շահ հետապնդել արդարադատության իրականացումն ապահովելու հարցում անգամ դիմումատուի մահից հետո (տե՛ս, ի թիվս այլ գործերի, *Էրգեզենն ընդդեմ Թուրքիայի* [*Ergezen v. Turkey*] գործը, թիվ 73359/10, § 29, 2014թ. ապրիլի 8, և *Կարաստեվևը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի* [*Karastelev and Others v. Russia*] գործը, թիվ 16435/10, § 51, 2020թ. հոկտեմբերի 6):

127. Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ տկն ժեկովայի ժառանգները, մասնավորապես՝ նրա ամուսինը՝ պրն Ժիվկո ժեկով ժեկովը, և նրա որդիները՝ պրն Իվայրո Ժիվկով ժեկովն ու պրն Ժեկո Ժիվկով ժեկովը, իրավասու են նրա փոխարեն հետամուտ լինելու գանգատի քննությանը:

### III. ԹԻՎ 1 ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

128. Դիմումատուները բողոքել են իրենց գույքի բռնագանձման առնչությամբ՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի և Կոնվենցիայի հոդված 6(1)-ի և 13-րդ հոդվածի շրջանակներում:

129. Հանդես գալով որպես գործի փաստական հանգամանքների՝ օրենքով նախատեսված բնութագրումը ներկայացնելու վարպետ (տե՛ս, *Ռադոմիլյան և մյուսներն ընդդեմ Խորվաթիայի* [*Radomilja and Others v. Croatia*] [ՄՊ] գործը, թիվ 37685/10 և թիվ 22768/12, § 114 և 126, 2018թ. մարտի 20)՝ Դատարանը այն կարծիքին է, որ բողոքը պետք է քննվի բացառապես Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում, որն ունի հետևյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր սեփականությունից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր սեփականությունից՝ բացառությամբ հոգուտ հանրային շահի և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:



Նախորդ դրույթներն այնուամենայնիվ, որևէ կերպով չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում սեփականությունն՝ ընդհանուր շահին համապատասխան օգտագործելու նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

## Ա. Բողոքի առարկան

130. *Ժեկովների* գործում (գանգատ թիվ 71694/12) Կառավարությունը նշել է, որ չնայած Գերագույն դատարանը պարտավորեցրել էր բռնագանձել, ի թիվս այլնի, առաջին ու երկրորդ դիմումատուների տնից առգրավված 14,400 եվրոն և 730 ԱՄՆ դոլարը, այնուամենայնիվ նշված գումարներն արդեն իսկ բռնագանձվել էին այդ երկու դիմումատուների դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում (տե՛ս վերևում 52-րդ պարբերությունը): Բռնագանձման մասին որոշումը, հետևաբար, այդ գումարների մասով չէր կատարվել:

131. Դատարանը նկատում է, որ այս իրավիճակը նման է *Գայիչը, Ռուսեն ու Կացարովն ընդդեմ Բուլղարիայի* գործերին (համապատասխանաբար՝ գանգատներ թիվ 11340/12, 44845/15 և 17238/16), որոնցում բռնագանձման մասին որոշումներն ակնհայտորեն չէին կարող կատարվել անշարժ գույքի այն միավորների ու ավտոմեքենաների նկատմամբ, որոնք այլևս չէին համարվում դիմումատուների գույքը (տե՛ս վերևում 30-րդ, 62-րդ և 75-րդ պարբերությունները): Համանմանորեն, *Ժեկովների* գործում բռնագանձման մասին որոշումը չէր կարող կատարվել բռնագանձված ավտոմեքենաներից մեկի նկատմամբ (տե՛ս վերևում 53-րդ պարբերությունը):

132. Մինչդեռ, ինչ վերաբերում է *Ժեկովների* գործին, ապա Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ բողոքն առարկայական իրավագրության (*ratione materiae*) առումով մասնակիորեն չի համապատասխանում Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին, և Դատարանը ինչպես վերևում նշված գործերում, այնպես էլ այս գործում չի դիտարկելու այս հարցը որպես բողոքների ընդունելիությանը վերաբերող հարց: Այն առավել նպատակահարմար է գտնում սահմանել քննվող բողոքի առարկան՝ հաշվի առնելով վերևում վկայակոչված հանգամանքները:

133. *Ժեկովների* գործում Կառավարության կողմից վկայակոչված գումարներն ակնհայտորեն բռնագանձվել են երկու անգամ, և Եկամուտների ազգային գործակալությունը պարզաբանել է, որ ի կատար է ածվել միայն քրեական վարույթի շրջանակներում պարտավորեցված բռնագանձումը (տե՛ս վերևում 52-րդ պարբերությունը): Առաջին ու երրորդ դիմումատուները, ինչպես նաև երկրորդ դիմումատուի ժառանգները չեն պնդել, որ իրենցից պահանջել են երկրորդ անգամ վճարել քննարկվող գումարները, ուստի, Դատարանն

ընդունում է, որ գումարն այլևս վճարման ենթակա չէ: Ինչ վերաբերում է մնացած այն ակտիվներին, որոնք այլևս չեն համարվում դիմումատուների սեփականությունը, ապա քննարկվող դիմումատուներից որևէ մեկը չի պնդել, որ դեռևս պարտավորված է դրանք փոխանցել պետությանը:

134. Ուստի, Դատարանը քննում է իրեն ներկայացված բողոքը միայն այնքանով, որքանով այն վերաբերում է այն ակտիվներին, որոնք փաստացի բռնագանձվել են, կամ որոնց փոխանցման համար դիմումատուները դեռևս պատասխանատու են, ինչպես բռնագանձված գումարների դեպքում է: Դատարանը չի դիտարկում այն դեպքը, երբ բողոքը վերաբերում է այն ակտիվներին, որոնք այլևս դիմումատուների սեփականությունը չեն, և որոնց առնչությամբ համապատասխան մարմինները չեն հայցում բռնագանձման մասին որոշումների կատարում:

## Բ. Ընդունելիությունը

### 1. Կառավարության առարկությունը՝ ներպետական պաշտպանության միջոցները սպառած չլինելու վերաբերյալ

135. *Ժեկովների, Կացարովի և Դիմիտրովի* գործերում (համապատասխանաբար՝ գանգատներ թիվ 71694/12, 17238/16 և 63214/16) Կառավարությունն առարկություն է ներկայացրել ներպետական պաշտպանության միջոցները երկու հիմքերով սպառած չլինելու վերաբերյալ: Առաջին, Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ ներպետական վարույթի շրջանակներում դիմումատուներն ակնհայտորեն չեն վկայակոչել այն մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, որը երաշխավորված է Բուլղարիայի Սահմանադրությամբ: Երկրորդ, Կառավարությունը պնդել է, որ քանի որ *Կացարովի* և *Դիմիտրովի* գործերում դիմումատուների դեմ ներկայացված բռնագանձման հայցերը բավարարվել են միայն մասնակիորեն, իսկ *Ժեկովների* գործում, ինչպես արդեն նշվել է, բռնագանձումը մասնակիորեն ի կատար չի ածվել, ապա դիմումատուները հնարավորություն են ունեցել ներկայացնելու վնաս պատճառելուց բխող պատասխանատվության հայց ու պետությունից պահանջելու վնասների հատուցում:

136. *Ժեկովների* գործում առաջին և երրորդ դիմումատուները և երկրորդ դիմումատուի ժառանգները նշել են, որ բռնագանձման վարույթի շրջանակներում դիմումատուներն իրենց իրավասության սահմաններում արել են ամեն բան՝ իրենց սեփականությունը պաշտպանելու համար, և որ վնաս պատճառելուց բխող պատասխանատվության հայցը չէր կարող համարվել արդյունավետ պաշտպանության միջոց: *Կացարովի* գործում դիմումատուն նաև նշել է, որ

ամբողջ ներպետական վարույթի շրջանակներում նա պաշտպանել է իր սեփականության իրավունքը: Նա վիճարկել է՝ նշելով, որ Կառավարության կողմից վկայակոչված՝ փոխհատուցում նախատեսող պաշտպանության միջոցները կիրառելի չեն եղել իր գործում, քանի որ իր գույքի բռնագանձումը եղել է օրինական՝ ներպետական իրավունքի շրջանակներում: *Դիմիտրովի* գործում դիմումատուն դիտողություն չի ներկայացրել Կառավարության՝ ներպետական պաշտպանության միջոցները սպառած չլինելու մասին առարկության վերաբերյալ:

137. Ներպետական պաշտպանության միջոցները սպառելուն վերաբերող ընդհանուր սկզբունքներին կրկին անդրադարձ է կատարվում *Վուչկովիչն ու մյուսներն ընդդեմ Սերբիայի* [*Vučković and Others v. Serbia*] [ՄՊ] գործում (նախնական առարկություն), թիվ 17153/11 և մյուս 29 գործերը, §§ 69-77, 2014թ. մարտի 25): Անդրադառնալով այս գործի հանգամանքներին՝ Դատարանը նկատում է, որ բռնագանձման վարույթով շոշափվել են դիմումատուների սեփականության իրավունքը, և որ այս ամբողջ վարույթի շրջանակներում դիմումատուների ջանքերը հստակ ուղղված են եղել այդ իրավունքը պաշտպանելուն: Դիմումատուները ներկայացրել են տարբեր փաստարկներ, և Դատարանի համար պարզ չէ՝ ինչպես կարող էին նրանց կողմից հետագայում Սահմանադրությանը կատարված հղումները օգնել իրենց պաշտպանության իրականացման հարցում: Այդ առնչությամբ Կառավարությունը չի ներկայացրել որևէ լրացուցիչ պարզաբանում կամ փաստարկ:

138. Ճշմարիտ է այն հանգամանքը, որ դիմումատուները հնարավորություն են ունեցել ներկայացնելու վնաս պատճառելուց բխող պատասխանատվության հայցեր, և որ 2005թ. Օրենքով նախատեսված՝ փոխհատուցում նախատեսող պաշտպանության միջոցները (տե՛ս վերևում 103-րդ պարբերությունը) սկզբունքորեն Դատարանի կողմից համարվել են արդյունավետ *Նեդյալկովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի* [*Nedyalkov and Others v. Bulgaria*] գործում (որոշում), թիվ 663/11, §§ 91-102, 2013թ. սեպտեմբերի 10): Այնուամենայնիվ, վնաս պատճառելուց բխող պատասխանատվության նման հայցեր առկա են եղել միայն այնքանով, որքանով դիմումատուների դեմ ներկայացված՝ Հանձնաժողովի բռնագանձման հայցերը մերժվել են մասնակիորեն: Այժմ, դիմումատուները բողոքել են ոչ թե այս մասնակի մերժման դեմ (կամ *ժեկովների* գործում՝ բռնագանձումը մասնակիորեն ի կատար չածելու դեմ), այլ իրենց ակտիվները փաստացի բռնագանձելու դեմ: Առկա չէ վեճ այն մասին, որ բռնագանձումը օրինական է ներպետական իրավունքի շրջանակներում, և որ դիմումատուները հնարավորություն չունեն վնասի հատուցում պահանջել այդ առնչությամբ:

139. Համապատասխանաբար, Դատարանը չի համարում, որ քննվող երեք գործերում դիմումատուները չեն սպառել ներպետական արդյունավետ պաշտպանության որևէ միջոց: Ուստի, այդ առնչությամբ Դատարանը մերժում է Կառավարության առարկությունը:

## **2. Անընդունելիության մյուս հիմքերը**

140. Ի վերջո, Դատարանը նշում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում ներկայացված բողոքը ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով: Այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

## **Գ. Ըստ էության քննությունը**

### **1. Կողմերի փաստարկները**

#### **(ա) Կառավարությունը**

##### **(i) Ընդհանուր դիտարկումները**

141. Կառավարությունը մատնանշել է, որ դիմումատուի իրավունքներին միջամտությունը սահմանված է 2005թ. Օրենքով, որը հստակ է, հասանելի ու կանխատեսելի: Ավելին, դրա կիրառումը ազգային դատարանների կողմից եղել է հետևողական, հատկապես՝ Գերագույն դատարանի 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշումն ընդունելուց հետո (տե՛ս վերևում 105-106-րդ պարբերությունները):

142. Կառավարությունը պնդել է, որ 2005թ. Օրենքի նպատակն է եղել կենտրոնանալ «կազմակերպված և լուրջ հանցագործությունների տնտեսական հիմքերի» վրա: Կառավարությունը նշել է, որ քսաներորդ դարի վերջում և քսանմեկերորդ դարի սկզբում կազմակերպված հանցավորությունը Բուլղարիայում հանգեցրել է հսկայական ֆինանսական միջոցների առաջացմանը, որոնք կրկին ներդրվել են գործարար գործունեության մեջ, և որ նման իրավիճակում հեռահաս այնպիսի միջոցների ընդունումը, ինչպես, օրինակ՝ խնդրո առարկա միջոցներն են, դարձել է «ծայրահեղ անհրաժեշտություն»:

143. Կառավարությունը մատնանշել է, որ 2005թ. Օրենքի շրջանակներում ընթացակարգը կիրառելի է եղել այն ակտիվների նկատմամբ, որոնք ենթակա չեն եղել բռնագանձման Քրեական օրենսգրքի շրջանակներում և չէին կարող վերականգնվել հանցագործության տուժողի կողմից: Բռնագանձումն ունեցել է «քաղաքացիաիրավական»

բնույթ, ինչպես պարտավորեցվել էր քաղաքացիական դատարանների կողմից, և կատարվել է միայն քրեական վարույթն իրականացնելուց հետո:

144. Կառավարությունը պնդել է, որ 2005թ. Օրենքի շրջանակներում ընթացակարգը եղել է հավասարակշռված ու արդար: Մասնավորապես, դատապարտված անձի եկամուտների և ծախսերի վերլուծության երկար ժամանակահատվածները (մինչև քսանհինգ տարի՝ տե՛ս վերևում 98-րդ պարբերությունը) երաշխավորել են, որ հաշվի առնվեն բոլոր հնարավոր եկամտի աղբյուրները:

145. Կառավարությունը պնդել է, որ այն եղանակը, որով ազգային մարմինները կիրառել են 2005թ. Օրենքը, համապատասխանել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին: Մասնավորապես, Կառավարությունը կողմնակից է համապատասխան մարմինների այն որոշմանը, համաձայն որի դատապարտված անձի կողմից ստացված կամ ծախսված գումարները պարբերաբար փոխարկվեն «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի բազմապատիկի՝ տվյալ պահի դրությամբ գործող դրանց համարժեքով: Նման վարույթի շրջանակներում մատնանշելով եկամուտների ու ծախսերի վերլուծության երկար ժամանակահատվածները՝ Կառավարությունը պնդել է, որ «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորի վկայակոչումը եղել է «ընդհանուր առմամբ վավերական չափանիշ»՝ վեր հանելով «գումարի՝ գնում կատարելու հնարավորությունը» և կանխելով «անվանական արժեքների կամայական օգտագործումը»:

146. Այնուհետև, Կառավարությունը հիմնավորել է ներպետական դատարանների կողմից՝ դիմումատուների ձեռք բերած ակտիվների շուկայական արժեքի վկայակոչումը՝ մատնանշելով, որ Բուլղարիայում ընդունված գործելակերպ է եղել այն, որ անշարժ գույքի միավորներ ու ավտոմեքենաներ գնելիս ու վաճառելիս, կողմերը հայտարարագրում են ցածր գին՝ ավելի ցածր հարկ վճարելու համար: Իրական արժեքը եղել է զգալիորեն ավելի բարձր: Կառավարությունը մատնանշել է, որ քննության առարկա գործերում՝ ներպետական վարույթի շրջանակներում քննարկված ակտիվների շուկայական արժեքը հաշվարկվել է անկախ փորձագետների կողմից:

147. Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ Կոնվենցիայով սկզբունքորեն չեն արգելվում այնպիսի ենթադրությունների կիրառումը, ինչպիսիք նախատեսված են 2005թ. Օրենքի հոդված 4(1)-ում (տե՛ս վերևում 96-րդ պարբերությունը), եթե դրանք ուղեկցվում են գույքի նկատմամբ իրավունքի համարժեք պաշտպանությամբ:

148. Ի վերջո, Կառավարությունը տարբերակել է այս գործերը *Դիմիտրովներն ընդդեմ Բուլղարիայի* [*Dimitrovi v. Bulgaria*] գործից (թիվ 12655/09, 2015թ. մարտի 3), որը վերաբերել է «աշխատանքային գործունեությանը չառնչվող եկամուտների» բռնագանձմանը:

**(ii) Առանձին գանգատների վերաբերյալ փաստարկները**

**(ա) Գանգատ թիվ 50705/11՝ Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի**

149. Կառավարությունը մատնանշել է, որ 2005թ. Օրենքի շրջանակներում հարուցված վարույթում առաջին ու երկրորդ դիմումատուներն ունեցել են իրենց իրավունքները պաշտպանելու ու ապացույցներ ներկայացնելու հնարավորություն: Ուստի, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում նրանց իրավունքները չեն խախտվել:

**(բ) Գանգատ թիվ 11340/12՝ Գայչն ընդդեմ Բուլղարիայի**

150. Կառավարությունն անդրադարձել է առաջին դիմումատուի և պրն Գայչի 1990թ. ավանդային գործունեությանը և պրն Գայչի դատապարտումներին՝ վիճարկելով, որ դիմումատուների գույքի բռնագանձմանը հանգեցրած առաջին դիմումատուի դատապարտումը չպետք է դիտարկվի առանձին: Կառավարությունը մատնանշել է, որ առաջին դիմումատուի և պրն Գայչի ընկերությունների կողմից ստացված գումարների մեծ մասն ընդհանրապես չի հետագծվել, և վիճարկելով նշել է, որ տվյալ ընտանիքի՝ երկար տարիների ընթացքում «խոշոր չափերի հանցավոր գործունեության» լույսի ներքո 2005թ. Օրենքը ծառայել է որպես միակ միջոցը, որը նրանց զրկվել է ձեռք բերված ֆինանսական օգուտից:

151. Կառավարությունը մատնանշել է դիմումատուների ու պրն Գայչի օրինական եկամուտների և տվյալ ընտանիքի ծախսերի միջև ազգային մարմինների սահմանած «ահռելի տարբերությունը»: Կառավարությունը գտել է, որ ներպետական դատարանները «ճիշտ են կատարել ողջամիտ ենթադրություն» այն մասին, որ առկա է անուղղակի կապ տվյալ ընտանիքի ձեռք բերած ակտիվների ու նրանց հանցավոր գործունեության միջև: Կառավարությունը մատնանշել է, որ ներպետական վարույթի շրջանակներում դիմումատուները և պրն Գայչը իրենց տրամադրության տակ ունեցել են բոլոր դատավարական միջոցները՝ իրենց ակտիվների ծագումը հիմնավորելու համար:

**(գ) Գանգատ թիվ 26221/12-Բարովն ընդդեմ Բուլղարիայի**

152. Կառավարությունը մատնանշել է, որ դիմումատուն դատապարտվել է բազմաթիվ լուրջ հանցագործությունների համար, և որ ազգային դատարանների կողմից հաստատվել է նրա՝ «երակարատև հանցավոր գործունեությունը»: Այդ գործունեությունը կարող էր

հանգեցնել զգալի ֆինանսական միջոցների առաջացմանը: Ուստի, կարելի է ողջամտորեն ենթադրել, որ դիմումատուի բռնագանձված ակտիվները եղել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, և որ ազգային դատարանները ճիշտ են գործել՝ այդպես վարվելով:

**(դ) Գանգատ թիվ 71694/12-ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի**

153. Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ Գերագույն դատարանը, որը պարտավորեցրել է դիմումատուների ակտիվների բռնագանձումը, մանրազնիս քննել է վարույթի շրջանակներում կողմերի ներկայացրած ապացույցները և եկել է այն եզրահանգման, որ քննարկվող ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են: Թեև նրա որոշումը նախորդել է 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմանը (տե՛ս վերևում 105-106-րդ պարբերությունները), այնուամենայնիվ, այն չի հակասել դրան ու նախատեսել է պատճառահետևանքային կապ բռնագանձման ենթակա ակտիվների և առաջին ու երկրորդ դիմումատուների հանցավոր գործունեության միջև:

154. Կառավարությունը մատնանշել է, որ դիմումատուները շատ ցածր օրինական եկամուտ են ունեցել և հիմնավոր բացատրություն չեն ներկայացրել իրենց «նյութական բարեկեցության» վերաբերյալ: Ինչ վերաբերում է երրորդ դիմումատուի բնակարանին, ապա թեև նա փաստացի տնօրինել է այն, այնուամենայնիվ, չի հաստատվել որևէ օրինական աղբյուր, որը նրան հնարավորություն կտար ձեռք բերել այն:

**(ե) Գանգատ թիվ 44845/15-Ռուսն ընդդեմ Բուլղարիայի**

155. Կառավարությունը հայտնել է, որ ապօրինի ծառահատումն ըստ էության խնդրահարույց է Բուլղարիայում: Այն նշել է, որ ազգային դատարանները հաստատել են անուղղակի պատճառահետևանքային կապ դիմումատուից բռնագանձման ենթակա ակտիվների ու նրա հանցավոր գործունեության միջև: Դա արվել է համապատասխան փաստերի մանրազնիս ուսումնասիրությունից հետո ու հաշվի առնելով դիմումատուի՝ տարիների ընթացքում ունեցած աշխատանքային գործունեությունը: Զգալի նշանակություն է ունեցել այն հանգամանքը, որ Հանձնաժողովի բռնագանձման հայցը բավարարվել է միայն մասնակիորեն, ինչը ցույց է տալիս, որ դատարանները մանրազնիս են ուսումնասիրել դիմումատուի ակտիվների ծագումը:

**(գ) Գանգատ թիվ 17238/16-Կացարովն ընդդեմ Բուլղարիայի**

156. Կառավարությունը մատնանշել է, որ դիմումատուն ձեռք է բերել զգալի արժեք ունեցող ակտիվներ, սակայն չի ներկայացրել ապացույցներ՝ եկամտի օրինական աղբյուրի վերաբերյալ: Մեկ տարվա ընթացքում, երբ հայտնաբերվել է նրա կողմից թմրամիջոցների անօրինական տիրապետման փաստը՝ իրացնելու նպատակով, նա կնքել է նախնական պայմանագիր ու վճարում կատարել իր բնակարանի համար: Առկա է եղել խիստ անհամապատասխանություն նրա օրինական եկամուտների ու նրա ծախսերի միջև, որոնց համար նա որևէ հիմնավոր բացատրություն չի ներկայացրել: Ուստի, ազգային դատարանները ողջամտորեն եզրակացրել են, որ առկա է պատճառահետևանքային կապ բռնագանձման ենթակա ակտիվների ու դիմումատուի հանցավոր գործունեության միջև, ու պարտավորեցրել են բռնագանձել այդ ակտիվները՝ որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Դիմումատուն ողջամիտ հնարավորություն է ունեցել պաշտպանելու իր իրավունքները ներպետական վարույթի շրջանակներում:

157. Կառավարությունը մատնանշել է նաև հետևյալը՝ (i) 2000թ. և 2001թ. դիմումատուի գույքից առգրավված թմրամիջոցների արժեքը (650 բուլղարական լև կամ 332 եվրո) չի եղել աննշան, քանի որ տվյալի պահի դրությամբ «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորը տատանվել է 67 բուլղարական լևի (34 եվրո) և 100 բուլղարական լևի (51 եվրո) միջև, (ii) ինքնին դիմումատուն երբևէ չի պնդել, որ որպես տաքսի ծառայության վարորդ աշխատելուց և իր ծնողների բանջարանոցում աշխատելուց ստացել է չհայտարարագրված եկամուտ. նման հայտարարություններ արել են միայն նրա մայրը և քույրը. և (iii) դիմումատուի նկատմամբ բռնագանձման մասին որոշումը չի կատարվել երկու բռնագանձված ավտոմեքենաների մասով:

**(է) Գանգատ թիվ 63214/16 - Դիմիտրովներն ընդդեմ Բուլղարիայի**

158. Կառավարությունը նշել է, որ Վառնայի վերաքննիչ դատարանը մանրագնին ուսումնասիրել է այն հանգամանքը՝ արդյո՞ք կարող էր պատճառահետևանքային կապ հաստատվել բռնագանձման ենթակա ակտիվների ու դիմումատուի «հանցավոր գործունեության» միջև, և որ այդ առնչությամբ նրա եզրահանգումները եղել են հիմնավոր ու տրամաբանական: Ավելին, Վառնայի վերաքննիչ դատարանը կատարել է ողջամիտ եզրահանգումներ դիմումատուի եկամուտների ու ծախսերի առնչությամբ: Կառավարությունը մատնանշել է նաև, որ հարկային մարմիններին նրա կողմից վճարման ենթակա հարկերը չեն



վճարվել, և 2005թ. Օրենքով նախատեսված վարույթը եղել է միակ միջոցը՝ դիմումատուին իր հանցավոր գործունեությունից ստացված եկամուտներից զրկելու համար:

159. Ի վերջո, ինչ վերաբերում է շենքով հողակտորին, որը Վառնայի վերաքննիչ դատարանի պնդմամբ դիմումատուի կողմից ձեռք էր բերվել 26,882 բուլղարական լև (13,750 եվրո) գումարի դիմաց, իսկ այնուհետև եկամուտների ազգային գործակալության կողմից վաճառվել էր 4,680 բուլղարական լև (2,390 եվրո՝ տե՛ս վերևում 82-րդ և 88-րդ պարբերությունները) գումարի դիմաց, ապա Կառավարությունը վկայակոչել է [անշարժ] գույքի շուկայում առկա տատանումները և գնումն իրականացվելուց հետո դիմումատուի կողմից չպահպանված գույքը:

### **(բ) Դիմումատուները**

#### **(i) Գանգատ թիվ 50705/11 - Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի**

160. Դիմումատուները նշել են, որ առաջին դիմումատուն դատապարտվել է 1993թ. կատարած հանցագործությունների համար, և որ այդ պատճառով տարիներ անց չորս դիմումատուները զրկվել են զգալի արժեք ունեցող ակտիվներից: Այդ ակտիվների մի մասը ձեռք է բերվել ոչ միայն մինչև 2005թ. Օրենքն ուժի մեջ մտնելը, այլև մինչև առաջին դիմումատուի կողմից որևէ հանցագործություն կատարելը: Դիմումատուները պնդել են, որ որևէ պատճառահետևանքային կապ չի հաստատվել բռնագանձման ենթակա ակտիվների ու առաջին դիմումատուի կատարած հանցագործությունների միջև, և համարել են, որ 2005թ. Օրենքի հողված 4(1)-ով նախատեսված ենթադրությունը (տե՛ս վերևում 96-րդ պարբերությունը) «փաստացի հնարավոր չէ վիճարկել»: Ուստի, նրանք եղել են այն կարծիքին, որ 2005թ. Օրենքը թերի է, քանի որ դրանով թույլատրվել է այն ակտիվների բռնագանձումը, որոնք որևէ առումով առնչություն չունեն որևէ հանցավոր գործունեության հետ: Դիմումատուները պնդել են, որ իրենց որևէ ողջամիտ հնարավորություն չի ընձեռվել՝ իրենց եկամուտների օրինականությունը ապացուցելու համար:

161. Դիմումատուները վիճարկելով նշել են, որ 2005թ. Օրենքի կարգավորումը հստակ չէ՝ մատնանշելով ներպետական դատարանների հակասական գործելակերպը՝ բռնագանձման ենթակա ակտիվների ու ցանկացած հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապ հաստատելու անհրաժեշտության վերաբերյալ: Նրանք քննադատել են պետության՝ իրենց եկամուտներն ու ծախսերը երկարատև ժամանակահատվածի կտրվածքով ստուգելու հնարավորությունը՝ այն համարելով

«անտրամաբանական» հատկապես 1990-ական թվականներին Բուլղարիայում արձանագրված ֆինանսական անկայունության ու տատանվող գնաճի պայմաններում:

162. Դիմումատուները նշել են, որ երրորդ ու չորրորդ դիմումատուները չեն խախտել օրենքը, սակայն նրանց գույքը նույնպես բռնագանձվել է: 2005թ. Օրենքի ուժով ենթադրվել է, թե նրանք իմացել են, որ քննարկվող գույքը համարվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ՝ չնայած այն հանգամանքին, որ դա նրանց կողմից ձեռք էր բերվել նախքան առաջին դիմումատուի կողմից որևէ հանցագործություն կատարելը:

**(ii) Գանգատ թիվ 11340/12 - Գայն ընդդեմ Բուլղարիայի**

163. Դիմումատուները մատնանշել են, որ ներպետական մակարդակում առաջին դիմումատուի 2006թ. դատապարտումը պատճառ է հանդիսացել 2005թ. Օրենքի շրջանակներում վարույթ հարուցելու համար: Ուստի, անընդունելի է, որ Կառավարությունը հիմնվել է լրացուցիչ այնպիսի փաստերի վրա, ինչպիսիք են՝ առաջին դիմումատուի և պրն Գայնի 1990-ական թվականների ավանդային գործունեությունը կամ վերջինիս դատապարտումները: Այս փաստերը չեն քննարկվել ներպետական վարույթի շրջանակներում կամ չեն օգտագործվել՝ դիմումատուի ակտիվների բռնագանձումը հիմնավորելու համար: Առաջին դիմումատուն դատապարտվել է կոնկրետ հանցագործության համար, այն է՝ 42,172 բուլղարական լև (21,600 եվրո) գումարի հափշտակության համար, որն այնուհետև վերադարձվել է իրավաստիրոջը (տե՛ս վերևում 20-րդ պարբերությունը):

164. Դիմումատուները պնդել են, որ իրենց բռնագանձված ակտիվները չեն համարվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, և որ առկա չէ պատճառահետևանքային կապ այդ ակտիվների և առաջին դիմումատուի կատարած հանցագործության միջև: Նրանք պնդել են, որ 2005թ. Օրենքի հոդված 4(1)-ով սահմանված ենթադրության կիրառումը (տե՛ս վերևում 96-րդ պարբերությունը) չի ուղեկցվել բավարար երաշխիքներով, և որ 2005թ. Օրենքի կարգավորումը հստակ չէ, քանի նրանց ակտիվների բռնագանձման ժամանակ դրա կիրառումը եղել է ոչ հետևողական:

165. Դիմումատուները վիճարկել են ներպետական դատարանների եզրակացությունն այն մասին, որ առաջին դիմումատուն և պրն Գայն ակտիվներ են ձեռք բերել շուկայական արժեքով և ոչ թե գնման վերաբերյալ փաստաթղթերում նշված արժեքով: Նրանք վիճարկելով նշել են, որ առկա չէ ապացույց այն մասին, որ այս փաստաթղթերում նշված արժեքները եղել են ոչ ճշգրիտ: Ավելին, դիմումատուները չեն համաձայնել այն հանգամանքին, որ ներպետական դատարանները մերժել են ընդունելու փաստարկն այն մասին, որ պրն Գայնի պնդմամբ նրա կողմից 1990թ. Բուլղարիա բերված գումարը եղել է օրինական եկամուտ: Ի

վերջո, դիմումատուները վիճարկելով նշել են, որ իրենց գույքի բռնագանձումը հիմնված է եղել զուտ այն ենթադրությունների վրա, որ, մասնավորապես՝ բռնագանձված ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են, որ ակտիվները ձեռք են բերվել շուկայական արժեքով, և որ ընտանիքի կատարած օրական ծախսերի չափը նախատեսված է վիճակագրությամբ:

**(iii) Գանգատ թիվ 26221/12 - Բարովն ընդդեմ Բուլղարիայի**

166. Դիմումատուն վիճարկել է՝ նշելով, որ ազգային դատարանները չեն հաստատել պատճառահետևանքային կապ հանցագործությունների (որոնք 1994թ. և 1995թ. կատարելու համար նա դատապարտվել էր) ու այն բռնագանձված ակտիվների միջև, որոնք ձեռք էին բերվել շատ ավելի ուշ՝ մատնանշելով, որ հանցագործություններից բխող ցանկացած վնաս վերականգնվել է: Նա պնդել է, որ համապատասխան մարմիններն անգամ չեն փորձել ապացուցել քննարկվող պատճառահետևանքային կապի առկայությունը, և որ 2005թ. Օրենքն իր դեպքում մեկնաբանվել է այն իմաստով, որ անօրինական եկամուտները և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները հավասարեցվել են: Ավելին, ազգային դատարանները տվյալ հարցում դրսևորել են հակասական գործելակերպ, և իր դեպքում ցուցաբերված մոտեցումն ի վերջո մերժվել է Գերագույն դատարանի 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմամբ (տե՛ս վերևում 105-106-րդ պարբերությունները):

167. Դիմումատուն վիճարկել է՝ նշելով, որ 2005թ. Օրենքը չի նախատեսում հստակ պահանջներ այն մասին, թե ո՞ր եկամուտն է համարվում օրինական և ապացուցման ո՞ր չափանիշի հիմքով: Ուստի, նա պնդել է, որ իր բռնագանձված ակտիվները ձեռք են բերվել օրինական կարգով, սակայն ազգային դատարանները անհիմն ձևով մերժել են այդ առնչությամբ ներկայացված իր փաստարկները: Մասնավորապես, նա վիճարկել է դատարանի եզրահանգումն այն մասին, որ ինքը ձեռք է բերել ակտիվներ շուկայական արժեքով, ինչպիսի եզրահանգմամբ հաշվի չեն առնվել գնման մասին համապատասխան փաստաթղթերում մատնանշված արժեքները: Նկատի ունենալով Կառավարության ներկայացրած փաստարկն այն մասին, որ Բուլղարիայում ընդունված գործելակերպ է մատնանշել ավելի ցածր արժեք, քան այդպիսի փաստաթղթերում նշվող իրական գինն է (տե՛ս վերևում 146-րդ պարբերությունը), նա պնդել է, որ կոնկրետ իր դեպքում որևէ նման ոչ բարեխիղճ վարքագիծ չի դրսևորվել: Ավելին, նա պնդել է, որ փորձագիտական հաշվարկները քննարկվող գույքի շուկայական արժեքների վերաբերյալ «կամայական» բնույթ են կրել: Նա

նաև վիճարկել է տարիների կտրվածքով իր օրական ծախսերը հաշվարկելու եղանակը՝ վիճակագրական տվյալների հիման վրա:

168. Դիմումատուն վիճարկել է՝ նշելով, որ իր եկամուտների ու ծախսերի վերլուծությամբ շոշափվող երկարատև ժամանակահատվածի առկայությունը ենթադրում է, որ հնարավոր է առկա լինեն անճշտություններ: Ավելին, նման երկարատև ժամանակահատվածի կտրվածքով եկամուտների օրինական բնույթն ապացուցելու պարտականությունը եղել է անհամաչափ:

**(iv) Գանգատ թիվ 71694/12 - Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի**

169. Առաջին և երրորդ դիմումատուներն ու երկրորդ դիմումատուի ժառանգները վիճարկելով նշել են, որ ներպետական դատարանները չեն հաստատել որևէ պատճառահետևանքային կապ իրենց բռնագանձված ակտիվների ու դիմումատուներին առնչվող որևէ հանցավոր գործունեության միջև: Նրանք ընդունել են այն հանգամանքը, որ դիմումատուները չեն ներկայացրել բավարար օրինական եկամուտների առկայությունը հավաստող ապացույցներ, սակայն մատնանշել են, որ դա ինքնին չի նշանակում, որ իրենց ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են: Վերջինիս կապակցությամբ առկա չի եղել որևէ ապացույց: Ավելին, այն ժամանակ, երբ պարտավորեցվել է դիմումատուների գույքի բռնագանձումը, ներպետական դատարանները դրսևորել են հակասական գործելակերպ՝ բռնագանձման ենթակա ակտիվների ու ցանկացած հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապ հաստատելու անհրաժեշտության առնչությամբ, ինչն էլ հետագայում անհրաժեշտ է դարձրել Գերագույն դատարանի Պարզաբանող որոշման ընդունումը (տե՛ս վերևում 105-106-րդ պարբերությունները):

170. Առաջին և երրորդ դիմումատուներն ու երկրորդ դիմումատուի ժառանգները մատնանշել են, որ բռնագանձված ակտիվները ձեռք են բերվել նախքան առաջին ու երկրորդ դիմումատուների կողմից որևէ հանցագործություն կատարելը: Ավելին, երրորդ դիմումատուն ներգրավված չի եղել այս հանցագործությունների կատարման մեջ, և առկա չէ որևէ ապացույց այն մասին, թե նա տեղյակ է եղել, որ տվյալ բնակարանը կարող է լինել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ:

171. Դիմումատուները վիճարկելով նշել են, որ իրենց եկամուտների ու ծախսերի վերլուծության երկարատև ժամանակահատվածը դժվարացրել է փաստերի հաստատման գործընթացը:

**(v) Գանգատ թիվ 44845/15 -Ռուսնն ընդդեմ Բուլղարիայի**

172. Դիմումատուն վիճարկել է ներպետական դատարանների եզրահանգումն այն մասին, որ կարող է պատճառահետևանքային կապ հաստատվել բռնագանձման ենթակա ակտիվների ու այն հանցագործության միջև, որի կատարման համար նա դատապարտվել է: Նա մատնանշել է, որ տվյալ հանցագործությունը կատարվել է 2009թ., մինչդեռ բռնագանձված ակտիվների մեծ մասը ձեռք է բերվել ավելի վաղ: Ավելին, նա չի համաձայնել այն հանգամանքին, որ ներպետական դատարանները մերժել են ապացուցված համարել իր կողմից վկայակոչվող եկամուտների ծագումը:

**(vi) Գանգատ թիվ 17238/16 -Կացարովն ընդդեմ Բուլղարիայի**

173. Դիմումատուն մատնանշել է, որ 2000թ. և 2001թ. իրենից առգրավված թմրամիջոցների արժեքը գնահատվել է մոտ 650 բուլղարական լև (332 եվրո՝ տե՛ս վերևում 64-րդ պարբերությունը), մինչդեռ 2005թ. Օրենքով նախատեսված վարույթի շրջանակներում բռնագանձված ակտիվներն ունեցել են շատ ավելի բարձր արժեք:

174. Նա պնդել է, որ ինքը պետության դրսևորած կամայականության զոհն է դարձել: Նա վիճարկել է այն հանգամանքը, որ 2005թ. Օրենքով թույլատրվել է «զգալի արժեք ունեցող ցանկացած գույքի» բռնագանձումը, ինչի հետևանքով բռնագանձման վարույթում ամբաստանյալներն «առերեսվել են գործնականում անհնար առաջադրանքի հետ», այն է՝ ապացուցել քսանհինգ տարվա ընթացքում ձեռք բերված ակտիվների ծագումը: Հաճախ, ինչպես նրա դեպքում է, մարդիկ ստանում են այնպիսի եկամուտներ, որոնք չունեն գրավոր արտահայտված որևէ հետազոտություն, ինչպես, օրինակ՝ իրենց ընտանիքից ստացված գոյատևման միջոցներն են կամ չհայտարարագրված աշխատանքից ստացված գումարը: 2005թ. Օրենքով նախատեսված մոտեցումն այնպիսին է, որ դրանով նման եկամուտ ապահովող ակտիվներն ինքնաբերաբար որակվում են որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Անհասկանալի է՝ ինչպե՞ս պետք է ապացուցվի «օրինական» եկամտի ծագումը 2005թ. Օրենքով նախատեսված վարույթի շրջանակներում, ինչպես դա տեղի էր ունեցել ավելի վաղ քննված՝ *Դիմիտրովների* (վերևում վկայակոչված) գործում, որը վերաբերում էր համանման վարույթին: Դիմումատուն պնդել է, որ ազգային դատարաններն իր կողմից վկայակոչված եկամտի աղբյուրները գնահատել են ծայրահեղ ֆորմալիզմով:

175. Դիմումատուն վիճարկել է՝ նշելով, որ ներպետական դատարանները բավարար չափով չեն հիմնավորել պատճառահետևանքային կապի առկայությունն իր բռնագանձված

ակտիվների և ցանկացած հանցավոր գործունեության միջև: Նա հերքել է հանցավոր ճանապարհով որևէ եկամուտ ստացած լինելու հանգամանքը՝ մատնանշելով, որ 2000թ. և 2001թ. առգրավված թմրամիջոցները բռնագանձվել են ոստիկանության կողմից, և որ ինքը չի դատապարտվել որևէ լրացուցիչ հանցագործության համար: Ավելին, նա պնդել է, որ չնայած ինքը խոստովանել է թմրամիջոցների տիրապետման փաստը՝ իրացման նպատակով (տե՛ս վերևում 65-րդ պարբերությունը), այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ ինքը փաստացի վաճառել է որևէ նման թմրամիջոց ու ստացել ֆինանսական օգուտ:

**(vii) Գանգատ թիվ 63214/16 - Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի**

176. Դիմումատուն մատնանշել է, որ 2002թ. հարկային մարմիններն իրեն պարտավորեցրել են վճարելու իր հարկերը, և որ պետությունը չի գանձել այդ գումարը իր սեփական մարմինների դրսևորած անգործության հետևանքով: Ուստի, հիմնավորված չէ այն հանգամանքը, որ շատ տարիներ անց պետությունն իր դեմ հարուցել է բռնագանձման վարույթ: Դիմումատուն պնդել է, որ նման մոտեցումը «պետության կողմից դրսևորած կամայականություն է», որը բռնագանձման վարույթ էր հարուցել դիմումատուի պարտքը կազմող գումարի գանձումը չիրականացնելու սեփական թերացումից հետո:

177. Դիմումատուն վիճարկել է՝ նշելով, որ առկա չի եղել որևէ վստահելի մեթոդ՝ «բեկումնային տնտեսական անցման ու տատանվող գնաճի» ժամանակահատվածի կտրվածքով իր եկամուտներն ու ծախսերը հաշվարկելու համար: Իր կարծիքով Վառնայի վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ ինքը ձեռք է բերել շուկայական արժեքով գույք, հանգեցրել է արժեքների ծայրաստիճան ուռճացման: Դիմումատուն որպես օրինակ մատնանշել է քննարկվող գույքի միավորներից մեկը, որի արժեքը ներպետական վարույթի շրջանակներում գնահատվել էր 26,882 բուլղարական լև (13,750 եվրո), իսկ այնուհետև եկամուտների ազգային գործակալության կողմից այն վաճառվել էր 4,680 բուլղարական լև (2,390 եվրո) գումարի դիմաց (տե՛ս վերևում 82-րդ և 88-րդ պարբերությունները): Նա նաև նշել է, որ Վառնայի վերաքննիչ դատարանը անհիմն ձևով հաշվի չի առել իր կողմից վկայակոչված եկամտի որոշ աղբյուրներ:

178. Դիմումատուն վիճարկել է՝ նշելով, որ իր գույքի բռնագանձումը չի հետապնդել ընդհանուր շահերին ծառայող իրավաչափ նպատակ, քանի որ բռնագանձված գույքի միավորները չեն համարվել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, և համապատասխան մարմինները զուտ ենթադրություն են արել այդ առնչությամբ: Ի վերջո, նա վիճարկել է Վառնայի վերաքննիչ դատարանի կողմից այն դատապարտումների

վկայակոչումը, որոնք հիմք չեն ծառայել 2005թ. Օրենքով նախատեսված վարույթի հարուցման համար:

## 2. Դատարանի գնահատականը

### (ա) Ընդհանուր նկատառումները

#### (i) Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված կիրառելի կանոնը

179. Կոնվենցիային կից թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որով ըստ էության երաշխավորվում է սեփականության իրավունքը, նախատեսում է երեք առանձին կանոն: Առաջին կանոնը, որն արտահայտված է առաջին պարբերության առաջին նախադասության մեջ, սահմանում է ընդհանուր առմամբ գույքից անարգել օգտվելու սկզբունքը: Երկրորդ կանոնը, որն արտահայտված է միևնույն պարբերության երկրորդ նախադասության մեջ, կանոնակարգում է սեփականությունից զրկելու դեպքը և դրա նկատմամբ սահմանում է որոշակի պայմաններ: Երրորդ կանոնով, որն արտահայտված է երկրորդ պարբերության մեջ, ընդունվում է, որ Պայմանավորվող պետություններն իրավասու են, ի թիվս այլնի, վերահսկելու գույքի օգտագործումը՝ ընդհանուր շահերին համապատասխան: Երկրորդ և երրորդ կանոնները, որոնցով շրջափվում են գույքից անարգել օգտվելու իրավունքին միջամտության առանձին աստիճաններ, պետք է մեկնաբանվեն առաջին կանոնով սահմանված ընդհանուր սկզբունքի լույսի ներքո (տե՛ս, ի թիվս այլ գործերի, *Իմմոբիլյարե Սաֆֆին ընդդեմ Իտալիայի* [*Immobiliare Saffi v. Italy*] [ՄՊ] գործը, թիվ 22774/93, § 44, ՄԻԵԴ, 1999-V):

180. Կողմերի միջև վիճարկելի չէ այն հանգամանքը, որ քննվող գործում դիմումատուների գույքի բռնագանձումը ենթադրել է միջամտություն նրանց իրավունքներին՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում:

181. Բռնագանձման վերաբերյալ որոշ՝ ավելի վաղ կայացված գործերում (տե՛ս, օրինակ՝ *Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Phillips v. the United Kingdom*] գործը, թիվ 41087/98, § 51, ՄԻԵԴ, 2001-VII, *Սակոչան ընդդեմ Ավստրիայի* [*Saccoccia v. Austria*] գործը, թիվ 69917/01, § 86, 2008թ. դեկտեմբերի 18, *Բոնջիորնոն և մյուսներն ընդդեմ Իտալիայի* [*Bongiorno and Others v. Italy*] գործը, թիվ 4514/07, § 42, 2010թ. հունվարի 5, ինչպես նաև վերևում վկայակոչված Դիմիտրովների գործը, § 43), Դատարանը նշել է, որ դիմումատուների իրավունքներին կատարված միջամտության վրա տարածվել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերության գործողությունը, որն, ի թիվս այլնի, թույլ է տալիս Պայմանավորվող պետություններին վերահսկելու գույքի օգտագործումը՝ ընդհանուր շահին համապատասխան: Մյուս դեպքերում Դատարանը գտել է, որ համանման միջոցները

համարժեք են գույքից զրկելուն՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առաջին պարբերության երկրորդ նախադասության իմաստով (տե՛ս, օրինակ՝ *Անդոնոսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [Andonoski v. the former Yugoslav Republic of Macedonia] գործը, թիվ 16225/08, § 30, 2015թ. սեպտեմբերի 17, «Էս.Սի.» *Սերվիս Բենց Բոմ «Էս.Ար.Էլ»-ն ընդդեմ Ռումինիայի* [S.C. Service Benz Com S.R.L. v. Romania] գործը, թիվ 58045/11, § 30, 2017թ. հուլիսի 4, ինչպես նաև *Յաշարն ընդդեմ Ռումինիայի* [Yasar v. Romania] գործը, թիվ 64863/13, § 49, 2019թ. նոյեմբերի 26):

182. Քննարկվող գործում Դատարանն այն կարծիքին է, թե անհրաժեշտ չէ, որ այն որոշում կայացնի այն եզրահանգման վերաբերյալ, որը ենթադրում է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի կիրառելի կանոնը: Հիմնավորում ներկայացնելու հարցը կանոնակարգող սկզբունքները հիմնականում նույնն են, որոնք նախատեսում են, որ անհրաժեշտ է, որ միջամտությունը լինի օրինական ու բխի հանրային շահից, ինչպես նաև սահմանի արդարացի հավասարակշռություն հանրային շահի պահանջների ու դիմումատուների իրավունքների միջև (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) *Դենիսովան և Մոյսեյևան ընդդեմ Ռուսաստանի* [Denisova and Moiseyeva v. Russia] գործը, թիվ 16903/03, § 55, 2010թ. ապրիլի 1, և *Ունսպեդ Պակետ Սերվիսի Սան. Վե Տիկ. Ա.Շ.-ն ընդդեմ Բուլղարիայի* [Únspeď Paket Servisi SaN. Ve TiC. A.Š. v. Bulgaria] գործը, թիվ 3503/08, § 39-40, 2015թ. հոկտեմբերի 13):

### (ii) Օրինականությունը

183. Միջամտության՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին համապատասխանելու էական պայմանն այն է, որ այն պետք է լինի օրինական (տե՛ս *Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի* [Iatridis v. Greece] [ՄՊ] գործը, թիվ 31107/96, § 58, ՄԻԵԴ, 1999-II):

184. Քննարկվող գործում դիմումատուների իրավունքներին կատարված միջամտությունը հիմնված է եղել 2005թ. Օրենքի վրա (տե՛ս վերևում 90-110-րդ պարբերությունները), և դիմումատուները չեն վիճարկել, որ դրա հիմքում ընկած է եղել ներպետական օրենսդրությունը:

### (iii) Իրավաչափ նպատակը

185. «Սեփականությունից» անարգել օգտվելու հնարավորությանը պետական մարմնի կողմից կատարված ցանկացած միջամտություն կարող է արդարացվել միայն այն դեպքում, երբ այն նույնպես հետապնդում է իրավաչափ նպատակ՝ հանրային շահից ելնելով:



186. Դատարանը նշել է, որ քրեական վարույթի շրջանակներում բռնագանձումը համապատասխանում է հանրության ընդհանուր շահերին, քանի որ անօրինական գործունեությամբ ձեռք բերված կամ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների հաշվին վճարված դրամական միջոցների կամ ակտիվների բռնագանձումն անհրաժեշտ և արդյունավետ միջոց է հանցավոր գործունեության դեմ պայքարելու համար (տե՛ս *Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [*Raimondo v. Italy*] գործը, 1994թ. փետրվարի 22, § 30, Շարք Ա, թիվ 281-Ա): Ուստի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձման մասին որոշումը գործում է ընդհանուր շահերից ելնելով՝ հակադրվելով հանցավոր գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ կայացված որոշումներին, ինչպես նաև երաշխավորում է, որ հանցագործությունն օգուտ չի բերում (տե՛ս վերևում հիշատակված՝ *Դենիսովան և Մոյսեյևան ընդդեմ Ռուսաստանի* [*Denisova and Moiseyeva*] գործը, § 58, վերևում հիշատակված՝ *Ֆիլիպսի գործի լրացուցիչ վկայակոչումներով*, § 52, ինչպես նաև *Դասսա Ֆաունդեյշնը և մյուսներն ընդդեմ Լիխտենշտայնի* [*Dassa Foundation and Others v. Liechtenstein*](որոշում) գործը, թիվ 696/05, 2007թ. հուլիսի 10): Ներկա գործում, Պառլամենտում ընդունվող 2005թ. Օրենքին ուղեկցող բացատրական հուշագրի նպատակն է եղել «վերացնել հանցավոր ճանապարհով եկամուտներ ստանալու հնարավորությունը և կանխել նման եկամուտների օգտագործումը նոր հանցանքների կատարման համար կամ օրենքի այլ խախտումներ կատարելու համար», ինչպես նաև պայքարել փողերի լվացման դեմ (տե՛ս վերևում 91-րդ պարբերությունը): Կառավարությունը նաև պնդել է, որ 2005թ. Օրենքի նպատակն է եղել կենտրոնանալ «կազմակերպված ու լուրջ հանցագործությունների տնտեսական հիմքերի վրա» (տե՛ս վերևում 142-րդ պարբերությունը): Դրա լույսի ներքո, Դատարանը հավաստիանում է, որ 2005թ. Օրենքը, հանրային շահից ելնելով, հետապնդել է իրավաչափ նպատակ, այն է՝ կանխել գույքի անօրինական ձեռքբերումը հանցավոր գործունեության միջոցով և այդպիսի գույքի օգտագործումը (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) վերևում հիշատակված՝ *Ռայմոնդոյի* գործը, § 30, և *Սիլիկիենեն ընդդեմ Լիտվայի* [*Silickienė v. Lithuania*] գործը, թիվ 20496/02, § 65, 2012թ. ապրիլի 10):

#### (iv) Համաչափությունը

##### ա) Ընդհանուր սկզբունքները

187. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պահանջվում է նաև, որ ցանկացած միջամտություն լինի ողջամտորեն համաչափ իրականացման ենթակա նպատակին: Այլ կերպ ասած՝ պետք է հաստատել «արդարացի հավասարակշռություն» հանրության ընդհանուր

շահերի պահանջների ու անհատի հիմնարար իրավունքների պաշտպանությունից բխող պահանջների միջև: Հավասարակշռության վավերապայմանը բավարարված չէ այն դեպքում, երբ նշված անձանց վրա դրվում է չափազանց մեծ բեռ (տե՛ս ի թիվս մի շարք այլ գործերի՝ *Հունաստանի նախկին թագավորն ու մյուսներն ընդդեմ Հունաստանի* [*Former King of Greece and Others v. Greece*] [ՄՊ] գործը, թիվ 25701/94, § 89, ՄԻԵԴ, 2000-XII): Այդ համատեքստում պետությանը սովորաբար տրված են հայեցողության լայն շրջանակներ այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է քաղաքական, տնտեսական կամ սոցիալական ռազմավարության ընդհանուր միջոցներին (տե՛ս *Գոգիտիձեն և մյուսներն ընդդեմ Վրաստանի* [*Gogitidze and Others v. Georgia*] գործը, թիվ 36862/05, § 97, 2015թ. մայիսի 12):

188. Թեև Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը չի պարունակում որևէ հստակ ընթացակարգային պահանջ, այնուամենայնիվ, սեփականությունից անարգել օգտվելու անձի իրավունքին վերաբերող դատական վարույթը նույնպես պետք է անհատին շնորհի իր գործն իրավասու պետական մարմիններին ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, որի նպատակն է արդյունավետորեն վիճարկել այս դրույթով երաշխավորված իրավունքներին միջամտելու միջոցները (տե՛ս, ի թիվս այլ գործերի, *Սովտրանսավտո Հոլդինգս ընդդեմ Ուկրաինայի* [*Sovtransavto Holding v. Ukraine*] գործը, թիվ 48553/99, § 96, ՄԻԵԴ, 2002-VII): «Ջի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ը և մյուսները [*G.I.E.M. S.R.L. and Others v. Italy*] գործում գտնելով, որ միջամտությունը ողջամտորեն համաչափ չէ իրականացման ենթակա նպատակին՝ Դատարանն ընդգծել է հետևյալ գործոնները՝ առավել քիչ սահմանափակող այլընտրանքային միջոցների առկայության հնարավորությունը. կոնկրետ գործում՝ այն շինությունների ապամոնտաժումը, որոնց մասով չեն պահպանվել համապատասխան կանոնակարգերը, կամ քաղաքաշինական պլանի չեղարկումը, այլ ոչ թե բռնագանձում կիրառելը. պատասխանատվության միջոցի անսահմանափակ բնույթը, քանի որ այն առնչվել է ինչպես կառուցապատված, այնպես էլ չկառուցապատված հողատարածքին, և անգամ՝ երրորդ կողմին պատկանող տարածքներին. դիմումատուների մեղքի կամ անփութության աստիճանը կամ առնվազն՝ նրանց արարքի ու քննարկվող հանցագործության հարաբերակցությունը (տե՛ս «Ջի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ը և մյուսներն ընդդեմ Իտալիայի [*G.I.E.M. S.R.L. and Others v. Italy*] [ՄՊ] գործը, թիվ 1828/06 և մյուս երկու գործերը, § 301, 2018թ. հունիսի 28):

189. Դատարանը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում քննել է մի շարք գործեր, որոնք վերաբերում են բռնագանձման ներպետական տարբեր ռեժիմների հիման վրա հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձմանը, այդ թվում՝ ընդլայնված բռնագանձմանը՝ հանցավոր ճանապարհով ստացված օգուտների մասով ապացուցման պարտականության կամ գնահատումների փոփոխման հիմքով: Այդպես

վարվելով՝ այն ուսումնասիրել է օրենսդրությամբ սահմանված նպատակը, կիրառելի նյութաիրավական ու դատավարական երաշխիքները, ինչպես նաև ընթացքում սահմանել է նման գործերի դեպքում կիրառվող հիմնական սկզբունքները:

190. Իտալիայի դեմ հարուցված մի շարք գործերում Դատարանը գտել է, որ կասկածվող հանցավոր կազմավորման անդամների ակտիվների բռնագանձումը համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին: Այն մատնանշել է, որ Իտալիայում կազմակերպված հանցավորության խնդիրը հասել է «չափազանց անհանգստացնող մակարդակի», ինչն արդարացնում է վիճարկելի միջոցների կիրառումը: Ազգային դատարաններն ուսումնասիրել են այնպիսի ապացույցներ, որոնք վկայում են, որ դիմումատուները շփում են ունեցել հանցավոր կազմավորման անդամների հետ, և որ առկա է էական անհամապատասխանություն իրենց ֆինանսական միջոցների ու իրենց եկամուտների միջև (տե՛ս *Արկուրին և մյուսներն ընդդեմ Իտալիայի* [*Arcuri and Others v. Italy*] գործը (որոշում), թիվ 52024/99, ՄԻԵԴ, 2001-VII, *Ռիելան և մյուսներն ընդդեմ Իտալիայի գործը* [*Riela and Others v. Italy*] (որոշում), թիվ 52439/99, 2001թ. սեպտեմբերի 4, *Պիեռը և մյուսներն ընդդեմ Իտալիայի* [*Perre and Others v. Italy*] գործը (որոշում), թիվ 1905/05, 2007թ. ապրիլի 12, և վերևում հիշատակված՝ *Բոնջիոնոն և մյուսները* գործը, §§ 45-51):

191. Միացյալ Թագավորության դեմ հարուցված որոշ գործերում Դատարանը գտել է, որ թմրամիջոցների շրջանառությունից ստացված եկամուտների բռնագանձմամբ չի խախտվել համաչափության պահանջը՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: *Ֆիլիպսի* գործում (վերևում հիշատակված՝ §§ 53-54) դիմումատուն դատապարտվել է թմրամիջոցների շրջանառության համար, և անցկացվել է նրա ֆինանսական միջոցների մասով հետաքննություն: Դատավորը գտել է, որ այդ հետաքննության անցկացումից հետո նրա կողմից վճարման ենթակա գումարը համապատասխանում է այն գումարին, որը հնարավոր է՝ նա ստացած լինել վերջին տարիներին թմրամիջոցների շրջանառությունից: *Բաթլերն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Butler v. the United Kingdom*] գործում (որոշում), թիվ 41661/98, ՄԻԵԴ, 2002-VI) Դատարանը նշել է, որ այն մաքսային մարմինները, որոնք հայցել են դիմումատուի ակտիվների բռնագանձումը, պետք է այդ գործին հետամուտ լինեին դատարաններում՝ հիմնվելով դատական փորձաքննությամբ և անուղղակի փաստերով պայմանավորված ապացույցների վրա. ներպետական դատարանները ձեռնպահ են մնացել ներպետական օրենսդրությամբ սահմանված ենթադրությունների վրա որևէ ինքնաբերաբար եղանակով հիմնվելուց և չեն կիրառել այդ ենթադրությունները արդարացի լուսմաների պահանջներին չհամապատասխանող եղանակով: *Ֆիլիպսի* գործում կատարված եզրահանգումները

վերահաստատվել են *Գրեյսոնը և Բարնհեմն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Grayson and Barnham v. the United Kingdom*] գործում (թիվ 19955/05 և 15085/06, § 52-53, 2008թ. սեպտեմբերի 23): Դատարանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ներքո կատարած վերլուծության շրջանակներում գտել է նաև, որ դիմումատուների վրա նրանց ընթացիկ ֆինանսական վիճակի մասին արժանահավատորեն հաշվետու լինելու պարտավորություն ղնելն անհամատեղելի չի եղել արդարացի լուսմների կատեգորիայի հետ այն բանից հետո, երբ հաստատվել է այն հանգամանքը, որ դիմումատուները ներգրավված են եղել լայնածավալ և շահույթ ստանալու նպատակ հետապնդող՝ թմրամիջոցների առևտրի մեջ (տե՛ս վճռի 49-րդ պարբերությունը):

192. Ուսումնասիրելով կիրառվող միջոցի նպատակը՝ *Սիլկիենենի* (տե՛ս վերևում հիշատակված՝ 67-69-րդ պարբերությունները) գործում Դատարանը գտել է, որ այն վերաբերում է «բացառիկ» հանգամանքներին, այն է՝ պարբերաբար իրականացվող և լավ կազմակերպված հանցավոր գործունեությանը (մաքսանենգություն), և որ դիմումատուի ակտիվների բռնագանձումը կարող էր «էական նշանակություն ունենալ կազմակերպված հանցավորության դեմ պայքարում»: Այնուհետև, այն իր՝ համաչափության սկզբունքի վերլուծության շրջանակներում հաշվի է առել այն փաստը, որ ներպետական դատարանները բռնագանձման կատարումը պարտավորեցնելիս ձեռնպահ են մնացել մերկ կասկածների վրա հիմնվելուց, և հավաստիացել են նրանում, որ դիմումատուից բռնագանձման ենթակա յուրաքանչյուր իր ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով: Նույն եղանակով *Վեյցն ընդդեմ Էստոնիայի* [*Veits v. Estonia*] գործում (թիվ 12951/11, § 74, 2015թ. հունվարի 15) կատարված բռնագանձումը համարելով համաչափ՝ Դատարանը հաշվի է առել այն փաստը, որ ազգային դատարանները ուսումնասիրել և բավարար պատճառաբանությամբ հերքել են դիմումատուի մոր և տատի ներկայացրած փաստարկներն այն մասին, որ բռնագանձման ենթակա գույքը ձեռք չի բերվել հանցագործության կատարմամբ:

193. Համանմանորեն, Դատարանը հաշվի է առել «հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման ու վերացման» կարևորությունը՝ կաշառք վերցնելու համար դատապարտված պաշտոնյայի գործի շրջանակներում ընդունելով ընդլայնված բռնագանձման հիմնավորումը (տե՛ս *Թելբիսն ու Վիզիտուն ընդդեմ Ռումինիայի* [*Telbis and Viziteu v. Romania*] գործը, թիվ 47911/15, §§ 77-80, 2018թ. հունիսի 26): Արձանագրվել էր երկարատև ժամանակահատվածում տվյալ պաշտոնյայի կողմից կաշառք վերցնելու 291 դեպք, և վնաս էր պատճառվել պետության սոցիալական ապահովության բյուջետային միջոցներին: Դատարանը նշել է, որ դիմումատուների ընտանիքի կողմից բավականին կարճ ժամանակահատվածում ձեռք բերված զգալի չափով գույքը հստակորեն անհամաչափ էր

իրենց օրինական եկամուտներին, և «ողջամիտ» էր ակնկալել, թե այն դիմումատուները, որոնք ենթադրվում է, որ ոչ պատշաճորեն օգտվել էին հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներից, պետք է կատարեին իրենց մասով ապացուցման պարտականությունը՝ իրենց ակտիվների ոչ իրավաչափ ծագման վերաբերյալ դատախազի հիմնավորված կասկածները հերքելու միջոցով:

194. *Գոգիպիձեն և մյուսները* գործը (տե՛ս վերևում հիշատակված՝ 104-113 պարբերությունները) նույնպես վերաբերում է հանրային ծառայության ոլորտում կատարված կոռուպցիային: Առաջին դիմումատուն աշխատել է Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում՝ ներքին գործերի նախարարի տեղակալի և վերահսկիչ պալատի նախագահի պաշտոններում: Պատասխանող պետության կողմից ընդունված ընդլայնված բռնագանձման ընթացակարգի նպատակը գնահատելիս Դատարանը նկատել է, որ բազմաթիվ միջազգային կառույցներ, նկատելով Վրաստանում արձանագրված «կոռուպցիայի ահագանգող մակարդակը», հորդորել են Վրաստանի համապատասխան մարմիններին բռնագանձմամբ ստանալ սեփական եկամուտները, ինչպես նաև նկատել է, որ երկիրը վարում է «հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանն ու վերացմանն ուղղված» քաղաքականություն: Դատարանը նաև նշել է, որ դիմումատուի ակտիվների բռնագանձմանը հանգեցնող ներպետական վարույթն իրականացվել է մրցակցային դատավարությամբ, և որ ազգային դատարանները պատշաճորեն քննել են դատախազության մարմինների բռնագանձման պահանջը՝ «գործում առկա բազմաթիվ հիմնավորող փաստաթղթերի լույսի ներքո»: Դատարաններն արձանագրել են էական և փաստաթղթերով պատշաճորեն հիմնավորված անհամապատասխանություն դիմումատուների եկամտի ու նրանց բարօրության միջև, և որ նրանց ակտիվների ձեռքբերումը չէր կարող ֆինանսավորվել միայն առաջին դիմումատուի պաշտոնապես սահմանված աշխատավարձերով այն դեպքում, երբ մյուս դիմումատուները չեն ունեցել այլ՝ զգալի եկամտի աղբյուրներ:

195. Բավականին վերջերս, *Բալսամոն ընդդեմ Սան Մարինոյի* [*Balsamo v. San Marino*] գործը (թիվ 20319/17 և 21414/17, §§ 89-95, 2019թ. հոկտեմբերի 8) վերաբերել է փողերի լվացումից ստացված եկամուտներին: Ներպետական դատարանները հավաստիացել են, որ դիմումատուներից բռնագանձման ենթակա գումարն ունեցել է անօրինական ծագում, և որ դիմումատուներն ունեցել են ողջամիտ հնարավորություն իրենց փաստարկները ներկայացնելու համար:

196. Հակառակ դրան՝ այլ գործերում Դատարանը գտել է, որ կատարված բռնագանձումն անհամաչափ է այն դեպքում, երբ չի հաստատվել որևէ կապ բռնագանձված

գույքի ու որևէ հանցավոր գործունեության միջև: *Ռումմին ընդդեմ Էստոնիայի* [Rummi v. Estonia ] գործում (թիվ 63362/09, §§ 105-109, 2015թ. հունվարի 15) Դատարանն արձանագրել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, քանի որ ներպետական դատարանները հիմնվել են այն դրույթի վրա, որով թույլատրվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագանձումը, սակայն չեն հաստատել այն հանգամանքը, որ դիմումատուի ամուսնու կողմից, ում ժառանգն է եղել դիմումատուն, կատարվել է որևէ հանցագործություն. ամուսնու տնից առգրավվել են թանկարժեք քարեր, ու չնայած կարելի էր ենթադրել, որ նա կասկածվել է այդ առնչությամբ հանցագործության կատարման մեջ, այնուամենայնիվ, որևէ էական քննություն չի իրականացվել, և նա առհասարակ չի դատապարտվել: Երկրորդ, ամեն դեպքում, ներպետական մարմինները որևէ գնահատում չեն իրականացրել այն գումարների մասով, որոնք դիմումատուի ամուսինը կարող էր ձեռք բերած լինել հանցագործության կատարմամբ ու ներդնել թանկարժեք քարերի մեջ: Ուստի, Դատարանը «հնարավորություն չի ունեցել պարզելու՝ ինչպե՞ս կարող էր գույքը բռնագանձվել որպես հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք»: Ընդհակառակը, Դատարանը բռնագանձումը համարել է «կամայական միջոց», որը բխում է «ապացույցների ինչ-որ պատահական կորզումից»: Ի վերջո, Դատարանը մատնանշել է, որ չի իրականացվել որևէ առանձին գնահատում այն մասով, թե գույքի ո՞ր միավորները պետք է բռնագանձել, և որ դատական վարույթն է թերի եղել՝ հանգեցնելով նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտմանը:

197. Դատարանը միևնույն մոտեցումն է ցուցաբերել նաև *Գիիրինգսն ընդդեմ Նիդեռլանդների* [Geerings v. the Netherlands] գործում (թիվ 30810/03, §§ 41-51, 2007թ. մարտի 1), թեև այն վերաբերել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում բերված բողոքին: Գողության և գողությամբ հափշտակված իրերի շրջանառության համար դատապարտվելուց հետո դիմումատուն պարտավորեցվել էր հատուցելու «անօրինական ճանապարհով ձեռք բերված առավելությունը», որն առնչվում էր այս երկու հանցագործություններին, ինչպես նաև այլ հանցագործությունների, որոնց մասով նա արդարացվել էր: Այնուամենայնիվ, չէր ապացուցվել դիմումատուի կողմից որևէ այնպիսի ակտիվների տիրապետման փաստը, որոնց ծագման վերաբերյալ նա չկարողանար ներկայացնել համարժեք բացատրություն: Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում՝ նշելով, որ դատապարտման բացակայության և որևէ առավելություն փաստացի ձեռք բերած լինելու հանգամանքը հաստատված չլինելու պայմաններում, վիճարկելի բռնագանձումը կարող էր հիմնված լինել միայն «մեղավորության կանխավարկածի» վրա:

198. Դատարանն արձանագրել է նաև Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում մի շարք այնպիսի գործերում, որոնցում դիմումատուների ակտիվները բռնագանձվել են դրանք հանցագործությունների կատարման մեջ երրորդ կողմի կողմից օգտագործվելուց հետո: Դատարանը, մասնավորապես, նշել է, որ որևէ կապ չի հաստատվել ակտիվների սեփականատերերի ու համապատասխան անօրինական գործողության միջև. ավելին, հաճախ սեփականատերերն իրենց տրամադրության տակ չեն ունեցել որևէ արդյունավետ միջոց՝ բռնագանձբռնագանձմանը հակազդելու համար (տե՛ս, ի թիվս այլ գործերի, *Բաուլեր Ինթերնեյշնլ Յունիթն Ֆրանսիայի* [*Bowler International Unit v. France*] գործը, թիվ 1946/06, §§ 44-46, 2009թ. հուլիսի 23, «Բի.Քեյ.Էմ.» *Լոջիստիկ Տասիմացիլիկ Տիկարետ Լիմիթիդ Սիրկետի Սիրկետի Նի* [*B.K.M. Lojistik Tasimacilik Ticaret Limited Sirketi v. Slovenia*] գործը, թիվ 42079/12, §§ 45-49, 2017թ. հունվարի 17, վերևում վկայակոչված՝ *Անդոնուկիի* գործը, §§ 35-38, ինչպես նաև վերևում վկայակոչված՝ *Ունսպեդ Պակետ Սերվիսի Սան. Վե Տիկ. Ա.Շ.-ի* գործը, § 45): Մյուս գործերում, որոնցում համապատասխան մարմինները բռնագանձել են դիմումատուների կողմից պետական սահմանին չհայտարարագրված գումարները (անգամ դրանց օրինական ծագումը հաստատվելու դեպքում), Դատարանը կիրառած պատասխանատվության միջոցը համարել է անհամաչափորեն ծանր (տե՛ս *Գրիֆհորսթն Նի* [*Grifhorst v. France*] գործը, թիվ 28336/02, §§ 94-105, 2009թ. փետրվարի 26, *Գիրլյանն Նի* [*Gyrlyan v. Russia*] գործը, թիվ 35943/15, §§ 24-31, 2018թ. հոկտեմբերի 9, ինչպես նաև *Տոգրուլն Նի* [*Togrul v. Bulgaria*] գործը, թիվ 20611/10, §§ 42-46, 2018թ. նոյեմբերի 15): Դատարանն արձանագրել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում *Դենիսովան և Մոյսեյևան Նի* [*Denisova and Moiseyeva v. Russia*] գործում (տե՛ս վերևում վկայակոչված 59-64-րդ պարբերությունները), որում դիմումատուների ակտիվները բռնագանձվել են երրորդ կողմի դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում, և դիմումատուներին չի ընձեռվել իրենց իրավունքները պաշտպանելու և բռնագանձման միջոցը վիճարկելու ողջամիտ հնարավորություն:

199. Ի վերջո, *Դիմիտրովների* գործը (տե՛ս վերևում վկայակոչված 42-56-րդ պարբերությունները) վերաբերել է ոչ թե հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձմանը, այլ ներպետական իրավունքի շրջանակներում որպես «աշխատանքի հետ չկապված եկամուտ» վկայակոչված եկամուտներին: Դատարանը նշել է, որ դիմումատուների ակտիվների բռնագանձումը չի հետապնդել իրավաչափ նպատակ՝ հանրային շահից ելնելով, քանի որ դրանով, մասնավորապես, ո՛չ հիմնավորվել է այն հանգամանքը, որ դիմումատուների «աշխատանքի հետ չկապված եկամուտները» համարվում են հանցավոր

ճանապարհով ստացված եկամուտներ, ո՛չ էլ գործը վերաբերել է հարկային օրենսդրության խախտումներին: Քանի որ դիմումատուները պետք է ապացուցեին իրենց եկամուտների «օրինական» բնույթը, Դատարանը քննադատել է ներպետական օրենսդրության մեջ հստակության բացակայությունն այն առումով, թե ինչն է համարվում այդպիսի եկամուտ, ինչպես նաև քննադատել է այդ առնչությամբ ազգային դատարանների հակասական եզրահանգումները: Այդ հիմքով Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուները պատշաճորեն պաշտպանված չեն եղել կամայականությունից, և արձանագրել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

### **բ) Ներկա գործը**

200. Անդրադառնալով ներկա գործի փաստական հանգամանքներին՝ Դատարանը նկատում է, որ 2005թ. Օրենքն ունեցել է գործողության լայն շրջանակ, քանի որ դրանով նախատեսված բռնազանձման վարույթը հնարավոր է եղել նախաձեռնել մի շարք հանցագործությունների հիմքով (տե՛ս վերևում 95-րդ պարբերությունը) և ոչ թե զուտ հանցավոր կազմավորման հետ առնչություն ունեցող առանձնապես լուրջ հանցագործությունների, թմրամիջոցների շրջանառության, հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կամ փողերի լվացման հիմքով, ինչպես Դատարանի կողմից քննված ու վերևում դիտարկված գործերի մեծամասնության դեպքում է: Դատարանն այն կարծիքին է, որ 2005թ. Օրենքում թվարկված ոչ բոլոր հանցագործությունների պարագայում կարելի է որոշամտորեն ենթադրել, որ դրանք անպայմանորեն հանգեցնում են եկամտի գոյացմանը: Ուստի, 2005թ. Օրենքով նախատեսված բռնազանձման ռեժիմը ոչ բոլոր դեպքերում է վերաբերել այն հանգամանքներին, որոնք կարող են որակվել որպես «բացառիկ» հանգամանքներ, ինչպես, օրինակ՝ վերևում նշված 192-րդ և 193-րդ պարբերություններում վկայակոչված՝ *Սիլիկիենեի* և *Թելբիսն ու Վիզիպուի* գործերի դեպքում է:

201. Դատարանը դիտարկում է նաև 2005թ. Օրենքի՝ ժամանակային կտրվածքով լայն կիրառությունը: Նախ, դա հնարավոր է եղել կիրառել նույնիսկ այն դեպքում, երբ ոչ հիմնական հանցագործությունը կատարվել է Օրենքն ուժի մեջ մտնելուց երկար ժամանակ առաջ (օրինակ, *Տոդորովը* և *մյուսները* գործում առաջին դիմումատուի կողմից 1993թ. կատարված հանցագործության վրա ի վերջո տարածվել է 2005թ. Օրենքի գործողությունը, իսկ *Կացարովի* գործում հանցագործությունները կատարվել են 2000 թվականին և 2001 թվականին. տե՛ս վերևում 6-րդ և 64-րդ պարբերությունները): Երկրորդ, պետությունն իրավասու է եղել բռնազանձելու՝ բռնազանձման վարույթը հարուցելուց քսանհինգ տարի առաջ ձեռք բերված ակտիվները՝ այս ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով դատապարտված անձանց



կողմից իրենց եկամուտների ծագումն ապացուցելու համապատասխան պարտավորությանը զուգահեռ: Բռնագանձվել են նաև 2005թ. Օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ ձեռք բերված ակտիվները (տե՛ս վերևում 98-րդ պարբերությունը):

202. Ողջամիտ է ենթադրել, որ 2005թ. Օրենքի գործողության լայն շրջանակները, ինչպես քննարկվում է վերևում, և հատկապես՝ օրենքի հետադարձ ուժով կիրառմամբ կարգավորվող երկարատև ժամանակահատվածները, դիմումատուների համար դժվարացրել են եկամուտների օրինական բնույթը կամ իրենց ակտիվների օրինական ծագումն ապացուցելու հնարավորությունը: Որոշ գործերում նրանց վրա ոչ միայն դրված է եղել ավելի վաղ տարիների կտրվածքով իրենց ֆինանսական վիճակի մասին հաշվետու լինելու պարտավորություն (տե՛ս, օրինակ՝ *Գայջի և Ռուսևի* գործերը վերևում վկայակոչված 23-րդ և 55-րդ պարբերություններում), այլև էական է նաև այն հանգամանքը, որ տվյալ ժամանակահատվածի որոշ դրվագներ բնութագրվել են Բուլղարիայում տիրող մեծ տնտեսական փոփոխություններով ու տատանվող գնաճով (տե՛ս, օրինակ՝ *Անգելովն ընդդեմ Բուլղարիայի [Angelov v. Bulgaria]* գործը, թիվ 44076/98, § 25, 2004թ. ապրիլի 22, *Քեփիթըլ Բենք «Էյ. Դի.»-ն ընդդեմ Բուլղարիայի [Capital Bank AD v. Bulgaria]* գործը, թիվ 49429/99, § 45, ՄԻԵԴ, 2005-XII (հատվածներ), ինչպես նաև վերևում հիշատակված *Դիմիտրովների* գործը՝ 48-րդ պարբերությունը, որում Դատարանը գտել է, որ նման իրավիճակը «անհերքելիորեն հանգեցրել է որոշակի անհստակության ու անորոշության»):

203. Հարկ է նաև նշել, որ Բուլղարիայում ստվերային տնտեսության տոկոսային հարաբերությունն առնվազն 1993-ից ի վեր բարձր է (տե՛ս վերևում 123-րդ պարբերությունը): Իհարկե, համապատասխան մարմինները պետք է հնարավորություն ունենային միջոցներ ձեռնարկել՝ այս երևույթի դեմ պայքարելու համար. այդ առնչությամբ առաջնային փաստաթղթերը հարկային ու սոցիալական ապահովության մասին օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերն են, որոնք ներառում են իրենց սեփական ընթացակարգային երաշխիքները: Միննույն ժամանակ, 2005թ. Օրենքի նպատակն է եղել բռնագանձել հանցավոր ճանապարհով ստացված ակտիվներն այն պարագայում, երբ նման ակտիվները հնարավոր չի եղել ամբողջությամբ կամ մասամբ բռնագանձել Քրեական օրենսգրքի շրջանակներում (տե՛ս վերևում 91-րդ պարբերությունը):

204. 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման ռեժիմը սկզբունքորեն սահմանափակված չի եղել նաև անձի հաստատված օրինական եկամուտների ու նրա կողմից տիրապետվող ակտիվների միջև էական անհամապատասխանություններով: Թեև վարույթի հարուցման համար նախատեսված է եղել քանակական պահանջ, այն է՝ «զգալի արժեք ունեցող» ակտիվների տիրապետումը անձի կողմից (տե՛ս վերևում 94-րդ պարբերությունը),

այնուամենայնիվ պարզվում է, որ վարույթը հարուցելուն պես հաստատված օրինական եկամուտների ու տիրապետվող ակտիվների միջև առկա ցանկացած անհամապատասխանություն բավարար է եղել բռնագանձում պարտավորեցնելու համար:

205. Այնուամենայնիվ, նկարագրված իրավիճակում՝ 2005թ. Օրենքի կիրառման լայն շրջանակների և վերևում նկարագրված գործոնների ուժով դիմումատուների համար իրենց ակտիվների ծագումը հիմնավորելու ակնհայտ դժվարությունների պայմաններում, ներպետական օրենսդրությունը այդ ակտիվների օրինական ծագումն ապացուցելու պարտավորությունը դրել է դիմումատուների վրա: Դա արվել է 2005թ. Օրենքի հոդված 4(1)-ով նախատեսված ենթադրության չափորոշի միջոցով՝ սահմանելով, որ եկամտի որևէ օրինական աղբյուր չմատնանշելու դեպքում ակտիվները պետք է համարվեն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ (տե՛ս վերևում 96-րդ պարբերությունը): Դիմումատուներն անդրադարձել են այդ դրույթին՝ համարելով, որ այդ ենթադրությունը «փաստացի հնարավոր չէ վիճարկել» և պնդելով, որ այն չի ուղեկցվում բավարար երաշխիքներով, կամ որ դրանով ցանկացած չհայտարարագրված եկամուտ ու անգամ ընտանիքի անդամներից ստացված գոյատևման միջոց ինքնաբերաբար համարվում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտ (տե՛ս վերևում 160-րդ, 164-րդ, 166-րդ, 169-րդ և 174-րդ պարբերությունները): Դատարանն իր մասով ընդունել է, որ յուրաքանչյուր իրավական համակարգի շրջանակներում ենթադրությունները ճանաչվում են օրենքի կամ փաստի ուժով, և որ Կոնվենցիայով սկզբունքորեն չի արգելվում նման ենթադրությունների կիրառումն այնքանով, որքանով դրանք ուղեկցվում են արդյունավետ դատական երաշխիքներով (տե՛ս *Արկուրին և մյուսները* գործը, վերևում վկայակոչված որոշումը): Ուստի, Դատարանը չի կարող համաձայնել դիմումատուների հետ այն առումով, որ ապացուցման պարտականության փոփոխությունը ինքին հանգեցրել է անհամաչափ միջամտության իրենց սեփականության իրավունքին: Այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում դիմումատուների կողմից իրենց ապացուցման պարտականությունը կատարելիս հանդիպած դժվարությունները, որոնք պայմանավորված են բռնագանձման վարույթով նախատեսված երկարատև ժամանակահատվածներով և վերևում նկարագրված գործոններով:

206. 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման ռեժիմի մի շարք այլ առանձնահատկություններ նույնպես նշանակություն ունեն այն հարցում, թե արդյո՞ք պետք է «արդարացի հավասարակշռություն» հաստատել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին համապատասխան, թե՞ ոչ: Ներպետական դատարանները, որոնք պարտավորեցրել են դիմումատուների ակտիվների բռնագանձումը, ակնհայտորեն նախապես հակված են եղել ենթադրելու, որ դիմումատուներն առնչություն ունեն այլ՝

ընդհանրապես չքննված հանցագործությունների հետ, և որ դրանց կատարումը շարունակվում է մի քանի տարի ժամանակահատվածի կտրվածքով: Դա ուղղակիորեն բխում է 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման ռեժիմի ընդհանուր մոտեցումից, ինչպես նաև ապացուցվում է այն փաստի ուժով, որ թեև քննվող որոշ առանձին գործերում դիմումատուների կողմից հիմնական հանցագործությունից ստացված ցանկացած շահույթ հատուցվել է (օրինակ՝ *Գայջի* և *Բարովի* գործերում, տե՛ս վերևում 20-րդ և 32-րդ պարբերությունները), այնուամենայնիվ, ներպետական դատարանները դիմել են բռնագանձում կիրառելուն՝ չնայած այն հանգամանքին, որ բռնագանձված գույքը չէր կարող ծագել հիմնական հանցագործությունից:

207. Այնուհետև, որոշ դիմումատուներ վիճարկել են ներպետական դատարանների կողմից իրենց եկամուտներն ու ծախսերը գնահատելու եղանակը՝ գտնելով, որ այն կամայական է: Մասնավորապես, նրանք հարցին մոտեցել են այն տեսանկյունից, որ դատարանները հիմնվել են նրանց կողմից ձեռք բերված ակտիվների շուկայական արժեքի վրա, որը սովորաբար ավելի բարձր է, քան գնման համապատասխան փաստաթղթերում նշված արժեքը (տե՛ս վերևում 165-րդ, 167-րդ և 177-րդ պարբերությունները): Դատարանը նաև նշում է, որ արժեքը հաշվարկվել է փորձագետների կողմից՝ ըստ ակտիվների գնման ժամանակի, իսկ երբեմն էլ՝ ըստ նախորդ տարիների: Թեև սկզբունքորեն ամբաստանյալներն ազատ են եղել ապացուցելու, որ իրենք ձեռք չեն բերել գույք դրա շուկայական արժեքով (տե՛ս վերևում 108-րդ պարբերությունը), և գործում դիմումատուներից մեկին՝ պրն Կացարովին հաջողվել է ապացուցել այդ հարցն այն ժամանակ, երբ իր բնակարանի վաճառողները՝ որպես վկա, ցուցմունք են տվել (տե՛ս վերևում 70-րդ պարբերությունը), այնուամենայնիվ չի կարող վիճարկվել այն հանգամանքը, որ գործնականում նման հնարավորություն տրված է եղել բոլոր դիմումատուներին: Այդուհանդերձ, Դատարանը հաշվի է առնում ազգային մակարդակում առաջադրված վիճարկվող մոտեցման հիմնավորումը (տե՛ս վերևում 108-րդ պարբերությունը), ինչպես նաև Կառավարության անդրադարձն առկա այն պրակտիկային, համաձայն որի՝ ավելի քիչ հարկեր վճարելու նպատակով գնման փաստաթղթերում խարդախությամբ հայտարարագրվում են ավելի քիչ արժեքներ (տե՛ս վերևում 146-րդ պարբերությունը):

208. Ընթացակարգային կանոնն այն մասին, որ 5,000 բուլղարական լևը գերազանցող արժեքով ակտիվների վերաբերյալ պայմանագրերի կնքման փաստը չի կարող ապացուցվել միայն վկայի ցուցմունքներով (տե՛ս վերևում 113-րդ պարբերությունը), դժվարություններ է ստեղծել դիմումատուների համար: Դատարանը սկզբունքորեն կասկածի տակ չի առնում նման կանոնը, սակայն նկատում է, որ 2005թ. Օրենքի կիրառմանը վերաբերող կոնկրետ

հանգամանքները, ինչպես, օրինակ՝ դիմումատուների ֆինանսական վիճակի՝ ըստ նախորդող մի շարք տարիների ուսումնասիրությունը, կարող էր խոչընդոտել այն փաստերի ապացուցման գործընթացը, որոնց վրա հիմնվել են դիմումատուները:

209. Դատարանն այնուհետև հաշվի է առնում ներպետական դատարանների՝ տարբեր ժամանակահատվածների ակտիվների արժեքները համեմատելու նպատակով «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորը վկայակոչելու գործելակերպը: Այս մոտեցումը նկարագրվել է ազգային դատարանների կողմից որպես ակտիվի իրական արժեքը որոշելու միակ օբյեկտիվ մեթոդ (տե՛ս վերևում 109-րդ պարբերությունը), որի պայմաններում «նվազագույն ամսական աշխատավարձ» հաշվարկային միավորը սահմանվում է Նախարարների խորհրդի կողմից՝ արհեստակցական միությունների ու գործատուների հետ խորհրդակցելուց հետո, և պարբերաբար թարմացվում է (տե՛ս վերևում՝ 109-րդ պարբերության վերջում): Նման մեթոդը թեև մի կողմից՝ իրապես հակակշռում է բարձր գնաճի պայմաններում, երկարատև ժամանակահատվածների կտրվածքով ակտիվների արժեքը որոշելու հարցում առկա անհստակությունները, այնուամենայնիվ, մյուս կողմից՝ այն ստեղծում է իր սեփական դժվարությունները արժեքները համեմատելու հարցում և հանգեցնում անճշտությունների առաջացման ռիսկերի: Համանման մոտեցումը, այն է՝ գումարների փոխարկումը ԱՄՆ դոլարով արտահայտված դրանց՝ տվյալ պահի դրությամբ գործող համարժեքով, քննադատվել է *Դիմիտրովների* գործում (վերևում հիշատակված՝ 48-րդ պարբերությունը), քանի որ այն ունի անհստակություններ ու անճշտություններ ստեղծելու հավանականություն:

210. Վերևում նշված նկատառումների լույսի ներքո Դատարանն այն կարծիքին է, որ 2005թ. Օրենքով սահմանված ընթացակարգը, իր ամբողջության մեջ, դիմումատուների վրա զգալի բեռ է դրել. Օրենքի կիրառման շրջանակները շատ լայն են, քանի որ այն վերաբերում է քննված ժամանակահատվածներին, ինչպես նաև այն հանցագործությունների ցանկին, որոնք կարող են հանգեցնել բռնագանձման վարույթի հարուցմանը. ակտիվների օրինական ծագման և, ընդհանուր առմամբ, գործի փաստական հանգամանքների վերաբերյալ ապացույցներ ներկայացնելը կարող էր դժվար լինել, ինչի պատճառը եղել է դիմումատուների՝ նախորդող մի շարք տարիների կտրվածքով իրենց ֆինանսական վիճակը ներկայացնելու անհրաժեշտությունը և վերևում նկարագրված՝ ապացույցների ներկայացման սահմանափակումները, որոնք դեպքերի մեծամասնության պարագայում գործել են տնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում, ինչպես նաև պատճառը եղել է նաև այն փաստը, որ ստվերային տնտեսության տոկոսային հարաբերությունը, հետևաբար՝ Բուլղարիայում չհայտարարագրված եկամուտները եղել են հարաբերականորեն բարձր.

միևնույն ժամանակ, 2005թ. Օրենքով կիրառվել է ակտիվների հանցավոր ծագման վերաբերյալ ենթադրությունը, ինչը նշանակում է, որ ոչ թե համապատասխան մարմիններից պահանջվում է ապացուցել այդպիսի ծագման փաստը, այլ նրանց թույլատրվում է հիմնվել օրինական եկամուտների բացակայության հանգամանքի վրա. որոշ դեպքերում դա հանգեցրել է առանց ապացույցների ու մանրամասների անուղղակի ենթադրության այն մասին, որ դիմումատուները զբաղվել են այլ հանցավոր գործունեությամբ:

211. Թեև 2005թ. Օրենքով սահմանված ընթացակարգի՝ վերևում նկարագրված թերություններից ոչ մեկը սկզբունքորեն, առանձին վերցրած, չէր կարող որոշակիորեն ազդել դիմումատուների դեմ կիրառվող բռնագանձման միջոցների համաչափության վրա, այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում դրանց կուտակային ազդեցությունը: Դատարանն այն կարծիքին է, որ վերոնշյալ գործոնները՝ միասին վերցրած, կարող էին հանգեցնել այնպիսի անհստակության ու անճշտության, որը Դատարանի կողմից քննադատվել է *Դիմիտրովների* գործում (վերևում վկայակոչված 47-49-րդ պարբերությունները), այլ կերպ ասած՝ դրանք կարող էին հանգեցնել նրան, որ 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձումը լիներ անհամաչափ դրանով հետապնդվող նպատակին:

212. Այս պայմաններում, միջամտության համաչափությունը գնահատելիս, Դատարանը հետևում է Բուլղարիայի Գերագույն դատարանի դիրքորոշմանը, որն իր՝ 2014թ. Պարզաբանող որոշման մեջ, որը պայմանավորված էր մինչ այդ 2005թ. Օրենքի շրջանակներում հաստատված հակասական նախադեպային իրավունքով, նշել է, որ պետք է հաստատվի ուղղակի կամ անուղղակի պատճառահետևանքային կապ, կամ պետք է ենթադրվի այդպիսի կապի առկայությունը բռնագանձման ենթակա ակտիվների ու հանցավոր գործունեության միջև: Գերագույն դատարանն այնուհետև նշել է, որ նման կապի առկայության հաստատումը պետք է «տրամաբանորեն հիմնավորվի»՝ ելնելով յուրաքանչյուր գործի առանձին փաստական հանգամանքներից, և որ պատճառահետևանքային կապ չհաստատելը կարող է նշանակել, որ դատապարտված անձի սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն անհամաչափ է (տե՛ս վերևում 104-106-րդ պարբերությունները): Դատարանը նաև Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում համապատասխան հավասարակշռություն հաստատելու համար որոշիչ է համարում Գերագույն դատարանի կողմից պահանջվող պատճառահետևանքային կապի հաստատումը, այսինքն՝ այն հանգամանքը, թե արդյո՞ք ազգային մարմիններն ապահովել են առնվազն որոշակի այնպիսի մանրամասներ, որոնցով հիմնավորվում է հանցագործության

հաստատված փաստի ուժով բռնագանձման ենթակա ակտիվների ծագումը՝ յուրաքանչյուր կոնկրետ գործի համատեքստում:

213. Նման մոտեցումն արտացոլվել է նաև Դատարանի՝ վերևում հիշատակված նախադեպային իրավունքում: Դատարանն իր համաչափության վերլուծության շրջանակներում հաշվի է առել դիմումատուների մեղավորության կամ անփութության աստիճանը (տե՛ս վերևում հիշատակված «Ջի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ը և մյուսները գործը, 301-րդ պարբերություն) կամ փորձել է հավաստիանալ, որ բռնագանձման ենթակա ակտիվների անօրինական կամ հանցավոր ծագումը հաստատվել է ներպետական վարույթի շրջանակներում՝ թերևս քրեաիրավական ապացուցման չափորոշիչի հիման վրա: Ֆիլիպսի գործում (տե՛ս վերևում 53-րդ պարբերությունը) Դատարանը մատնանշել է, որ բռնագանձման ենթակա գումարը համապատասխանում է այն գումարին, որն ըստ ազգային դատարանների, դիմումատուն ստացել էր տարիներ շարունակ իրականացված թմրամիջոցների շրջանառությունից: Սիլիկոնների գործում (տե՛ս վերևում 68-րդ պարբերությունը) Դատարանը մատնանշել է, որ բռնագանձման ենթակա յուրաքանչյուր առարկայի դեպքում դատարանները հավաստիացել են, որ այն գնվել է «հանցավոր կազմավորման անօրինական շահույթը կրկին ներդնելու» միջոցով: Համանմանորեն, Վեյցի գործում (տե՛ս վերևում հիշատակված 74-րդ պարբերությունը) Դատարանը նկատել է, որ ներպետական դատարանները բավարար պատճառաբանությամբ մերժել են դիմումատուի մոր ու տատի պնդումներն այն մասին, որ բռնագանձման ենթակա գույքը ձեռք չի բերվել հանցավոր ճանապարհով: Ռումմիի գործում (վերևում հիշատակված 107-րդ պարբերությունը), ինչպես նաև Գիլրինգսի գործում (վերևում հիշատակված 47-րդ պարբերությունը) Դատարանը, արձանագրելով Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում (տե՛ս համապատասխանաբար՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը), մատնանշել է, որ բռնագանձված ակտիվները որևէ կերպ չեն ներկայացվել որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ, և որ ներպետական դատարանները, պարտավորեցնելով կատարել բռնագանձում, չեն իրականացրել այն գումարների գնահատումը, որոնք հնարավոր է, որ ձեռք բերված լինեին հանցավոր ճանապարհով:

214. Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2014թ. ապրիլի 3-ի թիվ 2014/42/ԵՄ Հրահանգի հոդված 5(1)-ով, որը պարզաբանվում է նույն Հրահանգի 21-րդ պարբերությամբ, նույնպես պահանջվում է, որ «ընդլայնված բռնագանձման» դեպքում ազգային դատարանը հավաստիանա, որ բռնագանձման ենթակա գույքը «բխում է հանցավոր արարքից» (տե՛ս վերևում 117-118-րդ պարբերությունները): Այդ առնչությամբ 21-րդ պարբերությամբ նախատեսվում են լրացուցիչ բացատրություններ՝ մատնանշելով, մասնավորապես, որ

ակտիվը կարող է լինել «ընդլայնված բռնագանձման» առարկա այն դեպքում, երբ դատարանը կարող է «ողջամտորեն ենթադրել», որ «էականորեն առավել, քան հավանական է», որ այն ձեռք է բերվել հանցավոր արարքի կատարումից, այլ ոչ թե այլ գործունեությունից (տե՛ս վերևում 118-րդ պարբերությունը):

215. Համաչափությանը վերաբերող իր մոտեցումն ամփոփելու համար Դատարանը նկատում է, որ թեև 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի՝ վերևում նկարագրված հավանական թերությունները ինքնաբերաբար չեն ենթադրում, որ դիմումատուների իրավունքներին որևէ միջամտություն անհամաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակներին, այնուամենայնիվ, դրանց կուտակային ազդեցությունը կարող էր լինել այնպիսին, որ դրանով խախտվեր վարույթի հավասարակշռությունը՝ հոգուտ պետության: Ուստի, Դատարանը ստորև ուսումնասիրվող առանձին դեպքերում գտնում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում պահանջվող արդարացի հավասարակշռությունն ապահովված է այն դեպքում, երբ որպես դիմումատուների իրավունքների հակակշիռ և երաշխիք՝ ներպետական դատարանները տրամադրել են որոշակի մանրամասներ հանցավոր արարքի առնչությամբ, որից ենթադրաբար առաջացել են բռնագանձման ենթակա ակտիվները, , ինչպես նաև ողջամտորեն ցույց են տվել, որ այդ ակտիվները կարող էին լինել փաստված հանցավոր արարքից ստացված եկամուտներ:

216. Նման վերլուծության իրականացման ընթացքում Դատարանի գնահատականը, որպես կանոն, հակված է լինում ներպետական դատարանների գնահատականին, եթե դիմումատուները չեն ապացուցում, որ նման գնահատականը կամայական է կամ ակնհայտորեն անհիմն (տե՛ս, համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), վերևում վկայակոչված՝ *Արկուրին և մյուսները* գործը, վերևում հիշատակված որոշումը, ինչպես նաև վերևում վկայակոչված՝ *Բոնջիոնոն և մյուսները* գործը, 49-րդ պարբերություն):

### **(բ) Առանձին գանգատների վերաբերյալ**

#### **(i) Գանգատ թիվ 50705/11 -Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի**

217. Առաջին դիմումատուն դատապարտվել է 2004թ., ի թիվս այլոց՝ 1993թ. կատարված շորթման փորձի համար, և այդ հիմքով 2007թ. Հանձնաժողովը նախաձեռնել է բռնագանձման վարույթ նրա ու երկրորդ դիմումատուի դեմ (տե՛ս վերևում 6-7-րդ պարբերությունները): Վարույթը հանգեցրել է չորս դիմումատուների՝ 896,300 եվրո արժողությամբ ակտիվների բռնագանձմանը, որոնց զգալի մեծամասնությունը ձեռք է բերվել 2000թ. և 2005թ. (տե՛ս վերևում 9-րդ պարբերությունը. կարևոր բացառություն է կազմում

1993թ. առաջին դիմումատուի կողմից ձեռք բերված առանձնատունը, որը փոխանցվել էր նրա հորը 2003թ., տե՛ս վերևում՝ 7-րդ պարբերության վերջում):

218. Դատարանը գտնում է, որ միջամտությունը դիմումատուների իրավունքներին Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում եղել է օրինական (տե՛ս վերևում 184-րդ պարբերությունը): Ավելին, Դատարանը վկայակոչում է իր եզրահանգումն այն մասին, որ 2005թ. Օրենքով հետապնդվել են իրավաչափ նպատակներ՝ հանրային շահից ելնելով (տե՛ս վերևում 186-րդ պարբերությունը):

219. Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք միջամտությունը դիմումատուների իրավունքներին համաչափ է եղել հետապնդվող որևէ իրավաչափ նպատակի, Դատարանը կրկին մատնանշում է, որ առաջին դիմումատուն դատապարտվել է 1993թ. կատարված շորթման փորձի համար: Թեև ականհայտ չէ, որ նման հանցագործությունը՝ զուտ հանցափորձի տեսքով, կարող էր հանգեցնել որևէ եկամտի առաջացման, և չի ենթադրվում, որ առաջին դիմումատուն զբաղվել է որևէ այլ հանցավոր գործունեությամբ, այնուամենայնիվ դատապարտումը հանգեցրել է զգալի արժեք ունեցող ակտիվների բռնագանձմանը: Ինչպես նշվել է վերևի 217-րդ պարբերությունում, այդ ակտիվների զգալի մեծամասնությունը ձեռք է բերվել քննարկվող հանցագործությունը առաջին դիմումատուի կողմից կատարելուց շատ տարիներ անց:

220. Բացի դրանից Դատարանը նշել է, որ 2005թ. Օրենքի կիրառմանը վերաբերող կոնկրետ հանգամանքներում, համապատասխան արդարացի հավասարակշռություն ապահովված լինելու մասին եզրակացություն կատարելու համար, այսինքն՝ որ միջամտությունը դիմումատուների սեփականության իրավունքին համաչափ է եղել որևէ հետապնդվող իրավաչափ նպատակի, անհրաժեշտ է, որ ազգային մարմինները տրամադրեն առնվազն որոշ մանրամասներ ենթադրյալ հակաիրավական այն արարքի մասին, որը հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև հաստատեն որոշակի պատճառահետևանքային կապ այդ ակտիվների ու հակաիրավական արարքի միջև (տե՛ս վերևում 212-րդ և 215-րդ պարբերությունները): Գերագույն դատարանը տվյալ կապը սահմանել է լայն կերպ՝ նշելով, որ այն կարող է լինել ուղղակի կամ անուղղակի, ուղղակիորեն հաստատված կամ ենթադրվող (տե՛ս վերևում 105-106-րդ և 212-րդ պարբերությունները):

221. Թեև գործի փաստական հանգամանքների համաձայն՝ առաջին դիմումատուի կողմից 1993թ. կատարված հանցագործության և դիմումատուների՝ որպես կանոն, շատ ավելի ուշ ձեռք բերած ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, որևէ կերպ ականհայտ չի եղել, ինչպես քննարկվում է վերևում, այնուամենայնիվ, ներպետական դատարանները բռնագանձման հայցը քննելիս որևէ ջանք չեն գործադրել՝



նման կապի առկայությունը հիմնավորելու համար: Նրանք մատնանշել են իրենց կողմից արձանագրված անհամապատասխանությունն առաջին ու երկրորդ դիմումատուների եկամուտների ու ծախսերի միջև, առանց որևէ տեսակի լրացուցիչ պատճառաբանության, և մերժել են այդ առնչությամբ առաջին ու երկրորդ դիմումատուների առարկությունները (տե՛ս վերևում 14-րդ պարբերությունը): Ավելին, նրանք չեն մատնանշել՝ արդյո՞ք բռնագանձման ենթակա ակտիվների արժեքը հավասար է դիմումատուների եկամուտների ու ծախսերի միջև հաստատված անհամապատասխանությանը (տե՛ս վերևում 14-րդ և 204-րդ պարբերությունները): Ինչպես նշվել է, ազգային դատարանները ընդհանրապես չեն փորձել նաև պատճառաբանել, որ առաջին դիմումատուն առնչություն է ունեցել որևէ այլ հանցավոր գործունեության հետ:

222. Հաշվի առնելով 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի հավանական թերությունները, ինչպես նաև համապատասխան արդարացի հավասարակշռություն հաստատելու համար իր կողմից անհրաժեշտ համարվող երաշխիքների բացակայությունը (տե՛ս վերևում 200-215-րդ պարբերությունները)՝ Դատարանը այն կարծիքին է, որ չի հաստատվել, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում դիմումատուների իրավունքներին միջամտությունը համաչափ է եղել 2005թ. Օրենքով հետապնդվող որևէ իրավաչափ նպատակի:

223. Ուստի, անհրաժեշտ չէ ուսումնասիրել դիմումատուների առանձին փաստարկները՝ երրորդ ու չորրորդ դիմումատուների առանձնատան բռնագանձման մասով (տե՛ս վերևում 162-րդ պարբերությունը):

224. Տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

**(ii) Գանգատ թիվ 11340/12 - Գայջն ընդդեմ Բուդարիայի**

225. 2006թ. առաջին դիմումատուն դատապարտվել է յուրացման համար: Նա հափշտակել է 21,600 եվրոյին համարժեք գումար այն ընկերությունից, որը թեև սեփականությամբ պատկանել է իրեն ու իր ամուսնուն՝ պրն Գայջին, այնուամենայնիվ գտնվել է լուծարման գործընթացում և, հետևաբար՝ կառավարվել է հավատարմագրային կառավարչի կողմից: Գումարն այնուհետև վերադարձվել է դրա իրավատիրոջը (տե՛ս վերևում 20-րդ պարբերությունը): Դատապարտումը հանգեցրել է երկու դիմումատուների ու պրն Գայջի դեմ հարուցված բռնագանձման վարույթին և, ի վերջո՝ սեփականությամբ իրենց պատկանող մի շարք ակտիվների բռնագանձմանը:

226. Ինչպես նշվել է վերևում (տե՛ս 218-րդ պարբերությունը), Դատարանը դիմումատուների իրավունքներին կատարված միջամտությունը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում համարում է օրինական և նկատում է, որ 2005թ. Օրենքով հետապնդվել է իրավաչափ նպատակ՝ հանրային շահից ելնելով:

227. Անդրադառնալով իրավաչափության հարցին՝ Դատարանը ևս մեկ անգամ մատնանշում է, որ դիմումատուների դեմ բռնագանձման վարույթը հարուցվել է այն բանից հետո, երբ առաջին դիմումատուն դատապարտվել է յուրացման կոնկրետ դեպքի առթիվ: Դրանից չի հետևում, որ այդ հանցագործությունից ստացվել է որևէ նյութական օգուտ, քանի որ դիմումատուի կողմից հափշտակված գումարը վերադարձվել է դրա իրավատիրոջը (տե՛ս վերևում 20-րդ պարբերությունը):

228. Կառավարությունն անդրադարձել է այնպիսի լրացուցիչ փաստերի, ինչպիսիք են՝ առաջին դիմումատուի և պրն Գայջի 1990-ական թվականների ավանդային գործունեությունը, ինչպես նաև պրն Գայջի դատապարտումները ծանրացնող հանգամանքներում կատարված խարդախության, ծանրացնող հանգամանքներում կատարված յուրացման ու հարկերից խուսափելու համար (տե՛ս վերևում 18-19-րդ պարբերությունները): Կառավարությունը այս առնչությամբ վիճարկել է՝ նշելով, որ տվյալ ընտանիքը նախաձեռնել է «լայնածավալ հանցավոր գործունեություն» (տե՛ս վերևում 150-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, ինչպես նկատել են դիմումատուները (տե՛ս վերևում 163-րդ պարբերությունը), այս լրացուցիչ հանգամանքներն ընդհանրապես ո՛չ մատնանշվել են, ո՛չ դրանց վրա հիմնվել են բռնագանձման վարույթի շրջանակներում, ո՛չ էլ դրանք օգտագործվել են իրենց ակտիվների բռնագանձումը հիմնավորելու համար: Համապատասխանաբար, Դատարանը արդարացված չի համարում դրանք հաշվի առնելը:

229. Ուստի, այն վերահաստատում է, որ դիմումատուների ակտիվները բռնագանձվել են՝ հիմք ընդունելով առաջին դիմումատուի՝ այն հանցագործության համար դատապարտումը, որից որևէ նյութական օգուտ չի ստացվել:

230. Թեև, համապատասխանաբար, առաջին դիմումատուի հանցավոր արարքի և բռնագանձված ակտիվների միջև կապը որևէ կերպով ակնհայտ չի եղել, այնուամենայնիվ ներպետական դատարանները չեն փորձել հաստատել դրա առկայությունը: Նրանք զուտ վկայակոչել են 2005թ. Օրենքի հոդված 4(1)-ով նախատեսված ենթադրությունը, ըստ որի Վառնայի վերաքննիչ դատարանն ուղղակիորեն նշել է, որ որևէ լրացուցիչ հիմնավորում չի պահանջվում (տե՛ս վերևում 27-28-րդ պարբերությունները): Հավասարապես բոլոր դատարանները չեն մատնանշել՝ արդյո՞ք բռնագանձման ենթակա ակտիվների արժեքը հավասար է դիմումատուների ու պրն Գայջի եկամուտների ու ծախսերի միջև առկա

անհամապատասխանությանը (տե՛ս վերևում 27-28-րդ պարբերությունները և 204-րդ պարբերությունը): Ի վերջո, ներպետական դատարանները չեն փորձել պարզաբանել՝ ի՞նչ լրացուցիչ հանցավոր գործունեությամբ են զբաղվել առաջին դիմումատուն ու պրն Գայիչը. ինչպես նշվել է, այդ առնչությամբ նրանք չեն քննարկել կամ հիմք ընդունել որևէ փաստ:

231. Դատարանը կրկին անդրադառնում է վերևում հիշատակված իր եզրահանգմանն այն մասին, որ 2005թ. Օրենքի կիրառմանը վերաբերող կոնկրետ հանգամանքներում ազգային մարմիններից պահանջվել է տրամադրել առնվազն որոշ մանրամասներ ենթադրյալ հակաիրավական այն արարքի մասին, որը հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև հաստատել որոշակի պատճառահետևանքային կապի առկայություն այդ ակտիվների ու հակաիրավական արարքի միջև (տե՛ս վերևում 212-րդ և 215-րդ պարբերությունները): Դա չի կատարվել քննարկվող գործում:

232. Հետևաբար, քանի որ դիմումատուներին չեն տրամադրվել այն երաշխիքները, որոնք Դատարանն անհրաժեշտ է համարում համապատասխան արդարացի հավասարակշռություն ապահովելու համար, նրանց ակտիվների բռնագանձումը համարվել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում նրանց իրավունքներին կատարված անհամաչափ միջամտություն:

233. Դրա լույսի ներքո Դատարանն անհրաժեշտ չի համարում քննարկել դիմումատուների՝ հատկապես այն եղանակին վերաբերող լրացուցիչ փաստարկները, որով ներպետական դատարանները որոշել են նրանց եկամուտներն ու ծախսերը (տե՛ս վերևում 165-րդ պարբերությունը):

234. Ուստի, տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

**(iii) Գանգատ թիվ 26221/12 -Քարովն ընդդեմ Բուլղարիայի**

235. 2006թ. դիմումատուն համաձայնեցման վարույթով համաձայնություն է կնքել քրեական հետապնդման մարմինների հետ՝ ընդունելով այն փաստը, որ իր կողմից կատարվել է մի քանի գողություն, ավազակություն և զենքի անօրինական տիրապետում: Այդ բոլոր հանցագործությունները կատարվել են 1994թ. և 1995թ.: 1995թ. և 2001թ. միջև ընկած ժամանակահատվածում դիմումատուն գտնվել է մինչդատական կալանքի տակ: Ներպետական դատարանը, որն այնուհետև հաստատել է համաձայնեցման վարույթով կնքված համաձայնությունը, ուղղակիորեն նշել է, որ դիմումատուի կատարած հանցագործություններից բխող բոլոր նյութական վնասները հատուցվել են (տե՛ս վերևում 32-րդ պարբերությունը): Դատապարտումը հիմք է ծառայել դիմումատուի դեմ բռնագանձման

վարույթ հարուցելու համար, որի շրջանակներում նրա կողմից 2005թ. և 2008թ. միջև ընկած ժամանակահատվածում ձեռք բերված գույքի միավորները ճանաչվել են որպես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ ու բռնագանձվել (տե՛ս վերևում 33-40-րդ պարբերությունները):

236. Դատարանը գտնում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում դիմումատուի իրավունքներին կատարված միջամտությունը եղել է օրինական (տե՛ս վերևում 184-րդ պարբերությունը), և կրկին վկայակոչում է իր եզրահանգումն այն մասին, որ 2005թ. Օրենքով հետապնդվել են իրավաչափ նպատակներ՝ հանրային շահից ելնելով (տե՛ս վերևում 186-րդ պարբերությունը):

237. Անդրադառնալով համաչափության հարցին՝ Դատարանն այն կարծիքին է, որ դիմումատուի կողմից կատարված հանցագործությունների և բռնագանձված ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը որևէ կերպ ակնհայտ չի եղել՝ արձանագրելով, որ նրա հանցավոր գործունեությունն իրականացվել է 1994թ. և 1995թ., և որ ճանաչվել է այն փաստը, որ դրանից բխող բոլոր նյութական վնասները հատուցվել են, ինչպես նաև որ բռնագանձված ակտիվները դիմումատուի կողմից ձեռք են բերվել շատ տարիներ անց, այդ թվում՝ նրա կողմից կալանքի տակ գտնվելու զգալի ժամանակահատված անցնելուց հետո: Այդուհանդերձ, ներպետական դատարանները դիմումատուի դեմ ներկայացված բռնագանձման հայցը քննելիս որևէ ջանք չեն գործադրել քննարկվող պատճառահետևանքային կապը հիմնավորելու համար: Նրանք գտել են, որ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ 2005թ. Օրենքը այդպիսի ակնհայտ պահանջ չի պարունակում (տե՛ս վերևում 35-րդ և 39-րդ պարբերությունները): Ավելին, ներպետական դատարանները չեն մատնանշել՝ արդյո՞ք բռնագանձման ենթակա ակտիվների արժեքը հավասար է դիմումատուի եկամուտների ու ծախսերի միջև առկա անհամապատասխանությանը, թե՞ ոչ (տե՛ս վերևում 37-րդ, 39-րդ և 204-րդ պարբերությունները): Նրանց կողմից չի հիմնավորվել նաև որևէ եզրահանգում այն մասին, թե արդյո՞ք դիմումատուն կատարել է որևէ լրացուցիչ հանցագործություն կամ արդյո՞ք զբաղվել է որևէ այլ հանցավոր գործունեությամբ, թե՞ ոչ:

238. Ինչպես նշվել է վերևում, 2005թ. Օրենքի կիրառման առնչությամբ, որպեսզի հաստատվի այն հանգամանքը, որ ապահովվել է անհրաժեշտ հավասարակշռություն հանրային շահի ու առանձին իրավունքներ պաշտպանելու անհրաժեշտության միջև, Դատարանն ազգային մարմիններից պահանջում է տրամադրել առնվազն որոշ մանրամասներ ենթադրյալ հակաիրավական այն արարքի մասին, որը հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև հաստատել որոշակի

պատճառահետևանքային կապի առկայություն այդ ակտիվների ու հակաիրավական արարքի միջև (տե՛ս վերևում 212-րդ ու 215-րդ պարբերությունները): Ինչպես նշվել է վերևում, դա չի արվել, և ներպետական դատարանները չեն քննարկել այդ հարցերը:

239. Համապատասխանաբար, դիմումատուի ակտիվների բռնագանձումը համարվել է անհամաչափ միջամտություն նրա իրավունքներին՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում:

240. Այդ եզրահանգման լույսի ներքո Դատարանն անհրաժեշտ չի համարում ուսումնասիրել դիմումատուի լրացուցիչ փաստարկները՝ հատկապես այն եղանակի առնչությամբ, որով ներպետական դատարանները գնահատել են նրա ֆինանսական վիճակը (տե՛ս վերևում 167-րդ պարբերությունը):

241. Տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

**(iv) Գանգատ թիվ 71694/12 - Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի**

242. 2008թ. առաջին և երկրորդ դիմումատուները դատապարտվել են 2007թ. հունվարից մինչև հունիսն ընկած ժամանակահատվածում կատարած մի քանի հանցագործությունների համար, որոնց վրա տարածվել է 2005թ. Օրենքի գործողությունը (տե՛ս վերևում 42-րդ պարբերությունը), որը հիմք է ծառայել նրանց ու երրորդ դիմումատուի դեմ բռնագանձման վարույթ հարուցելու համար: Արդյունքում, դիմումատուները կորցրել են երկու բնակարանները և գույքի այլ միավորներ, որոնց մի մասը, մասնավորապես՝ առաջին ու երկրորդ դիմումատուների բնակարանը (տե՛ս վերևում 43-րդ պարբերությունը), ձեռք էր բերվել նախորդող տարիներին:

243. Ինչպես նշվել է վերևում, Դատարանը գտնում է, որ միջամտությունը դիմումատուների իրավունքներին օրինական է և նկատում է, որ 2005թ. Օրենքով հետապնդվել են իրավաչափ նպատակներ՝ հանրային շահերից ելնելով:

244. Գերագույն դատարանը, որն իր 2012թ. մայիսի 4-ի վճռով պարտավորեցրել է բռնագանձում իրականացնել, եզրակացրել է, որ դիմումատուները չեն ապացուցել, որ նրանք վիճարկվող ակտիվները ձեռք են բերել այն եկամտով, որը կարող էր համարվել ապացուցված ու օրինական (տե՛ս վերևում 49-51-րդ պարբերությունները): Առաջին ու երրորդ դիմումատուները, ինչպես նաև երկրորդ դիմումատուի ժառանգները սկզբունքորեն չեն համաձայնել այդ եզրահանգումներին (տե՛ս վերևում 169-րդ պարբերությունը):

245. Նրանք, մյուս կողմից, վիճարկելով նշել են, որ չի հաստատվել այն հանգամանքը, որ բռնագանձված ակտիվները համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ (տե՛ս վերևում 169-րդ պարբերությունը):

246. Դատարանը նկատում է, որ Գերագույն դատարանը որևէ ջանք չի գործադրել հիմնավորելու համար, որ բռնագանձման ենթակա ակտիվներն առնչություն ունեն առաջին և երկրորդ դիմումատուների՝ որևէ հաստատված հանցավոր գործունեության հետ, ուստի, համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Այն զուտ ենթադրություն է արել այդ առնչությամբ այն եզրահանգումից հետո, որ դիմումատուները չեն ներկայացրել բավարար օրինական եկամուտների վերաբերյալ ապացույցներ (տե՛ս վերևում 51-րդ պարբերությունը):

247. Ինչպես արդեն նշվել է, հաստատվել է այն հանգամանքը, որ առաջին ու երկրորդ դիմումատուները 2007թ. հունվարից մինչև հունիսն ընկած ժամանակահատվածում զբաղվել են հանցավոր գործունեությամբ, մինչդեռ բռնագանձված ակտիվների մի մասը, մասնավորապես՝ առաջին ու երկրորդ դիմումատուների բնակարանը, ձեռք է բերվել շատ ավելի վաղ (տե՛ս վերևում 42-43-րդ պարբերությունները):

248. Այն հանգամանքը, որ Գերագույն դատարանը չի հաստատել որևէ պատճառահետևանքային կապի առկայություն առաջին ու երկրորդ դիմումատուների հանցավոր գործունեության ու բռնագանձված ակտիվների միջև, բավարար է Դատարանի կողմից եզրակացնելու համար, որ չի ապահովվել համապատասխան արդարացի հավասարակշռություն՝ հանրային շահերի ներքո 2005թ. Օրենքով հետապնդվող իրավաչափ նպատակների և դիմումատուների առանձին իրավունքների միջև, այսինքն՝ որ դիմումատուների ակտիվների բռնագանձումը համարվում է անհամաչափ միջամտություն նրանց իրավունքներին՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում: Դատարանը կրկին վկայակոչում է վերևում նշված իր վերլուծությունը՝ 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի հավանական թերությունների վերաբերյալ, ինչպես նաև այն երաշխիքները, որոնք անհրաժեշտ են համապատասխան արդարացի հավասարակշռություն ապահովելու համար (տե՛ս 200-215-րդ պարբերությունները):

249. Վերոնշյալ նկատառումները նշանակում են, որ անհրաժեշտություն չկա, որ Դատարանի կողմից վերլուծվեն դիմումատուների՝ հատկապես երրորդ դիմումատուի իրավիճակին վերաբերող փաստարկները, որը ներգրավված չի եղել որևէ հանցավոր գործունեության մեջ (տե՛ս վերևում 170-րդ պարբերությունը):

250. Ուստի, Դատարանը եզրակացնում է, որ տեղի է ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

**(v) Գանգատ թիվ 44845/15 -Ռուսն ընդդեմ Բուլղարիայի**

251. 2012թ. դիմումատուն դատապարտվել է 2009թ. կատարած ապօրինի ծառահատման համար (տե՛ս վերևում 54-րդ պարբերությունը): Քանի որ այդ հանցագործության վրա տարածվել է 2005թ. Օրենքի գործողությունը, դատապարտումը հիմք է ծառայել նրա դեմ բռնագանձման վարույթ հարուցելու համար, որը հանգեցրել է մի շարք ակտիվների բռնագանձմանը, որոնք ձեռք էին բերվել 2006թ. և 2011թ. (տե՛ս վերևում 56-րդ պարբերությունը):

252. Ինչպես վերևում նշվել է, Դատարանը գտնում է, որ միջամտությունը դիմումատուի իրավունքներին օրինական է, և նկատում է, որ 2005թ. Օրենքով հետապնդվել են իրավաչափ նպատակներ՝ հանրային շահից ելնելով:

253. Վերևում Դատարանի կողմից նշվել է, որ 2005թ. Օրենքի կիրառմանը վերաբերող կոնկրետ հանգամանքներում, համապատասխան արդարացի հավասարակշռություն ապահովված լինելու մասին եզրակացություն կատարելու համար, այսինքն՝ որ դիմումատուների սեփականության իրավունքին միջամտությունը համաչափ է եղել որևէ հետապնդվող իրավաչափ նպատակի, ազգային մարմիններից պահանջվել է ներկայացնել առնվազն որոշ մանրամասներ ենթադրյալ հակաիրավական այն արարքի մասին, որը հանգեցրել է բռնագանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև հաստատել որոշակի պատճառահետևանքային կապի առկայություն այդ ակտիվների ու հակաիրավական արարքի միջև (տե՛ս վերևում 212-րդ և 215-րդ պարբերությունները): Դատարանը նաև նշել է, որ այդ առնչությամբ իր գնահատականը, որպես կանոն, հակված է ազգային դատարանների գնահատականին, քանի դեռ չի ապացուցվել, որ այդ գնահատականը կամայական է կամ ակնհայտորեն անհիմն (տե՛ս վերևում 216-րդ պարբերությունը):

254. Ներկա գործում Տարգովիշտեի շրջանային դատարանը և Վառնայի վերաքննիչ դատարանը վերլուծել են բռնագանձման ենթակա ակտիվների և դիմումատուի հավանական հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը՝ կատարելով պատճառաբանված եզրահանգումներ: Նրանք վերլուծել են դիմումատուի աշխատանքային գործունեությունը և օրինական եկամուտները, ինչպես նաև հաշվի են առել այն ամսաթվերը, երբ նրա կողմից ձեռք են բերվել վիճարկվող գույքի միավորները: Ավելին, նրանք հաշվի են առել կոնկրետ այն հանցագործության առարկայի հարաբերականորեն ցածր արժեքը, որի կատարման համար դիմումատուն մեղավոր էր ճանաչվել (տե՛ս վերևում

59-60-րդ պարբերությունները): Գերագույն դատարանը գտել է, որ ստորին աստիճանի դատարանները ճիշտ են կիրառել իր՝ 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմամբ սահմանված չափորոշիչը (տե՛ս վերևում 61-րդ պարբերությունը):

255. Դատարանն այն կարծիքին է, որ ներպետական դատարանների եզրահանգումները դիմումատուի՝ այն հանցագործության շրջանակներից դուրս հանցավոր գործունեության հետ առնչություն ունենալու վերաբերյալ, որի կատարման համար նա դատապարտվել էր, ինչպես նաև եզրահանգումներն այդ հանցավոր գործունեության ու բռնագանձման ենթակա ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ, չեն եղել կամայական կամ ակնհայտորեն անհիմն: Ուստի, այն ընդունում է, որ դիմումատուից բռնագանձված ակտիվները ողջամտորեն համարվում են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ: Ի հավելումն՝ այն նկատում է, որ ազգային դատարանները միայն պարտավորեցրել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ համարվող ակտիվների բռնագանձումը և մնացած մասով մերժել են Հանձնաժողովի բռնագանձման հայցը (տե՛ս վերևում 56-րդ պարբերությունը):

256. Ավելին, Դատարանը չի արձանագրում որևէ կամայականություն կամ ակնհայտ չհիմնավորվածություն՝ դիմումատուների եկամուտների ու ծախսերի վերաբերյալ ազգային դատարանների վերլուծության մեջ: Մասնավորապես, Տարգովիչտեի շրջանային դատարանը մանրազնին քննարկել է հարցը՝ որոշակիորեն պատճառաբանելով դիմումատուի կողմից վկայակոչված եկամտի տարբեր տեսակներն ապացուցված չհամարելու հանգամանքը (տե՛ս վերևում 57-րդ պարբերությունը):

257. Համապատասխանաբար, Դատարանը եզրակացնում է, որ միջամտությունը դիմումատուի սեփականության իրավունքին չի եղել անհամաչափ 2005թ. Օրենքով հետապնդվող իրավաչափ նպատակներին:

258. Ուստի, տեղի չի ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

**(vi) Գանգատ թիվ 17238/16 - Կացարովն ընդդեմ Բուլղարիայի**

259. 2008թ. դիմումատուն դատապարտվել է թմրամիջոցների անօրինական տիրապետման երեք հանցագործության համար: Հանցագործությունները կատարվել են 2000թ. և 2001թ. (տե՛ս վերևում 64-65-րդ պարբերությունները): Դատապարտումը հիմք է ծառայել 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման վարույթի հարուցման համար, որը հանգեցրել է մի շարք ակտիվների բռնագանձմանը, որոնց շարքում հատկանշական է



դիմումատուի կողմից 2008թ. պաշտոնապես ձեռք բերված բնակարանը, որի դիմաց, սակայն վճարումը կատարվել էր 2002թ. (տե՛ս վերևում 66-րդ պարբերությունը):

260. Դիմումատուի «սեփականությանը» կատարված միջամտությունը եղել է օրինական (տե՛ս վերևում 184-րդ պարբերությունը): Ավելին, Դատարանը վերահաստատում է, որ 2005թ. Օրենքով հետապնդվել են իրավաչափ նպատակներ՝ հանրային շահից ելնելով (տե՛ս վերևում 186-րդ պարբերությունը):

261. Հետևաբար, առանցքային է հարցն այն մասին, թե արդյո՞ք միջամտությունը համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակներին: Դատարանը կրկին վկայակոչում է իր ընդհանուր նկատառումներն այդ հարցի շուրջ (տե՛ս վերևում 200-216-րդ պարբերությունները):

262. Տվյալ գործում Սոֆիայի քաղաքային դատարանը դիտողություններ է արել դիմումատուի հանցավոր գործունեության վերաբերյալ՝ մատնանշելով, որ նա դատապարտվել է թմրամիջոցների անօրինական տիրապետման երեք հանցագործությունների կատարման համար, այդ թվում՝ իրացման մտադրությամբ (տե՛ս վերևում 69-րդ պարբերությունը): Ավելին, Սոֆիայի քաղաքային դատարանը և Սոֆիայի վերաքննիչ դատարանը նկատառումներ են հայտնել հանցավոր գործունեության և բռնազանձման ենթակա ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ՝ մատնանշելով երկարատև ժամանակահատվածի կտրվածքով դիմումատուի գործունեության բնույթը և որևէ օրինական եկամտի բացակայությունը (տե՛ս վերևում 69-րդ և 73-րդ պարբերությունները): Ավելին, ակնհայտորեն նշվել է, որ դիմումատուից բռնազանձման ենթակա ամենաթանկ ակտիվի՝ նրա բնակարանի դիմաց վճարումը կատարվել էր մոտավորապես նույն ժամանակ, երբ նա իրացման նպատակով տիրապետել է թմրամիջոցների, և այն ժամանակ, երբ նա որևէ օրինական եկամուտ չի ունեցել (տե՛ս վերևում 72-73-րդ պարբերությունները): Գերագույն դատարանը եզրակացրել է, որ ստորին ատյանի դատարանները պատշաճորեն ուսումնասիրել են բռնազանձման ենթակա ակտիվների ու դիմումատուի հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը՝ Գերագույն դատարանի 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշման պահանջներին համապատասխան (տե՛ս վերևում 74-րդ պարբերությունը):

263. Դատարանն, իր հերթին, ներպետական դատարանների եզրակացությունները համարում է պատշաճ պատճառաբանված և չի տեսնում դրանք կասկածի տակ առնելու որևէ պատճառ (տե՛ս վերևում 216-րդ պարբերությունը): Ուստի, այն եզրակացնում է, որ դիմումատուից բռնազանձված ակտիվները ողջամտորեն համարվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ:

264. Դիմումատուն այնուհետև չի համաձայնել իր եկամուտների ու ծախսերի վերաբերյալ ներպետական դատարանների գնահատականին՝ դատարաններին մեղադրելով ծայրահեղ ֆորմալիզմ դրսևորելու մեջ: Նա պնդել է, որ «գործնականում հնարավոր չի եղել» ապացուցել իր ակտիվների ծագումը (տե՛ս վերևում 174-րդ պարբերությունը):

265. Դատարանը նկատում է, որ ներպետական դատարանները մանրազնին քննարկել են այս հարցը՝ պատճառաբանելով, որ չեն ընդունում դիմումատուի պնդումներն այն մասին, որ նա ստացել է այլ օրինական եկամուտ, մասնավորապես՝ գոյատևման միջոցներ իր ծնողներից: Նրանք նաև քննարկել են նրա մոր և քրոջ պնդումներն այն մասին, որ նա աշխատել է որպես վարորդ տաքսի ծառայությունում, ինչպես նաև աշխատել է իր ծնողների բանջարանոցում (տե՛ս վերևում 68-րդ և 71-րդ պարբերությունները): Դատարանը չի արձանագրում որևէ կամայականություն կամ ակնհայտ չիմնավորվածություն նրանց եզրակացություններում: Այնուհետև, Դատարանը նկատում է, որ դիմումատուին հաջողվել է ապացուցել մեկ կարևոր հարց, որի շուրջ նա վիճել է, մասնավորապես՝ այն հանգամանքը, որ ինքը չի գնել իր բնակարանը դրա շուկայական արժեքով (տե՛ս վերևում 70-րդ պարբերությունը):

266. Վերոգրյալի լույսի ներքո Դատարանը եզրակացնում է, որ միջամտությունը դիմումատուի «սեփականությանը», այն է՝ նրա ակտիվների բռնագանձումը, անհամաչափ չի եղել դրանով հետապնդվող իրավաչափ նպատակներին:

267. Համապատասխանաբար, տեղի չի ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

**(vii) Գանգատ թիվ 63214/16 - Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի**

268. 2010թ. դիմումատուն դատապարտվել է հարկերից խուսափելու համար այն հիմքով, որ նա 2000թ. դեկտեմբերից մինչև 2001թ. մայիսն ընկած ժամանակահատվածում խուսափել է վճարել մոտ 150,000 եվրոյի չափով հարկեր (տե՛ս վերևում 78-րդ պարբերությունը): Դատապարտումը հիմք է ծառայել նրա դեմ 2005թ. Օրենքով նախատեսված բռնագանձման վարույթ հարուցելու համար, որի շրջանակներում դատարանները պարտավորեցրել են բռնագանձել նրա կողմից 2007թ. և 2010թ. միջև ընկած ժամանակահատվածում ձեռք բերված մի շարք ակտիվներ (տե՛ս վերևում 82-րդ պարբերությունը):

269. Դատարանը վկայակոչում է իր՝ վերևի 184-րդ պարբերության մեջ հիշատակված եզրահանգումն այն մասին, որ միջամտությունը դիմումատուի իրավունքներին կատարվել է ներպետական օրենսդրությամբ նախատեսված հիմքով:

270. Դիմումատուն ներկայացրել է կոնկրետ առարկություն իր իրավունքների կատարված միջամտության իրավաչափության մասով՝ մատնանշելով, որ 2002թ. հարկային մարմիններն արդեն իսկ պարտավորեցրել են իրեն պետությանը վճարելու չվճարված հարկերը. համապատասխան մարմինները ոչ թե կատարել են այդ որոշումը, այլ փոխարենը նրա դեմ հարուցել են բռնագանձման վարույթ (տե՛ս վերևում 176-րդ պարբերությունը):

271. 2002թ. ֆինանսական աուդիտ իրականացվելուց հետո դիմումատուն պարտավորվել է պետությանը վճարելու մոտ 300,000 եվրո չվճարված հարկեր: Այդ որոշումը չի կատարվել, և 2015թ. դիմումատուի պարտքը հանվել է՝ դրա ժամկետը լրանալու հիմքով (տե՛ս վերևում 77-րդ պարբերությունը): Միևնույն ժամանակ, 2010թ. դիմումատուն դատապարտվել է՝ վերոնշյալ գումարի համապատասխան չափի մասով հարկերից խուսափելու համար (տե՛ս վերևում 78-րդ պարբերությունը): Դատապարտումը, ինչպես արդեն նշվել է, հիմք է ծառայել նրա դեմ բռնագանձման վարույթ հարուցելու համար:

272. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում քննված գործերում Դատարանը գտել է, որ համապատասխան մարմինները պարտավորված են գործելու պատշաճ ժամկետում, ինչպես նաև պատշաճ կարգով ու հետևողականորեն (տե՛ս, ի թիվս այլ գործերի, *Վիստինջը և Պերեպյոլկինսն ընդդեմ Լատվիայի* [*Vistiņš and Perepjolkins v. Latvia*] [ՄՊ] գործը (թիվ 71243/01, § 114, 2012թ. հոկտեմբերի 25, ինչպես նաև *Մոսկալն ընդդեմ Լեհաստանի* [*Moskal v. Poland*] գործը (թիվ 10373/05, § 72, 2009թ. սեպտեմբերի 15): *Դիմիտրովների* (վերևում վկայակոչված 46-րդ պարբերությունը)՝ համանման բուլղարական գործում Դատարանն իրավաչափության տեսանկյունից խնդրահարույց է համարել այն փաստը, որ ներպետական օրենսդրության շրջանակներում քրեական հետապնդման մարմինների ավելի վաղ կայացրած որոշումը՝ առաջին դիմումատուի ու նրա ամուսնու դեմ հարուցված բռնագանձման վարույթը դադարեցնելու վերաբերյալ, չի ունեցել պարտադիր իրավական ուժ, և որ այդ մարմիններն ազատ են եղել «իրենց հայեցողությամբ ցանկացած ժամանակ վարույթ հարուցել, վարույթը կասեցնել, փակել կամ վերսկսել այն»:

273. Ինչ վերաբերում է ներկա գործին, ապա Դատարանը նկատում է, որ դիմումատուի մասնակցությամբ հարկային վարույթում պետությունը ձեռնամուխ չի եղել չվճարված հարկերից որևէ մեկի հատուցմանը, և որ այնուհետև, բռնագանձման վարույթում այն պնդել է, որ դիմումատուի կողմից ենթադրաբար ձեռք բերված ակտիվները՝ նրա չվճարած հարկերի համապատասխան մասի հետ միասին, հանցավոր ճանապարհով ձեռք բերված եկամուտներ

են (տե՛ս վերևում 77-79-րդ պարբերությունները): Այնուամենայնիվ, այս իրավիճակը պետք է տարբերել *Դիմիտրովների* գործում առկա իրավիճակից: Ներկա գործում դիմումատուի մասնակցությամբ հարկային վարույթն ուղղված է եղել չվճարված հարկերը հայտնաբերելուն ու հատուցելուն, մինչդեռ բռնագանձման վարույթը նպատակ է ունեցել զրկել դիմումատուին հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներից: Դա է պատճառը, որ Դատարանը չի կարող եզրակացնել, ինչպես *Դիմիտրովների* գործում, թե համապատասխան մարմիններն ազատ են եղել դիմումատուի դեմ միևնույն տեսակի վարույթ հարուցել, փակել կամ վերսկսել՝ իրավական որոշակիության ու կանխատեսելիության պահանջների խախտմամբ:

274. Ուստի, Դատարանը գտնում է, որ միջամտությունը դիմումատուի իրավունքներին եղել է իրավաչափ:

275. Այն վերահաստատում է իր՝ վերևի 186-րդ պարբերության մեջ հիշատակված եզրահանգումն այն մասին, որ 2005թ. Օրենքով հետապնդվել են իրավաչափ նպատակներ՝ հանրային շահից ելնելով:

276. Անդրադառնալով համաչափության հարցին՝ Դատարանը պետք է ուսումնասիրի՝ արդյո՞ք ներպետական դատարանները մատնանշել են որևէ հակաիրավական արարքի ու բռնագանձման ենթակա ակտիվների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, թե՛ ոչ (տե՛ս վերևում 212-րդ և 215-րդ պարբերությունները):

277. Վառնայի վերաքննիչ դատարանը, որը պարտավորեցրել է բռնագանձել դիմումատուի ակտիվները, մանրամասն պարզաբանել է, թե ինչու է այն համարել, որ այդ ակտիվները հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ են: Մասնավորապես, այն նշել է, որ այն հարկերը, որոնց վճարումից դիմումատուն խուսափել է 2000թ. և 2001թ., երբևէ չեն վճարվել պետությանը, որ դիմումատուն ներգրավված է եղել հանցավոր գործունեության մեջ, և որ նա չի ունեցել որևէ օրինական եկամուտ, սակայն տիրապետել է խոշոր չափի գումարների (տե՛ս վերևում 83-րդ, 85-րդ և 87-րդ պարբերությունները): Ուստի, «տրամաբանության և փորձի» հիման վրա Վառնայի վերաքննիչ դատարանը եզրակացրել է, որ առկա է պատճառահետևանքային կապ դիմումատուի կատարած հանցագործության և այն ակտիվների միջև, որոնք հայցվում էր բռնագանձել (տե՛ս վերևում 85-րդ պարբերությունը):

278. Դատարանը, իր հերթին, չի կարող վերոնշյալ եզրակացությունները համարել կամայական կամ ակնհայտորեն անհիմն: Այն մատնանշում է, որ Գերագույն դատարանը գտել է նաև, որ Վառնայի վերաքննիչ դատարանը ճիշտ է կիրառել 2014թ. հունիսի 30-ի Պարզաբանող որոշմամբ սահմանված չափորոշիչը (տե՛ս վերևում 86-րդ պարբերությունը):

279. Ինչ վերաբերում է այն եղանակին, որով ազգային դատարանները վարույթի շրջանակներում գնահատել են դիմումատուի եկամուտներն ու ծախսերը, ապա Դատարանը

նկատում է, որ Վառնայի վերաքննիչ դատարանը, որը պարտավորեցրել է բռնագանձել դիմումատուի ակտիվները, մանրամասն քննել է հարցն ու կատարել պատճառաբանված եզրակացություններ (տե՛ս վերևում 84-րդ պարբերությունը): Մասնավորապես, դիմումատուն վիճարկել է նրա եզրահանգումներն իր կողմից ձեռք բերված անշարժ գույքի միավորների արժեքի վերաբերյալ՝ մեջբերելով նման գույքի մեկ օրինակ, որի արժեքը բռնագանձման վարույթում գնահատվել էր 13,750 եվրո, սակայն այնուհետև՝ Եկամուտների ազգային գործակալության կողմից այն վաճառվել էր 2,390 եվրո գումարի դիմաց (տե՛ս վերևում 177-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, այդ հարցի շուրջ Կառավարության պարզաբանումների (տե՛ս վերևում 159-րդ պարբերությունը) և Գերագույն դատարանի դիրքորոշման (տե՛ս վերևում 108-րդ պարբերության վերջում) լույսի ներքո Դատարանն ապացուցված չի համարում այն հանգամանքը, որ այդ գույքի արժեքը որոշվել, ու այն գնահատվել է կամայական ու ակնհայտորեն անհիմն ձևով: Դատարանը չի տեսնում Վառնայի վերաքննիչ դատարանի եզրակացությունների մնացած մասը կամայական կամ ակնհայտորեն անհիմն համարելու որևէ պատճառ:

280. Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը եզրակացնում է, որ միջամտությունը դիմումատուի «սեփականությանը» անհամաչափ չի եղել դրանով հետապնդվող իրավաչափ նպատակներին:

281. Համապատասխանաբար, տվյալ գործում տեղի չի ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

#### IV. ՄՆԱՑԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ

**Ա. Գանգատներ թիվ 50705/11 (*Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի*), թիվ 11340/12 (*Գայչն ընդդեմ Բուլղարիայի*) և թիվ 71694/12 (*Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի*)**

282. *Տողորովը և մյուսները* գործում առաջին ու երկրորդ դիմումատուները, ինչպես նաև *Ժեկովների* գործում դիմումատուները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում բողոքել են իրենց անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման առնչությամբ: *Ժեկովների* գործում երրորդ դիմումատուն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի շրջանակներում բողոքել է, որ ինքը «պատժվել է» առանց հանցագործություն կատարելու, իսկ *Տողորովը և մյուսները* գործում առաջին դիմումատուն Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի շրջանակներում բողոքել է, որ ինքը միևնույն հանցագործության համար պատժվել է երկու անգամ: Ի վերջո, *Գայչի* գործում երկու դիմումատուները, ինչպես նաև *Տողորովը և*

մյուսները գործում երրորդ և չորրորդ դիմումատուները Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում բողոքել են, որ իրենք կորցրել են իրենց տունը:

283. Հաշվի առնելով համապատասխան գործերի փաստական հանգամանքները, ինչպես նաև իր եզրահանգումները ԹԻԿ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում՝ Դատարանը գտնում է, որ այն ուսումնասիրել է այդ երեք գանգատներում բարձրացված հիմնական իրավական հարցերը, և որ, հետևաբար, անհրաժեշտ չի համարում առանձին վճիռ կայացնել մնացած գանգատների մասով (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) Վալենտին Կըմպենի անունից հանդես եկող Իրավական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի [Centre for Legal Resources on behalf of Valentin Câmpeanu v. Romania] [ՄՊ] գործը, թիվ 47848/08, § 156, ՄԻԵԴ, 2014թ.):

**Բ. Գանգատներ թիվ 17238/16 (Կացարովն ընդդեմ Բուլղարիայի) և թիվ 63214/16 (Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի)**

**1. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը**

284. Կացարովի գործում դիմումատուն բողոքել է նաև իր անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման առնչությամբ: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի վրա, որը շարադրված է հետևյալ խմբագրությամբ.

«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է հանցագործության կատարման մեջ, անմեղ է այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքի համաձայն:»:

**ա) Կողմերի փաստարկները**

285. Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի չէ, քանի որ տվյալ գործը չի վերաբերում դիմումատուին առաջադրված քրեական գործով մեղադրանքի քննությանը: Կառավարությունը մատնանշել է, որ դիմումատուի ակտիվների բռնագանձումը պարտավորեցվել էր քաղաքացիական դատարանների կողմից՝ քրեական վարույթի շրջանակներից դուրս, և որ այդ դատարանները պետք է որոշեին՝ արդյո՞ք քննարկվող ակտիվները ձեռք են բերվել օրինական եկամուտների հաշվին, թե՞ ոչ: Կառավարությունը նաև առարկություն է ներկայացրել ներպետական պաշտպանության միջոցները սպառած չլինելու վերաբերյալ՝ պնդելով, որ դիմումատուն ներպետական դատարաններում չի բողոքել անմեղության կանխավարկածի մասով:

286. Դիմումատուն անհամաձայնություն է հայտնել: Մասնավորապես, նա պնդել է, որ բռնագանձման վարույթը ներառել է իրեն առաջադրված քրեական գործով մեղադրանքի քննությունը, և որ ինքը փաստացի «մեղադրվել է» «ենթադրյալ, անորոշ և չապացուցված» հանցագործությունների կատարման համար:

### բ) Դատարանի գնահատականը

287. Տվյալ գործի կողմերի միջև առկա չէ վեճ այն մասին, որ դիմումատուի դատապարտմանը հանգեցրած քրեական վարույթի ընթացքում նա «մեղադրվել է հանցագործության կատարման համար», և որ, հետևաբար, նա իրավասու է եղել ստանալու ու ստացել է 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պաշտպանությունը: Դատարանի կողմից քննության ենթակա հարցերը, որոնք վերաբերում են հետագա բռնագանձման վարույթի նկատմամբ 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիությանը, հետևյալներն են՝ առաջին՝ արդյո՞ք դիմումատուի դատապարտմանը հաջորդող բռնագանձումը համարվել է նոր «մեղադրանքի» առաջադրում 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, երկրորդ՝ անգամ այդ հարցի բացասական պատասխանի դեպքում, արդյո՞ք 6-րդ հոդվածի 2-րդ կետը, այնուամենայնիվ, պետք է որոշակի առումով կիրառվի՝ բռնագանձման վարույթի ընթացքում առաջադրված ենթադրություններից դիմումատուին պաշտպանելու համար (տե՛ս վերևում հիշատակված *Ֆիլիպսի* գործը, 30-րդ պարբերություն):

288. Պարզելու համար, թե արդյո՞ք բռնագանձման վարույթի ընթացքում դիմումատուն «մեղադրվել է հանցագործության կատարման մեջ» 6-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով, Դատարանը պետք է հաշվի առնի *Էնգելի* գործում ամրագրված երեք չափորոշիչները, ինչպիսիք են՝ ազգային օրենսդրության շրջանակներում վարույթների դասակարգումը, դրանց էական բնույթը, ինչպես նաև այն պատժի տեսակն ու խստության աստիճանը, որին ենթարկվելու վտանգի տակ է գտնվել դիմումատուն (տե՛ս *Էնգելը և մյուսներն ընդդեմ Նիդեռլանդների* [*Engel and Others v. the Netherlands*] գործը, 1976թ. հունիսի 8, § 82, Շարք Ա, թիվ 22):

289. Ինչ վերաբերում է այդ չափորոշիչներից առաջինին, ապա ակնհայտ է, որ 2005թ. Օրենքի շրջանակներում բռնագանձման հայցը չի ներառել որևէ նոր մեղադրանք կամ հանցագործություն ազգային քրեաիրավական օրենսդրության իմաստով:

290. Անդրադառնալով երկրորդ չափորոշիչներին՝ ճշմարիտ է, որ տվյալ գործում ազգային դատարաններն ակնհայտորեն ենթադրել են, որ այնպիսի ակտիվներ ձեռք բերելու համար, որոնք հայցվում էր բռնագանձել, դիմումատուն ներգրավվել է այն հանցագործություններից տարբեր անօրինական գործունեության մեջ, որոնց համար

դատապարտվել էր: Այնուամենայնիվ, բռնագանձման ընթացակարգն ուղղված չի եղել դիմումատուի դատապարտմանը կամ արդարացմանը՝ թմրամիջոցներին առնչվող կամ այլ հանցագործության կատարման համար, և կատարված որևէ եզրահանգում չի արտացոլվել դիմումատուի դատապարտման նյութերում:

291. Ի հավելումն՝ դատարանը պետք է հաստատի՝ արդյո՞ք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետը, այնուամենայնիվ, պետք է որևէ կերպով կիրառվի՝ բռնագանձման վարույթի ընթացքում կիրառված ենթադրություններից դիմումատուին պաշտպանելու համար (տե՛ս վերևում 287-րդ պարբերությունը):

292. Թեև պարզ է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետով կարգավորվում է քրեական վարույթն ամբողջությամբ, այլ ոչ թե բացառապես մեղադրանքի բովանդակության քննության մասով, այնուամենայնիվ 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում անմեղ համարվելու իրավունքը ծագում է միայն կոնկրետ հանցագործության կատարման մեջ «մեղադրվելու» կապակցությամբ: Այն դեպքում, երբ մեղադրյալը պատշաճ կարգով մեղավոր է ճանաչվում այդ հանցագործության կատարման համար, 6-րդ հոդվածի 2-րդ կետը կարող է չկիրառվել այն ենթադրությունների նկատմամբ, որոնք արվել են մեղադրյալի անձի ու նրա վարքագծի առնչությամբ՝ նրան պատասխանատվության ենթարկելու կամ համարժեք գործընթացի ընթացքում (տե՛ս *Վան Օֆֆերենսն ընդդեմ Նիդեռլանդների (որոշում)* [*Van Offeren v. the Netherlands*] գործը, թիվ 19581/04, 2005թ. հուլիսի 5), եթե այդ ենթադրությունները չունեն այնպիսի բնույթ կամ աստիճան, որ համարվեն նոր «մեղադրանքի» առաջադրում վերևում նշված՝ Կոնվենցիայի առանձին իմաստով (տե՛ս վերևում հիշատակված *Ֆիլիպսի* գործը, 35-րդ պարբերություն):

293. Ներկա գործում բռնագանձումը հիմք չի ծառայել դիմումատուի դեմ առանձին կամ նոր մեղադրանքի հարց որոշելու համար, հետևաբար 6-րդ հոդվածի 2-րդ կետը կիրառելի չէ (տե՛ս վերևում հիշատակված *Ֆիլիպսի* գործը, 34-րդ պարբերություն, *Բաթլերի* գործը՝ վերևում հիշատակված որոշումը, տե՛ս նաև *Արկուրին և մյուսները* գործը, *ինչպես նաև Ռիելան և մյուսները* գործը՝ վերևում հիշատակված որոշումները, որոնցում Դատարանը գտել է, որ այն բռնագանձման միջոցները, որոնք համանման են այս գործի բռնագանձման միջոցներին, չեն ներառել մեղավորության հաստատում, սակայն նախատեսված են եղել կանխելու հանցագործությունների կատարումը, ուստի, չեն կարող համեմատվել քրեական «պատասխանատվության միջոցների» հետ, ինչը բացառում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեահրավական ասպեկտի կիրառելիությունը):

294. Համապատասխանաբար, քննության առարկա բողոքը առարկայական իրավագործության առումով (*ratione materiae*) չի համապատասխանում Կոնվենցիայի



դրույթներին՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, և պետք է մերժվի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն:

295. Այս եզրակացության տեսանկյունից Դատարանն անհրաժեշտ չի համարում ուսումնասիրել Կառավարության առարկությունը՝ ներպետական պաշտպանության միջոցները սպառած չլինելու վերաբերյալ (տե՛ս վերևում 285-րդ պարբերությունը):

**2. Կոնվենցիայի 7-րդ հոդված և Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդված**

296. Կացարովի և Դիմիտրովի գործերում դիմումատուները բողոքել են, որ գույքի բռնագանձումը՝ հետադարձ ուժով կիրառված օրենսդրության հիմքով, համարվել է իրենց կատարած հանցագործությունների համար լրացուցիչ պատիժ, որը նախատեսված չի եղել այդ հանցագործությունները կատարելու պահին: Կացարովի գործում դիմումատուն հիմնվել է Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի վրա, իսկ Դիմիտրովի գործում դիմումատուն հիմնվել է Կոնվենցիայի 7-րդ հոդվածի վրա:

297. Հիշատակված երկու դրույթների համապատասխան մասերը շարադրված են հետևյալ խմբագրությամբ.

**Հոդված 7**

«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ հանցագործության համար ցանկացած այնպիսի գործողության կամ անգործության հիմքով, որը դրա կատարման պահին հանցագործություն չի համարվել ազգային կամ միջազգային իրավունքի համաձայն: Չպետք է նաև նշանակվի ավելի խիստ պատիժ, քան այն պատիժը, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:»:

**Թիվ 7 արձանագրություն, Հոդված 4**

«1. Ոչ ոք ենթակա չէ կրկին դատապարտման կամ պատժի՝ մինչև այն պետության իրավագրության ներքո հարուցված քրեական վարույթի շրջանակներում այնպիսի հանցագործության համար, որի համար նա արդեն իսկ վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել՝ այդ պետության օրենսդրությանը և քրեաիրավական ընթացակարգին համապատասխան:»:

**ա) Կողմերի փաստարկները**

298. Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ 7-րդ հոդվածը կիրառելի չէ, քանի որ գործը չի վերաբերում հանցագործության համար նշանակվող պատժին: Կառավարությունը մատնանշել է, որ դիմումատուի ակտիվների բռնագանձումը համարվել է առանձին միջոց, որն առնչություն չի ունեցել Քրեական օրենսգրքով նախատեսված պատիժների հետ, որ դրա կատարումը պարտավորեցվել է քաղաքացիական վարույթի շրջանակներում, և որ դրա նպատակը չի եղել փոխարինել դիմումատուի քրեական պատասխանատվությունը: Ավելին, Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ դիմումատուները չեն սպառել ներպետական պաշտպանության առկա միջոցները, քանի որ ներպետական մակարդակում նրանք չեն ներկայացրել քննության առարկա բողոքները:

299. *Կացարովի* գործում դիմումատուն մատնանշել է, որ իր կողմից հանցագործությունները կատարվել են 2000թ. և 2001թ. (տե՛ս վերևում 64-րդ և 65-րդ պարբերությունները) նախքան 2005թ. Օրենքն ուժի մեջ մտնելը: Շատ տարիներ անց համապատասխան մարմինները նրա նկատմամբ նշանակել են լրացուցիչ «տուգանք», այն է՝ բռնագանձում 2005թ. Օրենքի շրջանակներում: Ըստ դիմումատուի, նման բռնագանձման կիրառումն «ինքնաբերաբար» է հետևել իր դատապարտմանը:

300. *Դիմիդորովի* գործում դիմումատուն նույնպես վիճարկել է՝ նշելով, որ իր գույքի բռնագանձումը եղել է իր դատապարտումից «ինքնաբերաբար բխող հետևանք», և որ այն ծառայել է որպես երկրորդ «պատիժ»: Արդյունքում, նրա նկատմամբ սահմանվել է ավելի խիստ համակցությամբ պատիժ, քան այն պատիժը, որը նախատեսված է եղել հանցագործության կատարման պահին:

**բ) Դատարանի գնահատականը**

301. Դիմումատուները բողոքել են, որ համապատասխան մարմիններն իրենց նկատմամբ նշանակել են այնպիսի «տուգանք», որն օրենսդրությամբ նախատեսված չի եղել հանցագործությունների կատարման պահին:

302. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով նախատեսված «տուգանք» հասկացությունն ունի անկախ իմաստ: Որպեսզի այս հոդվածով նախատեսված պաշտպանությունը լինի արդյունավետ, Դատարանը պետք է ազատ լինի վերանայելու արտաքին ասպեկտներն ու իր համար գնահատելու՝ արդյո՞ք կոնկրետ միջոցն ըստ էության համարվում է «տուգանք» այս դրույթի իմաստով, թե՛ ոչ: Ցանկացած նման գնահատման շրջանակներում մեկնարկային կետն այն է, թե արդյո՞ք քննարկվող միջոցը նշանակվում է

քրեական գործով դատապարտումից հետո, թե՛ ոչ: Այնուամենայնիվ, մյուս գործոնները նույնպես կարող են հաշվի առնվել, եթե վերաբերելի են այս առնչությամբ, օրինակ՝ քննարկվող միջոցի բնույթը և նպատակը, դրա առանձնահատկություններն ազգային օրենսդրության շրջանակներում, տվյալ միջոցի սահմանման ու կիրարկման, ինչպես նաև դրա խստության հարցում ներգրավված ընթացակարգերը (տե՛ս վերևում հիշատակված «Ջի.Այ.Ի.Էմ Էս.Ար.Էլ.»-ը և մյուսները գործը, §§ 210-211, լրացուցիչ հղումներով):

303. Ինչ վերաբերում է առաջին չափորոշչին, այն է՝ արդյո՞ք քննարկվող միջոցը սահմանվել է քրեական գործով դատապարտումից հետո, թե՛ ոչ, Դատարանը մատնանշում է, որ դիմումատուները դատապարտվել են հանցագործությունների կատարման համար: Ավելին, հանցագործության համար դատապարտումը, որի վրա տարածվել է 2005թ. Օրենքի գործողությունը, նախապայման է հանդիսացել այդ օրենքի շրջանակներում բռնագանձում կատարելու համար (տե՛ս վերևում 102-րդ պարբերությունը): Թեև առկա է եղել պատճառահետևանքային կապ այդ երկու երևույթների միջև, այնուամենայնիվ, էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ բռնագանձումն ինքնաբերաբար չի բխել դատապարտումից. անհրաժեշտ է եղել կատարել լրացուցիչ գնահատում Հանձնաժողովի ու ազգային դատարանների կողմից (տե՛ս վերևում 100-102-րդ պարբերությունները), ինչպես նաև հաստատել այնպիսի լրացուցիչ հանգամանքներ, ինչպես, օրինակ՝ արդյո՞ք դիմումատուները ձեռք են բերել զգալի արժեք ունեցող ակտիվներ, թե՛ ոչ, այդ ակտիվների ծագումը, իսկ երբեմն էլ՝ դրանց ու որևէ հանցավոր գործունեության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

304. Վերևում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում պրն Կացարովի բողոքը քննելիս Դատարանն արդեն իսկ գտել է, որ 2005թ. Օրենքի ներքո հարուցված վարույթը չի ներառել քրեական մեղադրանքի որոշման հարց (տե՛ս վերևում 293-րդ պարբերությունը): Ավելին, Դատարանը նկատում է, որ այդ Օրենքի շրջանակներում կատարված բռնագանձումը ծառայել է որպես կանխարգելիչ միջոց, որը նախատեսված է եղել այն ակտիվները շրջանառությունից հանելու համար, որոնք համարվել են թմրամիջոցների առևտրից հանցավոր ճանապարհով ստացված միջոցներ: Դատարանը չի տեսնու՝ դիմումատուների ակտիվների բռնագանձումը որպես պատժիչ միջոց համարելու որևէ պատճառ. ինչպես նշվել է, դա պարտադիր չի եղել, ավելին, դրա նպատակն է եղել ոչ թե պատժել հանցագործության համար դատապարտված անձանց (հակառակ դրան՝ տե՛ս վերևում հիշատակված «Ջի.Այ.Ի.Էմ. Էս.Ար.Էլ.»-ը և մյուսները գործը, §§ 223-226), այլ հայտնաբերել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն ու զրկել նրանց այդ եկամուտներից:

305. Դատարանն այնուհետև նկատում է, որ 2005թ. Օրենքով նախատեսված վարույթն իրականացվել է քաղաքացիական դատարաններում, և որ քաղաքացիական դատավարության կանոնները կիրառվել են ի հավելումն 2005թ. Օրենքով նախատեսված կանոնների (տե՛ս վերևում 102-րդ պարբերությունը):

306. Ի վերջո, Դատարանը նշում է, որ դիմումատուների ակտիվների բռնագանձումն անհերքելիորեն համարվել է լուրջ միջամտություն նրանց սեփականության իրավունքին, ուստի այն կարելի էր համարել որպես հարաբերական խիստ միջոց: Այնուամենայնիվ, միայն այս հանգամանքը բավարար չէ՝ վերոնշյալ լրացուցիչ նկատառումների լույսի ներքո արդարացնելու համար եզրակացությունն այն մասին, որ համապատասխան մարմինները դիմումատուների նկատմամբ կիրառել են «տուգանք» Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով (տե՛ս վերևում հիշատակված *Բաուլեր Ինթերնեյշնլ Զունիթի* գործը, §§ 65-67):

307. Վերոնշյալ նկատառումները Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի շրջանակներում բողոքի մասով նույնպես իրավաչափ են: Դատարանը չի գտնում, որ այդ դրույթի իմաստով դիմումատուները «կրկին դատվել կամ պատժվել են քրեական վարույթում»:

308. Վերոգրյալից ելնելով՝ Դատարանը եզրակացնում է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի և Թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի շրջանակներում բողոքները առարկայական իրավազրորության (*ratione materiae*) առումով չեն համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, և պետք է մերժվեն 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

309. Այս եզրակացությամբ Դատարանն անհրաժեշտ չի համարում քննել Կառավարության առարկությունը՝ ներպետական պաշտպանության միջոցները սպառած չլինելու վերաբերյալ (տե՛ս վերևում՝ 298-րդ պարբերության վերջում):

## V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

310. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է, որ՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

311. Դատարանից պահանջվում է վճռել դիմումատուների արդարացի փոխհատուցման պահանջների վերաբերյալ միայն այն գործերի մասով, որոնցում այն հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում (տե՛ս *Վելիկովները և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի* [*Velikovi and Others v. Bulgaria*] գործը, թիվ 43278/98 և 8 մյուս գործերը, § 264, 2007թ. մարտի 15). դրանք են՝ *Տողորովի և մյուսների, Գայջի, Բարովի և Ժեկովների* գործերը:

**Ա. Վնասը**

**1. Դիմումատուների պահանջները և Կառավարության նկատարումները**

**ա) Գանգատ թիվ 50705/11 (*Տողորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի*)**

312. Նյութական վնասի մասով չորս դիմումատուները պահանջել են 1,431,220 եվրո, որը կազմում է նրանց բռնազանձված ակտիվների ու կորցրած շահույթի արժեքը՝ գումարած տոկոսները: Ոչ նյութական վնասի մասով առաջին և երկրորդ դիմումատուները համատեղ պահանջել են 60,000 եվրո, իսկ առաջին դիմումատուն պահանջել է լրացուցիչ 10,000 եվրո: Դիմումատուները նշել են, որ համապատասխան մարմինների «կամայական գործողությունների» լույսի ներքո նրանք իրենց զգացել են ընկճված ու անօգնական, և որ բռնազանձման հետևանքով նրանք հայտնվել են ֆինանսապես անապահով վիճակում, և իրենց կյանքն աղճատվել է: Երրորդ և չորրորդ դիմումատուները համատեղ պահանջել են 20,000 եվրո:

313. Կառավարությունը վիճարկել է այդ պահանջները՝ գտնելով, մասնավորապես, որ դրանց շարքից այն պահանջները, որոնք վերաբերում են ոչ նյութական վնասին, ուռճացված են:

**բ) Գանգատ թիվ 11340/12 (*Գայջն ընդդեմ Բուլղարիայի*)**

314. Դիմումատուները պահանջել են 234,444 եվրո՝ նյութական վնասի դիմաց, որը կազմել է բռնազանձված գույքի միավորների արժեքը: Ոչ նյութական վնասի դիմաց, երկու դիմումատուները համատեղ պահանջել են 100,000 եվրո՝ նշելով, որ նրանք կորցրել են իրենց տունը, որ պրն Գայիչը՝ առաջին դիմումատուի ամուսինն ու երկրորդ դիմումատուի հայրը (տե՛ս վերևում 18-րդ և 21-րդ պարբերությունները), հիվանդացել է ու մահացել՝ բռնազանձման վարոյթի հետևանքով առաջացած սթրեսի պատճառով, որ ընտանիքի հեղինակությունն արատավորվել է, և որ ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով երկրորդ դիմումատուն ստիպված է եղել ընդհատել իր համալսարանական ուսումը:

315. Կառավարությունը վիճարկել է տվյալ պահանջները: Ինչ վերաբերում է մասնավորապես, ոչ նյութական վնասին, Կառավարությունը գտնում է, որ չի հաստատվել որևէ պատճառահետևանքային կապ խնդրո առարկա բռնագանձման վարույթի և պրն Գայջի հիվանդության ու մահվան միջև: Ինչ վերաբերում է դիմումատուների մնացած փաստարկներին, Կառավարությունը վիճարկել է՝ նշելով, որ «առկա չէ իրավական, տրամաբանական կամ գոյաբանական կապ դիմումատուների ենթադրյալ տառապանքի ու նրանց կողմից հայցվող փոխհատուցման միջև»:

**գ) Գանգատ թիվ 26221/12 (Քարովն ընդդեմ Բուլղարիայի)**

316. Դիմումատուն պահանջել է 6,183 եվրո իր բռնագանձված ակտիվների արժեքի դիմաց և 5,012 եվրո՝ որպես այդ գումարին հաշվեգրված տոկոս: Ի հավելումն՝ նա ոչ նյութական վնասի դիմաց պահանջել է 8,000 եվրո՝ մատնանշելով, որ իր գույքի բռնագանձման հետևանքով իր մոտ առաջացել է սթրես ու ընկճվածություն, և որ ինքը հայտնվել է ֆինանսապես անկայուն վիճակում:

317. Կառավարությունը վիճարկել է տվյալ պահանջները, մասնավորապես՝ տոկոսներին վերաբերող պահանջները: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, Կառավարությունը պնդել է, որ Դատարանի կողմից որևէ խախտման փաստի ցանկացած արձանագրում ինքնին համարվում է բավարար արդարացի փոխհատուցում:

**դ) Գանգատ թիվ 71694/12 (Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի)**

318. Առաջին դիմումատուն և երկրորդ դիմումատուի ժառանգները պահանջել են 83,180 եվրո՝ առաջին երկու դիմումատուների բռնագանձված ակտիվների արժեքի դիմաց, մինչդեռ երրորդ դիմումատուն պահանջել է 65,290 եվրո՝ իր բնակարանի արժեքի դիմաց: Ի հավելումն՝ առաջին դիմումատուն պահանջել է 10,200 եվրո, որն իր կողմից վճարվել է որպես վարձակալության վճար այն բնակարանի բռնագանձումից հետո, որտեղ ապրել է իր ընտանիքը: Առաջին դիմումատուն և երկրորդ դիմումատուի ժառանգները համատեղ պահանջել են լրացուցիչ 40,000 եվրո՝ ոչ նյութական վնասի դիմաց՝ կապված երկրորդ դիմումատուի մահվան հետ (տե՛ս վերևում 125-րդ պարբերությունը):

319. Կառավարությունը նյութական վնասի վերաբերյալ պահանջները համարել է չհիմնավորված և չափազանցված: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, Կառավարությունը մատնանշել է, որ երկրորդ դիմումատուի մահվանից բխող ցանկացած այդպիսի վնաս որևէ առնչություն չունի Կոնվենցիայի որևէ խախտման հետ:

## 2. Դատարանի գնահատականը

### ա) Նյութական վնասը

320. Այնքանով, որքանով դիմումատուները պահանջել են իրենց հափշտակված գույքի արժեքի հատուցումը, Դատարանը, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում հայտնաբերելով, նկատում է, որ ազգային դատարանները, քննելով դիմումատուների դեմ հարուցված բռնազանձման հայցերը, չեն հաստատել այն ենթադրյալ անօրինական արարքը, որը հանգեցրել է բռնազանձման ենթակա ակտիվների ձեռքբերմանը, ինչպես նաև չեն հաստատել որևէ պատճառահետևանքային կապ այդ ակտիվների ու քննարկվող անօրինական արարքի միջև (տե՛ս վերևում 221-222-րդ, 230-232-րդ, 237-238-րդ և 246-248-րդ պարբերությունները):

321. Քանի որ այս հարցերի շուրջ վերլուծությունը չի կատարվել ներպետական մակարդակում, Դատարանը չի կարող պարզել՝ արդյո՞ք դիմումատուներից բռնազանձված ակտիվները համարվել են հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ և ի՞նչ սահմաններում, կամ արդյո՞ք վարույթի հավանական ելքի առնչությամբ պահպանվել են Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջները: Ուստի, Դատարանը չի կարող ճիշտ գնահատել դիմումատուների կրած ցանկացած վնաս՝ չհիմնավորված բռնազանձման մասով: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ հայտնաբերված խախտման բնույթի լույսի ներքո, ներպետական վարույթի վերսկսումը և հարցի վերաքննությունն ազգային մակարդակում սկզբունքորեն համարվում է խախտումը հատուցելու՝ պաշտպանության պատշաճ միջոց (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) *Գերեկսարն ու մյուսներն ընդդեմ Թուրքիայի* [*Gereksar and Others v. Turkey*] գործը, թիվ 34764/05 և մյուս 3 երեք գործերը, § 75, 2011թ. փետրվարի 1, *Կրավչուկն ընդդեմ Ռուսաստանի* [*Kravchuk v. Russia*] գործը, թիվ 10899/12, §§ 55-56, 2019թ. նոյեմբերի 26, *Կոստովն ու մյուսներն ընդդեմ Բուլղարիայի* [*Kostov and Others v. Bulgaria*] գործը, թիվ 66581/12 և թիվ 25054/15, § 105, 2020թ. մայիսի 14):

322. Ներպետական օրենսդրությամբ նախատեսվում է վարույթը վերսկսելու հնարավորություն՝ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 303(1)(7)-ին համապատասխան, որը կիրառելի է 2005թ. Օրենքով նախատեսված վարույթի նկատմամբ, և որի համաձայն շահագրգիռ կողմը կարող է պահանջել քաղաքացիական վարույթի վերսկսում այնպիսի գործում, որում «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով հաստատվել է [Կոնվենցիայի] խախտում», և «պահանջվում է գործի նոր քննություն՝ խախտման հետևանքները վերացնելու համար» (տե՛ս վերևում 102-րդ և 114-րդ

պարբերությունները): Տվյալ դեպքում դիմումատուների հայեցողությունն է օգտվել այդ հնարավորությունից: Նրանց գործերը վերաքննության ենթակա լինելու դեպքում, ներպետական դատարանները սկզբունքորեն պարտավոր են կիրառել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, ինչպես մեկնաբանվել է Դատարանի կողմից (տե՛ս վերևում հիշատակված *Կոստովն ու մյուսները* գործը, § 104):

323. Ի վերջո, այնքանով, որքանով որոշ դիմումատուներ պահանջել են բռնագանձման հետ կապված լրացուցիչ այնպիսի վնասների հատուցում, ինչպիսիք են, օրինակ՝ բռնագանձված ակտիվների արժեքի վրա հաշվեգրված տոկոսները (տե՛ս վերևում 312-րդ և 316-րդ պարբերությունները) կամ նրանց ընտանիքի տան կորստից հետո վճարված վարձակալության վճարը (տե՛ս վերևում 318-րդ պարբերությունը), Դատարանը վկայակոչում է 2005թ. Օրենքով նախատեսված ոչ իրավաչափ գործողությունների ու անգործության համար պետության պատասխանատվության վերաբերյալ ներպետական դրույթները (տե՛ս վերևում 103-րդ պարբերությունը): Դիմումատուների դեմ հարուցված բռնագանձման վարույթն ի վերջո ամբողջությամբ կամ մասնակիորեն կարճվելու դեպքում դիմումատուներն իրենց տրամադրության տակ ունեն հատուցում պահանջելու պատշաճ ուղիներ (տե՛ս՝ նման պաշտպանության միջոցի վերլուծության մասով, *Նեդյալկովը և մյուսներն ընդդեմ Քուլդարիայի [Nedyalkov and Others v. Bulgaria]* գործը (որոշում), թիվ 663/11, §§ 91-102, 2013թ. սեպտեմբերի 10):

324. Համապատասխանաբար, Դատարանը մերժում է նյութական վնասի հատուցման պահանջները:

### բ) Ոչ նյութական վնասը

325. Ինչ վերաբերում է *Ժեկովների* գործին (գանգատ թիվ 71694/12), ապա Դատարանը համաձայնում է Կառավարության փաստարկի հետ (տե՛ս վերևում 319-րդ պարբերությունը) այն մասին, որ չի կարող հաստատվել ուղղակի պատճառահետևանքային կապ երկրորդ դիմումատուի մահվան ու իր կողմից հայտնաբերված խախտման միջև, որը վերաբերում է դիմումատուների գույքի բռնագանձմանը: Համապատասխանաբար, Դատարանը մերժում է այս գործում ոչ նյութական վնասի հատուցման պահանջը (տե՛ս վերևում 318-րդ պարբերությունը):

326. Ինչ վերաբերում է մնացած գործերին, ապա Դատարանն այն կարծիքին է, որ դիմումատուները կրել են ոչ նյութական վնաս իրենց ակտիվների այնպիսի բռնագանձման հիմքով, որի իրականացման եղանակը քննադատվել է Դատարանի կողմից ու համարվել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:



1. Որոշում կայացնելով արդարության սկզբունքի հիմքով՝ Դատարանը նրանց շնորհում է հետևյալ գումարները.

-4,000-ական եվրո՝ պրն Վալերի Իլիև Տոդորովին, տկն Վերա Իլիևա Տոդորովային (գանգատ թիվ 50705/11), տկն Ժիվկա Դիմիտրովա Գայչին և տկն Ջորիցա Միրոյուբովա Գայչին (գանգատ թիվ 11340/12),

-3,000 եվրո՝ պրն Պետար Միլկով Բարովին (գանգատ թիվ 26221/12),

-2,000-ական եվրո՝ պրն Իյա Իվանով Տոդորովին և տկն Գայյա Յվետանովա Իվանովային (գանգատ թիվ 50705/11):

## **Բ. Ծախքերը և ծախսերը**

### **1. Գանգատ թիվ 50705/11 (Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի)**

327. Դիմումատուները պահանջել են 68,255,2 բուլղարական լև, որը համարժեք է 34,898 եվրոյին, այն ծախքերի ու ծախսերի դիմաց, որոնք նրանք կրել են ներպետական դատարաններում 2005թ. Օրենքով նախատեսված վարույթի շրջանակներում: Ի հիմնավորումն այդ պահանջի՝ նրանք ներկայացրել են Եկամուտների ազգային գործակալության կողմից 2014թ. ներկայացված երկու տեղեկանքներ, որոնցում մատնանշված են տարբեր գումարներ, որոնք ենթակա են վճարման առաջին ու երկրորդ դիմումատուների կողմից՝ դատական ծախսերի առնչությամբ:

328. Դիմումատուները նաև պահանջել են 9,387,98 բուլղարական լև (4,800 եվրո)՝ Դատարանում իրենց ներկայացրած ներկայացուցիչների կողմից գանձված իրավաբանական ծախսերի դիմաց՝ ներկայացնելով իրավական ներկայացուցչության վերաբերյալ կնքված պայմանագիր ու հաշիվ-ապրանքագիր: Նրանք նաև պահանջել են 1,000 բուլղարական լև (511 եվրո) գումար, որն իրենց կողմից վճարվել է իրենց բռնագանձված ակտիվների փորձագիտական գնահատման համար՝ ներկայացնելով փորձագետի հետ կնքված պայմանագիր:

329. Ի վերջո, դիմումատուները պահանջել են 262 եվրո՝ թարգմանության, փոստային ու գրասենյակային ծախսերի դիմաց: Ի հիմնավորումն այդ պահանջի՝ նրանք ներկայացրել են թարգմանության ծախսերի ստացական ու փոստային ծախսերի հաշիվ-ապրանքագիր, որոնցում որպես վճարման ենթակա ընդհանուր գումար մատնանշված է 237 եվրոյին համարժեք գումար: Դիմումատուները պահանջել են, որ այս պարբերության մեջ նկարագրված ծախսերը ծածկելու համար նախատեսված ցանկացած հատուցում վճարվի

անմիջականորեն իրենց իրավական ներկայացուցիչների իրավաբանական ընկերություններին:

330. Կառավարությունը վիճարկել է տվյալ պահանջները:

331. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախքերի ու ծախսերի փոխհատուցման իրավունք միայն այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ, և որ դրանց չափը եղել է ողջամիտ:

332. Ինչ վերաբերում է ներպետական վարույթի վերաբերյալ պահանջին, մասնավորապես՝ դատական ծախսերի առնչությամբ ներկայացված փաստաթղթերի մասով (տե՛ս վերևում 327-րդ պարբերությունը), ապա Դատարանը չի հավաստիանում, որ դիմումատուներն իրականում վճարել են պահանջվող գումարի որևէ մաս, կամ որ գումարը դեռևս ենթակա է վճարման: Համապատասխանաբար, Դատարանը մերժում է տվյալ պահանջը:

333. Ինչ վերաբերում է Դատարանում անցկացված վարույթի համար կրած ծախքերին ու ծախսերին, ապա դիմումատուները հիմնավորել են, որ դրանք կազմում են ընդհանուր 5,548 եվրո (տե՛ս վերևում 328-329-րդ պարբերությունները): Դատարանն այն կարծիքին է, որ այս ծախսերն իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ, և որ դրանց չափը եղել է ողջամիտ, մասնավորապես՝ պայմանավորված գործի բարդությամբ: Հետևաբար, Դատարանը շնորհում է այդ գումարը: Դիմումատուների պահանջի համաձայն՝ դրանից 237 եվրոն պետք է վճարմամբ փոխանցվի անմիջականորեն նրանց իրավական ներկայացուցիչների իրավաբանական ընկերությունների բանկային հաշիվներին (տե՛ս համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*) *Խլայֆիան և մյուսներն ընդդեմ Իտալիայի* [*Khlaifia and Others v. Italy*] [ՄՊ] գործը, թիվ 16483/12, § 288, ՄԻԵԴ, 2016թ. (քաղվածքներ):

## 2. Գանգատ թիվ 11340/12 (Գայն ընդդեմ Բուլղարիայի)

334. Դիմումատուները պահանջել են 1,000 եվրո՝ Դատարանում իրենց կրած՝ իրավական ներկայացուցչության ծախսերի դիմաց: Ի հիմնավորումն այդ պահանջի՝ նրանք ներկայացրել են 2019թ. սեպտեմբերի 13-ի ամսաթվով թվագրված՝ իրավական ներկայացուցչության վերաբերյալ պայմանագիր, որով մատնանշվում է, որ ներկայացուցիչների համար նախատեսված վճարները ենթակա են «վճարման պետության կողմից»:

335. Դիմումատուները նաև պահանջել են 2,000 բուլղարական լև (1,020 եվրո), որն իրենց կողմից վճարվել է իրենց փաստարկների ու Դատարան ներկայացված փաստաթղթերի

թարգմանության համար: Ի հիմնավորումն այդ պահանջի՝ նրանք ներկայացրել են համապատասխան հաշիվ-ապրանքագիր:

336. Կառավարությունը վիճարկել է տվյալ պահանջները: Մասնավորապես, դիմումատուների կողմից թարգմանության համար վճարված գումարի մասով Կառավարությունը յուրաքանչյուր էջի թարգմանության գինը համարել է չափազանց բարձր և վիճարկելով նշել է, որ Դատարանում անցկացված վարույթի շրջանակներում դիմումատուները պարտավորված չեն եղել ներկայացնելու փաստաթղթերի թարգմանությունները:

337. Դիմումատուն ունի ծախսերի ու ծախսերի փոխհատուցման իրավունք միայն այն դեպքում, երբ դրանք իրականում կատարվել են: Ներկայացուցչի ծախսերը համարվում են իրականում կատարված, եթե դիմումատուն դրանք վճարել է կամ ունի դրանք վճարելու պարտավորություն (տե՛ս, վերջերս քննված գործում՝ *Մերաբիշվիլին ընդդեմ Վրաստանի* [*Merabishvili v. Georgia*] [ՄՊ] գործը, թիվ 72508/13, § 371, 2017թ. նոյեմբերի 28): Ներկա գործում դիմումատուները չեն ներկայացրել այնպիսի փաստաթղթեր, որոնք կվկայեին, որ իրենք վճարել են ներկայացուցչի ծախսերից որևէ մեկը կամ ունեն դա վճարելու իրավական պարտավորություն: Համապատասխանաբար, Դատարանը չի կարող եզրակացնել, որ այդ ծախսերը իրականում կատարվել են դիմումատուների կողմից, և այդ առնչությամբ մերժում է նրանց պահանջը:

338. Ինչ վերաբերում է թարգմանության ծախսերին, ապա Դատարանը հաշվի է առնում Կառավարության առարկությունները (տե՛ս վերևում 336-րդ պարբերությունը): Դատարանը նկատում է, որ իր Կանոնակարգի 34-րդ կանոնի 3-րդ կետի «ա» ենթակետով պահանջվում է, որ դիմումատուների գրավոր փաստարկները ներկայացվեն իր պաշտոնական լեզուներից որևէ մեկով, սակայն միևնույն պահանջը չի նախատեսվում դիմումը հիմնավորելու համար ներկայացվող փաստաթղթերի մասով: Համապատասխանաբար, քննության առարկա ծախսերը անհրաժեշտ են եղել միայն մասամբ: Ինչ վերաբերում է կատարված ծախսերի չափին, գործի փաստական հանգամանքների տեսանկյունից, Դատարանը ողջամիտ է համարում դիմումատուներին շնորհել 300 եվրո այս կետի շրջանակներում:

### 3. Գանգատ թիվ 26221/12 (*Բարովն ընդդեմ Բուլղարիայի*)

339. Դիմումատուն պահանջել է, որ իր իրավական ներկայացուցչին վերջինիս աշխատանքի դիմաց շնորհվի պատշաճ հատուցում՝ այնուամենայնիվ մատնանշելով, որ այդ ներկայացուցիչն աշխատել է «անվճար հիմունքներով»: Նա այնուհետև պահանջել է 127.2

բուլղարական լևի (65 եվրո) չափով փոխհատուցում՝ փոստային ու թարգմանության ծախսերի դիմաց՝ ներկայացնելով համապատասխան ստացականներ:

340. Կառավարությունը վիճարկել է տվյալ պահանջները:

341. Ինչպես *Գայջի* գործում (տե՛ս վերևում 337-րդ պարբերությունը), Դատարանը չի համարում, որ դիմումատուի կողմից պահանջված իրավական ներկայացուցչության ծախսերն իրականում կատարվել են նրա կողմից. նա իր ներկայացուցչին չի վճարել որևէ վճար, ու չի կարող համարվել, որ այդ առնչությամբ ունի համապատասխան պարտավորություն: Ուստի, Դատարանը մերժում է պահանջի այս մասը:

342. Մյուս կողմից, Դատարանը դիմումատուին շնորհում է 65 եվրո, որը պահանջվել էր փոստային ու թարգմանության ծախսերի դիմաց՝ նշելով, որ այս ծախսերն իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ, և որ դրանց չափը եղել է ողջամիտ:

#### 4. Գանգատ թիվ 71694/12 (*Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի*)

343. Առաջին ու երրորդ դիմումատուներն ու երկրորդ դիմումատուի ժառանգները պահանջել են 41,754 բուլղարական լևի (21,350 եվրո) չափով փոխհատուցում այն ծախսերի ու ծախսերի դիմաց, որոնք նրանք կրել են 2005թ. Օրենքով նախատեսված ներպետական վարույթում, ինչպես նա լրացուցիչ 3,000 բուլղարական լև (1,530 եվրո)՝ Դատարանում անցկացված վարույթում իրենց կատարած ծախսերի դիմաց:

344. Կառավարությունը մատնանշել է, որ վերևում հիշատակված պահանջները որևէ փաստաթղթով չեն հիմնավորվել: Մասնավորապես, ցանկացած այնպիսի դատական ծախսի մասով, որը դիմումատուն պարտավորեցվել է վճարել ներպետական վարույթում, Կառավարությունը ներկայացրել է Եկամուտների ազգային գործակալության կողմից տրված և 2019թ. դեկտեմբերի 12-ով թվագրված գրություն՝ պարզաբանելով, որ թեև դիմումատուների դեմ հարուցվել է կատարողական վարույթ, այնուամենայնիվ որևէ վճարում չի կատարվել:

345. Դատարանի կանոնակարգի 60-րդ կանոնի 2-րդ կետով սահմանվում է, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի շրջանակներում ցանկացած պահանջ պետք է ներկայացվի համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հետ միասին, ինչը չկատարելու դեպքում Դատարանը կարող է մերժել պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն (տե՛ս 60-րդ կանոնի 3-րդ կետը): Ներկա գործում առաջին ու երրորդ դիմումատուները, ինչպես նաև երկրորդ դիմումատուի ժառանգները որևէ հիմնավորող փաստաթուղթ չեն ներկայացրել: Դատարանը նաև հաշվի է առնում Կառավարության ներկայացրած՝ Եկամուտների ազգային գործակալության գրությունը՝ պարզաբանելով, որ դիմումատուները (համապատասխանաբար՝ երկրորդ դիմումատուի ժառանգները) չեն վճարել որևէ այնպիսի

դատական ծախս, որը նրանց պարտավորեցրել են վճարել. որևէ այլ փաստաթղթի բացակայության պայմաններում Դատարանը չի կարող նաև եզրակացնել, որ նման գումարներից որևէ մեկը դեռևս ենթակա է վճարման:

346. Համապատասխանաբար, Դատարանը մերժում է առաջին ու երրորդ դիմումատուների և երկրորդ դիմումատուի ժառանգների կողմից ներկայացված պահանջները:

#### Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

347. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

#### ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Որոշում է միացնել գանգատների քննությունը:

2. Գտնում է, որ տկն Էմիլյա Ռուսևա Ժեկովայի ժառանգները (պրն Ժիվկո Ժեկով Ժեկով, պրն Իվայր Ժիվկով Ժեկով և պրն Ժեկո Ժիվկով Ժեկով) իրավունք ունեն նրա փոխարեն հետամուտ լինելու գործի քննությանը:

3. Հայտարարում է՝ Կոնվենցիային կից Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում բերված բողոքներն ընդունելի, իսկ թիվ 17238/16 (Կացարովն ընդդեմ Բուլղարիայի [Katsarov v. Bulgaria]) և թիվ 63214/16 (Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի [Dimitrov v. Bulgaria]) գործերով բողոքների մնացած մասը՝ անընդունելի:

4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիային կից Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում թիվ 50705/11 (Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի [Todorov and Others v. Bulgaria]), թիվ 11340/12 (Գայչն ընդդեմ Բուլղարիայի [Gaich v. Bulgaria]), թիվ 26221/12 (Բարովն ընդդեմ Բուլղարիայի [Barov v. Bulgaria]) և թիվ 71694/12 (Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի [Zhekovi v. Bulgaria]) գործերով:

5. Վճռում է, որ տեղի չի ունեցել Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում թիվ 44845/15 (Ռուսևն ընդդեմ Բուլղարիայի [Rusev v. Bulgaria]), թիվ 17238/16 (Կացարովն ընդդեմ Բուլղարիայի [Katsarov v. Bulgaria]) և թիվ 63214/16 (Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի [Dimitrov v. Bulgaria]) գործերով:

6. Վճռում է, որ առկա չէ՝ թիվ 50705/11 (*Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի [Todorov and Others v. Bulgaria]*), թիվ 11340/12 (*Գայչն ընդդեմ Բուլղարիայի [Gaich v. Bulgaria]*) և թիվ 71694/12 (*Շեկովներն ընդդեմ Բուլղարիայի [Zhekovi v. Bulgaria]*) գործերի շրջանակներում մնացած բողոքների ընդունելիության հարցը քննարկելու և ըստ էության քննելու անհրաժեշտություն:

7. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն բուլղարական լևով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով՝

i) ոչ նյութական վնասի դիմաց՝

-4,000-ական եվրո (չորսհազարական եվրո)՝ պրն Վալերի Իլիև Տոդորովին և տկն Վերա Իլիևա Տոդորովային, ինչպես նաև 2,000-ական եվրո (երկուհազարական եվրո)՝ պրն Իլյա Իվանով Տոդորովին և տկն Գալյա Յվետանովա Իվանովային՝ թիվ 50705/11 (*Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի [Todorov and Others v. Bulgaria]*) գործով՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

-4,000-ական եվրո (չորսհազարական եվրո)՝ թիվ 11340/12 (*Գայչն ընդդեմ Բուլղարիայի [Gaich v. Bulgaria]*) գործով երկու դիմումատուներին՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

-3,000 եվրո (երեք հազար եվրո)՝ թիվ 26221/12 (*Բարովն ընդդեմ Բուլղարիայի [Barov v. Bulgaria]*) գործով դիմումատուին՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

ii) ծախսերի և ծախքերի դիմաց՝

-5,548 եվրո (հինգ հազար հինգ հարյուր քառասունութ եվրո)՝ թիվ 50705/11 (*Տոդորովը և մյուսներն ընդդեմ Բուլղարիայի [Todorov and Others v. Bulgaria]*) գործով դիմումատուներին համատեղ՝ գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ, որից 237 եվրոն (երկու հարյուր երեսունյոթ եվրո) պետք է վճարմամբ փոխանցվի նրանց ներկայացուցիչների իրավաբանական ընկերությունների բանկային հաշիվներին.

-300 եվրո (երեք հարյուր եվրո)՝ թիվ 11340/12 (*Գայչն ընդդեմ Բուլղարիայի [Gaich v. Bulgaria]*) գործով դիմումատուներին համատեղ՝ գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ.

-65 եվրո (վաթսունհինգ եվրո)՝ թիվ 26221/12 (*Բարովն ընդդեմ Բուլղարիայի [Baron v. Bulgaria]*) գործով դիմումատուին՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

8. *Մերժում է՝* արդարացի փոխհատուցման պահանջների մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր ծանուցվել է 2021 թվականի հուլիսի 13-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Իլգե Ֆրեյվիրտ՝ Քարտուղարի տեղակալ

Թիմ Այքը՝ Նախագահ

**ՀԱՎԵԼՎԱԾ**  
**Գործերի ցանկը**

Թիվ	Գործի համարը և գործի անվանումը	Ներկայացնելու ամսաթիվը	Դիմումատուի ծննդյան տարին և բնակության վայրը	Դիմումատուի ներկայացուցիչը  Ներկայացուցչի գործունեության իրականացման վայրը
1.	50705/11 <b>Տողորովն ու մյուսներն ընդդեմ Բուլղարիայի</b>	02/08/2011թ.	<p><b>Պրն Վալերի Իլիև</b> <b>ՏՈԴՈՐՈՎ</b></p> <p>1972թ. Վրացա</p> <p><b>Տկն Վերա Իլիևա</b> <b>ՏՈԴՈՐՈՎԱ</b></p> <p>1969թ. Վրացա</p> <p><b>Պրն Իլյա Իվանով</b> <b>ՏՈԴՈՐՈՎ</b></p> <p>1950թ. Րուսկա Բելա</p>	<p>Պրն Մ. Եկիմջիև Տկն Կ. Բոնչևա Տկն Ս. Ստեֆանովա</p> <p>Պլովդիվ</p>



Թիվ	Գործի համարը և գործի անվանումը	Ներկայացնելու ամսաթիվը	Դիմումատուի ծննդյան տարին և բնակության վայրը	Դիմումատուի ներկայացուցիչը  Ներկայացուցչի գործունեության իրականացման վայրը
			<p><b>Տկն Գալյա Ցվետանովա ԻՎԱՆՈՎԱ</b></p> <p>1953թ. Վրացա</p>	
2.	<p>11340/12 <b>Գայձն ընդդեմ Բուլղարիայի</b></p>	16/02/2012թ.	<p><b>Տկն Ժիվկա Դիմիտրովա ԳԱՅՁ</b></p> <p>1968թ. Դոբրիչ</p> <p><b>Տկն Զորիցա Միրոյլուբովա ԳԱՅՁ</b></p> <p>1992թ. Դոբրիչ</p>	<p>Տկն Մ. Տոդորովա</p> <p>Դոբրիչ</p>

Թիվ	Գործի համարը և գործի անվանումը	Ներկայացնելու ամսաթիվը	Դիմումատուի ծննդյան տարին և բնակության վայրը	Դիմումատուի ներկայացուցիչը  Ներկայացուցչի գործունեության իրականացման վայրը
3.	26221/12  <b>Բարովն ընդդեմ Բուլղարիայի</b>	20/04/2012թ.	<b>Պրն Պետար Միլկով ԲԱՐՈՎ</b>  1969թ. Գաբրովո	Պրն Յ. Յորդանով Վելիկո Տարնովո
4.	71694/12  <b>Ժեկովներն ընդդեմ Բուլղարիայի</b>	03/11/2012թ.	<b>Պրն Ժիվկո Ժեկով ԺԵԿՈՎ</b>  1966թ. Պլովդիվ  <b>Տկն Էմիլյա Ռուսևա ԺԵԿՈՎԱ</b>  1971թ.  Մահացել է՝ 20/07/2018թ.	Պրն Դ. Կալինչև  Պլովդիվ

Թիվ	Գործի համարը և գործի անվանումը	Ներկայացնելու ամսաթիվը	Դիմումատուի ծննդյան տարին և բնակության վայրը	Դիմումատուի ներկայացուցիչը  Ներկայացուցչի գործունեության իրականացման վայրը
			<p>Ժառանգները՝</p> <p>Ժիվկո Ժեկո Ժեկո, Իվայլո Ժիվկո Ժեկո , Ժեկո Ժիվկո Ժեկո</p> <p><b>Պրն Ժեկո Ժիվկո Ժեկո</b></p> <p>1991թ. Աթենք</p>	
5.	44845/15 <b>Ռուսեն ընդդեմ Բուլղարիայի</b>	04/09/2015թ.	<p><b>Պրն Յուլիան Վասիլև ՌՈՒՍԵՎ</b></p> <p>1974թ.</p>	<p>Պրն Յ. Իգնատով</p> <p>Տարգովիշտե</p>

Թիվ	Գործի համարը և գործի անվանումը	Ներկայացնելու ամսաթիվը	Դիմումատուի ծննդյան տարին և բնակության վայրը	Դիմումատուի ներկայացուցիչը  Ներկայացուցչի գործունեության իրականացման վայրը
			Իզվորովո	
6.	17238/16  <b>Կացարովն ընդդեմ Բուլղարիայի</b>	23/03/2016թ.	<b>Պրն Կիրիլ Հրիստով ԿԱՅԱՐՈՎ</b>  1972թ.  Կոստենեց	Պրն Մ. Եկիմչիև Տկն Ս. Ստեֆանովա  Պլովդիվ
7.	63214/16  <b>Դիմիտրովն ընդդեմ Բուլղարիայի</b>	21/10/2016թ.	<b>Պրն Դիմիտար Գենչև ԴԻՄԻՏՐՈՎ</b>  1976թ.  Պրովադիա	Պրն Ի. Իվանով  Վառնա

---

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**